


**ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ
(ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ)**

**ԵՐԵՎԱՆ
2019**



Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N19996: Չեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

Ծրագրի ղեկավար՝ Արմենուհի Բուռնազյան

Ուսումնասիրության հեղինակ՝ Արմեն Զթոյան



Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ

www.policyobserver.am

www.facebook.com/PolicyObserver/

Բովանդակություն

Հապավումների ցանկ	5
ՆԱԽԱԲԱՆ	6
1. Կրթության ոլորտը Հայաստանում	8
1.1. Կրթական ծառայությունները	8
1.2. Կրթության ոլորտում տնային տնտեսությունների ծախսերը	9
1.3. Նախադպրոցական կրթությունը Հայաստանում	14
1.4. Հանրակրթությունը Հայաստանում.....	24
2. Հայաստանյան կրթության և գիտության մրցունակությունը	42
2.1. Կրթության մրցունակությունը.....	42
2.2. Գիտության և հետազոտությունների մրցունակությունը	49
3. Կրթության և գիտության բյուջետային ֆինանսավորումը Հայաստանում	64
3.1. Կրթության բյուջետային ֆինանսավորումը	64
3.2. Գիտության բյուջետային ֆինանսավորումը	67
3.3. Կրթության ֆինանսավորումը և ակնկալվող արդյունքները միջնաժամկետ հատվածում (2020-2022թթ.).....	69
3.4. Կրթության և գիտության բյուջետային ծախսերի դիտարկումը՝ 2020թ. պետական բյուջեի նախագծի համապատկերում.....	74
4.Արդյունավետության չափորոշիչները կրթության ոլորտում	78
4.1. Ընդհանուր նկատառումներ.....	78
4.2. Հանրակրթության ոլորտի արդյունավետության չափորոշիչների առաջարկվող համակարգը	82
4.3. Արդյունքային չափորոշիչների կիրառությունը ՀՀ բյուջետային գործընթացում.....	82
4.4. Բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատումը կլաստերային և գործոնային վերլուծության մեթոդներով.....	83
5. Կրթության և գիտության ֆինանսավորման ծրագրային միջոցառումների դիտարկումը (2019թ. առաջին կիսամյակի օրինակով)	92
5.1. Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ծրագիր	92
5.2. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր	96
5.3. Կրթության և գիտության բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ ծրագիր	99
5.4. Հանրակրթության ծրագիր	100
5.6. Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	112
5.7. Ապահով դպրոց ծրագիր	117
5.8. Կրթության որակի ապահովում ծրագիր	120
5.9. Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում ծրագիր	128
5.10. Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում	129

Ամփոփիչ դիտարկումներ.....	130
Առաջարկություններ. Հանրակրթության ոլորտի արդյունավետության չափորոշիչների համակարգ.....	131

Հապավումների ցանկ

ԲՈԼՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԳՀ	Գնողունակության համարժեքություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԿԱԵ	Կենտրոնական և Արևելյան Եվրոպա
ԿԲԾ	«Կրթության բարելավում» վարկային ծրագիր
ԿՏԱԿ	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՀԿԿ	Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե
ՀոԼՄ	հետազոտություններ ու մշակումներ
ՄՄՈՒՀ	միջին մասնագիտական ուսումնական հաստատություն
ՆԴՀ	Նախադպրոցական հաստատություն
ՆՄՄԿ	Նախնական և միջին մասնագիտական կրթություն
ՆՄՈՒՀ	Նախնական մասնագիտության ուսումնական հաստատություն
ՊՄԺԾԾ	Պետական միջնաժամկետ ծախսային ծրագիր
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՏՏ	Տնային տնտեսություն

ՆԱԽԱԲԱՆ

Հաշվետվությունում ամփոփված են ՀՀ-ում կրթության ոլորտի ընդհանուր նկարագրությունը՝ հիմնվելով պաշտոնական վիճակագրության աղբյուրներում պարունակվող տեղեկատվության վրա, հանրապետությունում պետական բյուջեից կրթության ֆինանսավորման ներկա պատկերն ու փոփոխման միտումները, նաև՝ ընդհանուր գծերով նկարագրված են ՀՀ-ում կրթության բյուջետային ֆինանսավորման արդյունավետության գնահատման գործընթացն ու սկզբունքները, մեթոդաբանության հիմնադրույթները, որոնցով նպատակահարմար է կատարել ՀՀ-ում կրթության բյուջետային ֆինանսավորման արդյունավետության համալիր գնահատում:

Հաշվետվությունը ներառում է ՀՀ-ում կրթության և գիտության ոլորտների ընդհանուր վիճակագրական վերլուծությունը՝ նաև գլոբալ մրցունակության համատեքստում, բյուջետային միջոցառումների դիտարկումը:

Հաշվետվության կարևոր բաղադրիչ է հանրակրթության բյուջետային արդյունավետության ցուցիչների համակարգը, որը մշակվել է՝ հիմնվելով ոլորտում առկա օրինակելի փորձի վրա: Կատարվել է նաև կրթության ոլորտում արդյունքի և արդյունավետության ազդեցացված գնահատում:

Հետազոտության մեթոդաբանությունը և տեղեկատվության աղբյուրները

Հետազոտության մեթոդաբանական հենքը կազմում են կրթության արդյունավետության նկարագրության և գնահատման՝ միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող մեթոդները, սկզբունքներն ու կատեգորիաները: Մեթոդների շարքում դիտարկվել են արդյունավետության քանակական և որակական գնահատման մեթոդները, հաշվարկներում և վերլուծություններում օգտագործվել են կլաստերային և գործոնային վերլուծության մեթոդները, որոնք թույլ են տվել կատարել երկրների խմբավորում՝ ըստ կրթության ոլորտում բյուջետային ծախսերի մոդելի, արդյունավետության նպատակադրման թիրախայնության, նաև՝ արդյունքային չափորոշիչի գնահատում:


Կատարված հաշվարկներում և ուսումնասիրություններում օգտագործվել են ՀՀ կառավարության, ՀՀ վիճակագրական կոմիտեի, ֆինանսների նախարարության, այլ երկրների պետական վիճակագրության մարմինների և ֆինանսների նախարարությունների հրապարակումները, Համաշխարհային բանկի

համաշխարհային զարգացման ցուցիչները (World Development Indicators), UNESCO-ի կրթության ոլորտին առնչվող վիճակագրական հրապարակումները, Համաշխարհային տնտեսական ֆորումի Գլոբալ մրցունակության զեկույցները, հայաստանյան և արտասահմանյան կազմակերպությունների ու փորձագետների՝ կրթության ոլորտում կատարված առանձին հետազոտությունները և հրապարակված զեկույցները, մասնավորապես՝ դրանցում օգտագործված առանձին տվյալներ ու ստացված գնահատականներ:

1. Կրթության ոլորտը Հայաստանում.

1.1. Կրթական ծառայությունները

2018թ. ՀՀ-ում մատուցված կրթական ծառայությունների ընդհանուր ծավալը¹ կազմել է 54.3 մլրդ դրամ: 2003թ.-ից ի վեր այս ցուցանիշն անշեղորեն աճում է: Սակայն ծառայությունների ընդհանուր ծավալում կրթական ծառայությունների մասնաբաժինը բավականին ցածր է՝ ընդամենը 3.1%, ընդ որում՝ նույն ժամանակահատվածում այն նվազման ընդգծված միտումներ է ցուցաբերում (գծ. 1. 1):




Գծ.1.1. Կրթական ծառայությունների ծավալը ՀՀ-ում²

Կրթական ծառայությունների ոլորտը աչքի է ընկնում տարածքային անհամաչափության խիստ բարձր և տարեցտարի ավելի աճող մակարդակով: Երևանի մասնաբաժինը կրթական ծառայությունների կառուցվածքում 87% է,

¹ Ներառում է կրթական ծառայությունների հետևյալ բաղադրիչները. նախադպրոցական, տարրական, միջնակարգ, նախնական, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական, այլ կրթություն՝ մարմնամարզության, սպորտի, մշակույթի բնագավառում, հաշվապահական, օտար լեզուների, համակարգչային և այլ դասընթացներ:

² Նույն բաժնում գծանկարների և աղյուսակների տվյալները աղբյուրները ՀՀՎԿ հրապարակումներն են (համապատասխան տարիների Հայաստանի վիճակագրական տարեգրքերը, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը ամսական զեկույցները, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը տարեկան հրապարակումները), ՀՀ պետական բյուջեի մասին օրենքները և բյուջետային բացատրագրերը:

մինչդեռ բոլոր տեսակի ծառայությունների ընդհանուր ծավալում մայրաքաղաքի մասնաբաժինը ավելի փոքր է՝ 81.8% (գծ. 1.2): Ավելին, կրթական ծառայությունների ոլորտում Երևանի մասնաբաժինը 2015-ից աճի միտում է ցուցաբերում: Սա նշանակում է, որ կրթության մասով տարածքային համաչափ զարգացման քաղաքականության ուղենիշերը շարունակում են մնալ չիրագործված:




Գծ. 1.2. Երևանի մասնաբաժինը ծառայությունների հատվածում

1.2. Կրթության ոլորտում տնային տնտեսությունների ծախսերը


Տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքում կրթական ծախսերի մասնաբաժինը 2018թ. հետազոտության արդյունքներով կազմել է 2.4%՝ նույնքան, որքան դրան նախորդող տարում, սակայն շատ ավելի պակաս, քան նախաճգնաժամային տարիներին (գծ. 1.3):

Ընդ որում, 2008-2018թթ. ընթացքում տնային տնտեսությունների ծախսերը՝ կրթության ոլորտում, գրեթե չեն փոխվել՝ մեկ չափահաս անձի հաշվով 1646 դրամից աճել են ընդամենը 37 դրամով և 2018-ին կազմել են 1683 դրամ, այն դեպքում, երբ տնային տնտեսությունների՝ մեկ չափահաս անձի հաշվով միջին ամսական ծախսերը աճել են 61 տոկոսով և կազմել են շուրջ 69 հազար դրամ:



Գծ. 1.3. Կրթական ծախսերը սպառողական ծախսերի կառուցվածքում³

Բնակչության ամենաաղքատ քվանտիլային խմբում տնային տնտեսության մեկ չափահաս անձի հաշվով կրթության ծախսը 2008թ. համեմատության գրեթե չի փոխվել և գտնվում է խիստ ցածր մակարդակի վրա (147 դրամ): 2-4-րդ քվանտիլային խմբերում կրթական ծախսերի նվազում է արձանագրվել: Եվ միայն ամենահարուստ քվանտիլի պարագայում է զգալի աճ դիտվում. 2018-ին՝ 7.3 հազար դրամ կամ 2008թ. մակարդակից 3.2 հազար դրամով ավելի (գծ. 1.4):



Գծ. 1.4. Կրթության ծախսերը ըստ SS քվանտիլային խմբերի, դրամ, ամսական, մեկ չափահաս անձի հաշվով⁴


Ամենաաղքատ քվանտիլի միջին ամսական ծախսը մեկ չափահաս անձի հաշվով 2018թ. կազմել է 33.9 հազար դրամ, 2008-ին՝ 22.8 հազար դրամ: Ամենահարուստ 5-րդ քվանտիլի պարագայում՝ 2017-ին 138.0 հազար դրամ, 2008-

³Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2018, Աղյուսակ A3.9, էջ237:

⁴ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2018, Աղյուսակ A3.9:

ին՝ 74.8 հազար դրամ: 5-րդ քվանտիլում ներառված տնային տնտեսությունները կրթական ծախսերին ուղղում են ընդհանուր ծախսերի 5.3 տոկոսը, այն դեպքում, երբ տնային տնտեսությունների մյուս քվանտիլային խմբերի պարագայում դիտարկվող հարաբերական ցուցանիշը չի գերազանցում 0.5%-ը (գծ. 1.5):

Մտահոգիչ կարելի է համարել այն, որ 1-4-րդ քվանտիլային խմբերի ընդհանուր ծախսերի կառուցվածքում կրթության ծախսերի մասնաբաժինը վերջին տասնամյակում անշեղորեն նվազում է: Ակնառու է, որ կրթական ծառայություններից օգտվելու՝ ցածր եկամտային ու ծախսային խմբերում գտնվող տնային տնտեսությունների խիստ սահմանափակ կարողությունները հանրապետությունում մարդկային կապիտալի թերզարգացման, մարդկային ռեսուրսի անարդյունավետ օգտագործման աճող ռիսկեր են պարունակում:




Գծ. 1.5. Կրթական ծախսերը սպառողական ծախսերի կառուցվածքում, ըստ ՀՀ տնային տնտեսությունների քվանտիլային խմբերի, %⁵

Առաջինից չորրորդ քվանտիլներում կրթության ծախսերը, մեկ չափահաս անձի հաշվով, ըստ բնակավայրի տիպի էականորեն չեն տարբերվում: Իսկ 5-րդ քվանտիլի պարագայում նկատելի է երևանում բնակվող տնային տնտեսությունների գերազանցությունը. երևանում հարցված 5-րդ քվանտիլի տնային տնտեսությունները կրթության վրա մեկ չափահաս բնակչի հաշվով ամսական միջինում ծախսում են 11.3 հազար դրամ, հանրապետության այլ քաղաքներում՝ 5.7

⁵ Աղբյուրը՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, համապատասխան տարիների գեկույցները, ՀՎԿ:


հազար դրամ, իսկ գյուղական բնակավայրերում՝ 4.3 հազար դրամ (գծ. 1.6): Ուշագրավ է, որ Երևանում բնակվող, 5-րդ քվանտիլային խմբին պատկանող տնային տնտեսության մեկ չափահաս բնակչի հաշվով 2018-ին կրթության ոլորտում կատարված ծախսը 2017թ. համեմատությամբ աճել է ավելի քան 5 հազար դրամով, հանրապետության մյուս քաղաքներում՝ 1200 դրամով, իսկ գյուղական բնակավայրերում՝ 800 դրամով:



Գծ. 1.6. Կրթության ծախսերը ք.Երևանում, այլ քաղաքային և գյուղաբնակ ՏՏ-ներում, դրամ, ամսական, մեկ չափահաս անձի հաշվով, ըստ քվանտիլային խմբերի⁶

Տնային տնտեսությունների ծախսերի կառուցվածքում կրթության ծախսերի մասնաբաժինը առաջին 4 քվանտիլային խմբերում, ըստ համայնքների տիպի էականորեն չի տարբերվում: Ընդամին, 1-4-րդ խմբերում, բոլոր տիպի բնակավայրերում կրթության ծախսերի մասնաբաժինը չի գերազանցում ընդհանուր ծախսերի 1.0% սահմանագիծը: Մինչդեռ 5-րդ քվանտիլային խմբում դիտարկվող ցուցանիշի ակնհայտ տարբերությունն է նկատվում Երևանի խիստ մեծ գերազանցությամբ (գծ. 1.7):

⁶Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2018, Աղյուսակ A3.9, 223-224:



Գծ. 1.7. Կրթության ծախսերը ք.Երևանում, այլ քաղաքային և գյուղաբնակ ՏՏ-ներում, մեկ չափահաս անձի հաշվով, տոկոսներով ընդհանուր ծախսերի նկատմամբ, ըստ քվանտիլային խմբերի⁷


Անփոփում.

- I. կրթական ծառայությունների մասնաբաժինը ծառայությունների ընդհանուր կառուցվածքում ցածր մակարդակի վրա է և շարունակում է նվազել,
- II. կրթական ծառայությունների մատուցման տարածքային անհամամասնությունները շարունակում են խորանալ,
- III. սպառողական ծախսերի կառուցվածքում կրթական ծախսերի մասնաբաժինը հանրապետությունում շատ ցածր մակարդակի վրա է և աճի թույլ նշաններ է ցուցաբերում միայն վերին քվանտիլային խմբում ներառված տնային տնտեսությունների պարագայում,
- IV. տնային տնտեսությունների առաջին երեք քվանտիլային խմբերում կրթության ծախսերը խիստ ցածր են:

⁷Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2018, Աղյուսակ A3.9:

1.3. Նախադպրոցական կրթությունը Հայաստանում


Նախադպրոցական հաստատությունների թվաքանակը վերջին տասնամյակում կայուն աճի միտումներ է արձանագրել՝ 2009թ. 622-ից 2018-ին հասնելով 884-ի (գծ. 1.8):



Գծ. 1.8. Նախադպրոցական հաստատությունների թվաքանակի դինամիկան Հայաստանում⁸


Նախադպրոցական հաստատությունների գերակշիռ մասը համայնքային և գերատեսչական պատկանելիության են: 2018թ. հանրապետությունում գործել է ընդամենը 50 ոչ պետական ՆԴՅ, ինչը կազմում է ՆԴՅ-ների ընդհանուր թվի 5.7%-ը: Համեմատության համար արձանագրենք, որ 2011-ին ՀՀ-ում գործել է 52 ոչ պետական ՆԴՅ (կամ ՆԴՅ-ների ընդհանուր թվի շուրջ 8%-ը, տես՝ գծ. 1.9):

⁸ Տվյալների աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտե:




Գծ. 1.9. Մասնավոր ՆԴՅ թվաքանակը և տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ

2000-2018թթ. ժամանակահատվածում ՆԴՅ-ներ հաճախող երեխաների թվաքանակն աճել է ավելի քան 70 տոկոսով՝ 46.3 հազարից հասնելով 79.1 հազարի: Ել ավելի տպավորիչ աճ է արձանագրել ՆԴՅ-ներում երեխաների ընդգրկվածության հարաբերական ցուցանիշը (17 տոկոսից մինչև 32 տոկոս, գծ. 1.10): Մյուս կողմից, ՆԴՅ-ներում ընդգրկվածության ցուցանիշը շարունակում է մնալ համեմատաբար ցածր: Դրանից բխում է, որ նախադպրոցական տարիքի երեխաների 2/3-ը ՆԴՅ չի հաճախում:



Գծ. 1.10. Երեխաների թվաքանակը ՆԴՅ-ներում


Գյուղական բնակայրերում երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում շատ ավելի ցածր է, քան քաղաքներում (գծ. 1.11):



Գծ. 1.11. Երեխաների թիվը նախադպրոցական հաստատություններում՝ տոկոս 0-5տ. երեխաների թվաքանակից


Ընդհանրապես, նախադպրոցական հաստատություններում երեխաների ընդգրկվածության ցածր մակարդակը խիստ մտահոգիչ իրողություն է, եթե նկատի ունենանք այն փաստը, որ նախադպրոցական կրթությունը երեխայի կարողությունների զարգացման և հետագա ուսումնառության գործընթացի արդյունավետության ապահովման կարևոր նախադրյալ է հանդիսանում: Սա վկայում է ինչպես միջազգային, այնպես էլ հայաստանյան փորձը: Այս առումով, նախադպրոցական կրթության հասանելիության ապահովումը և նախակրթարաններում երեխաների ընդգրկվածության աստիճանի բարձրացումը կրթական համակարգի արդյունավետության կարևոր նախադրյալներից է:

Ըստ ՀՎԿ հարցման արդյունքների, ՆԴՀ չհախելու հիմնական պատճառներից է երեխայի մոր չաշխատելը (մոտ 40 տոկոս դեպքերում), նաև՝ մանկապարտեզ չլինելու հանգամանքը: Մյուս կողմից, 2018թ. հարցման արդյունքներով այս երկու պատճառները նշվել են հարցվածների 50%-ի կողմից, մինչդեռ 2017-ին դրանց մասնաբաժինը շատ ավելի մեծ էր՝ 80%: Սա վկայում է, մի կողմից՝ հարցման մեթոդական և այլ տեխնիկական խնդիրների առկայության մասին (մեկ տարվա ընթացքում էական պատճառների մասնաբաժնի նման անկում չէր կարող լինել), մյուս կողմից՝ ՆԴՀ չհաճախելու պատճառների առավել խորը և համակարգային հետազոտության անհրաժեշտության մասին (գծ. 1.12):




Գծ. 1.12. Մանկապարտեզ չհաճախելու հիմնական պատճառները, ըստ ՀՀԿԿ տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների, %

Հետաքրքրական է, որ հարցվածների մեծ մասի պարագայում ՆԴՀ տարածքային հասանալիությունը բավականին բարձր է եղել: Այսպես, գյուղական բնակավայրերում ամենամոտ ՆԴՀ հեռավորությունը 1կմ-ից պակաս է եղել հարցվածների 60%-ի դեպքում, իսկ ևս 23%-ի պարագայում ամենամոտ ՆԴՀ հեռավորությունը 1-3կմ է (գծ. 1.13):




Գծ. 1.13. Ամենամոտ նախադպրոցական հաստատության հեռավորությունը գյուղական բնակավայրերում, տոկոս ընդհանուրի նկատմամբ, 2018թ.

ՆԴՀ-ներում ընդգրկվածությունը տարբեր եկամտային խմբերը ներկայացնող ՏՏ-ների պարագայում եականորեն տարբեր է: Այսպես, 1-ին քվանտիլային խմբում ցուցանիշը 2018-ին կազմել է 26%, 3-րդում՝ 32%, իսկ 5-րդ խմբում՝ 43% (գծ. 1.14): Ըստ որում, ընդգրկվածության աճն առաջանցիկ է հատկապես 5-րդ խմբի պարագայում:




Պճ. 1.14. ՆԴՅ-ում ընդգրկվածությունը, ըստ տնային տնտեսությունների քվանտիլային խմբերի, %

Նախադպրոցական կրթության ոլորտում շարունակում է բարձր մնալ տարածքային անհամամասնությունների մակարդակը: Այսպես, ՆԴՅ հզորություններ 39%-ը և հաճախող երեխաների 44%-ը բաժին է ընկնում Երևանին, այն դեպքում, երբ Երևանի մասնաբաժինը ՆԴՅ-ների թվաքանակի կառուցվածքում չի գերազանցում 25%-ը (Պճ. 1.15):




Պճ. 1.15. Երևանի տեսակարար կշիռը

ՆԴՅ-ներում երեխաների տեղերով ապահովվածության հարաբերական ցուցանիշը 2000-ից ի վեր կայուն աճի միտում ունի, իսկ 2018-ին կազմել է շուրջ 90% (Պճ. 1.16): Այս հանգամանքը վկայում է ՆԴՅ-ներում առկա տեղերի օգտագործման ինտենսիվության աճի մասին: Մյուս կողմից, դրան զուգահեռ նվազում են չօգտագործվող հզորությունները, ինչը նշանակում է, որ ՆԴՅ-ներում երեխաների ընդգրկվածության հարաբերական ցուցանիշի բարելավման կայուն տեմպի շարունակականությունն ապահովելը տարեցտարի ավելի ու ավելի դժվար է լինելու և առաջին հերթին՝ պահանջելու է նոր ՆԴՅ-ների գործարկում:




Գծ. 1.16. Նախադարձական հաստատություններում երեխաների ապահովվածությունը տեղերով, %

1 ՆԴՀ հաշվով երեխաների թվի ցուցանիշը 2000թ-ից ընդհուպ մինչև 2012թ-ը կայուն աճ է գրանցել՝ 61-ից հասնելով 102-ի: Հետագա տարիներին ցուցանիշը կայունացել է 100-ի շրջակայքում, իսկ վերջին երկու տարիներին՝ որոշակի նվազում է արձանագրել, ինչը վերստին պայմանավորված է ՆԴՀ-ների թվի ավելացմամբ (գծ. 1. 17):




Գծ. 1.17. Երեխաների թիվը 1 ՆԴՀ հաշվով

1 ՆԴՀ հաշվով երեխաների թվաքանակի ցուցանիշն Էականորեն տարբերվում է ըստ համայնքային և գերատեսչական ու ոչ պետական ՆԴՀ-ների: Առաջինում այն 92 է, իսկ ոչ պետական ՆԴՀ-ներում՝ շուրջ 2 անգամ պակաս (գծ. 1.18):



Պճ. 1.18. Երեխաների թվաքանակը 1 ՆԴՅ հաշվով


Վերը նշված իրողության արտացոլումն է հանդիսանում 1 դաստիարակչական խմբի հաշվով երեխաների միջին թվի պարագայում առկա զգալի տարբերությունը: Այսպես, հանրապետության համայնքային և գերատեսչական ՆԴՅ-ներում 1 դաստիարակչական խմբում միջինում առկա է 27 երեխա (իսկ Երևանում էլ ավելի շատ՝ 31), այն դեպքում, երբ ոչ պետական ՆԴՅ-ներում նույն ցուցանիշը 10 է, ընդ որում՝ 2011-ի նկատմամբ 40%-ով ցածր (Պճ. 1.19):



Պճ. 1.19. Երեխաների թվաքանակը, 1 դաստիարակչական խմբի հաշվով

Սա նշանակում է, որ ոչ պետական ՆԴՅ-ներում արդյունավետ նախադպրոցական կրթություն կազմակերպելու համար, այլ հավասար պայմաններում, առկա է մի շատ կարևոր նախադրյալ՝ փոքր դաստիարակչական


միջին խումբը, ինչը անհատական և տարբերակված մոտեցումների կիրառման հնարավորություն է ընձեռնում:



ԳՃ. 1.20. Երեխաների թվաքանակը, 1 մանկավարժի հաշվով

Նույն կերպ, ոչ պետական ՆԴՅ-ներում ցածր է մանկավարժի բացարձակ ծանրաբեռնվածությունը: Այսպես, 1 մանկավարժի հաշվով երեխաների թվաքանակը ոչ պետական ՆԴՅ-ներում 7.2 է, իսկ համայնքային և գերատեսչական ՆԴՅ-ներում՝ 13.1 (Երևանում՝ 16.0): ընդ որում, վերջին 5 տարիներին ցուցանիշը ոչ պետական ՆԴՅ-ներում որոշակիորեն նվազել է, մինչդեռ համայնքային և գերատեսչական ՆԴՅ-ներում արձանագրվել է հակառակ միտումը (գճ. 1.20):

Մյուս կողմից, նույն ժամանակահատվածում ոչ պետական ՆԴՅ-ների շենքերի ընդհանուր մակերեսը, 1 երեխայի հաշվով, նվազում է արձանագրել և ներկայումս կազմում է 7.6 քառ.մ.: Համայնքային և գերատեսչական ՆԴՅ-ներում այս ցուցանիշը չնայած ևս որոշակիորեն նվազել է, սակայն ոչ պետական ՆԴՅ-ների համեմատ գտնվում է բարձր մակարդակի վրա՝ 9.1 քառ. մ. (գճ. 1.21): Սա կարող ենք մեկնաբանել հետևյալ կերպ. ոչ պետական ՆԴՅ-ները ռեսուրսների արդյունավետ օգտագործման ավելի խիստ սահմանափակումների են բախվում, քան համայնքային և գերատեսչական ՆԴՅ-ները: Սա մի կողմից ի ցույց է դնում մրցակցային միջավայրում անհավասար մեկնարկային պայմանների առկայությունը, իսկ մյուս կողմից էլ՝ մատուցվող ծառայությունների բարձր որակի ապահովման վրա ոչ պետական ՆԴՅ-ների ավելի մեծ կենտրոնացման լրացուցիչ խթան է հանդիսանում:



Գծ. 1.21. ՆԴՅ-ների շենքերի ընդհանուր մակերեսը, 1 երեխայի հաշվով, քառ.մ.


Ամփոփ դիտարկումներ նախադպրոցական կրթության վերաբերյալ

- I. տարեցտարի ավելանում է նախադպրոցական հաստատությունների թիվը և այդտեղ հաճախող երեխաների թվաքանակը,
- II. ՆԴՅ-ներում երեխաների ընդգրկվածության հարաբերական մակարդակը դեռևս ցածր է, իսկ գյուղական բնակավայրերում մոտ 2 անգամ պակաս, քան քաղաքային բնակավայրերում,
- III. ՆԴՅ-ներում երեխաների ընդգրկվածությունն էականորեն տարբերվում ըստ ՏՏ եկամտային խմբերի. ամենաաղքատ 20%-ը ներկայացնող ՏՏ-ների պարագայում ՆԴՅ-ներում ընդգրկվածությունը 26% է, իսկ առավել ապահովված 20%-ի դեպքում 43%,
- IV. առկա է նախադպրոցական հաստատությունների տարածքային համակենտրոնացման բարձր մակարդակ,
- V. ՆԴՅ մեկ խմբում երեխաների թվաքանակի ցուցանիշը համայնքային և գերատեսչական ՆԴՅ-ներում գտնվում է բարձր մակարդակի վրա՝ ի տարբերություն ոչ պետական ՆԴՅ-ների, որտեղ այն գրեթե 2 անգամ ցածր է,
- VI. ոչ պետական ՆԴՅ-ներում ռեսուրսների արդյունավետ օգտագործման խնդրադրումն ավելի ընդգծված ու թիրախային բնույթ ունի, ինչը ծառայությունների որակի բարձրացման կարևոր խթան է հանդիսանում,

VII. ՆԴՅ-ներում չօգտագործվող հզորությունները տարեցտարի կրճատվում են, ինչը նշանակում է, որ նախադպրոցական կրթության ծառայության մատուցման շրջանակների ընդլայնումը, երեխաների ընդգրկվածության ցուցանիշի որակական բարելավումը լուրջ ռեսուրսային ներարկումներ է պահանջում:

1.4. Հանրակրթությունը Հայաստանում

Հանրակրթության ոլորտում վերջին մեկուկես տասնամյակում ընթացող օպտիմալացման գործընթացների արդյունքում Էականորեն նվազել է հանրակրթական դպրոցների թիվը և ներկայումս կազմում է 1409 (գծ. 1.22):



Գծ. 1.22. Հանրակրթական դպրոցների թիվը ՀՀ-ում


Հանրակրթական դպրոցների շենքային պայմանները կրթական գործընթացի պատշաճ մակարդակի ապահովման առումով նշանակալի ռիսկեր են պարունակում: Հանրակրթական դպրոցների կեսից ավելին հիմնանորոգման կամ ընթացիկ նորոգման կարիք ունի (աղյուսակ 1.1): 73 դպրոց գրկված է ջրամատակարարումից, կոյուղացումը բացակայում է 140 դպրոցներում, իսկ թվով 439 դպրոցներում ջեռուցման խնդիրը լուծվում է էլեկտաջեռուցիչի կամ վառարանի միջոցով:

Աղյուսակ 1.1. Դպրոցների շենքային վիճակը

	2010	2013	2016	2017	2018
Դպրոցների շենքային վիճակը					
բավարար է	586	718	757	928	564
կարիք ունի հիմնանորոգման	601	490	428	330	459
կարիք ունի ընթացիկ նորոգման	263	225	247	163	386
Ջրամատակարարումը բացակայում է	164	91	71	72	73
Կոյուղացումը բացակայում է	229	176	141	137	140
Ջեռուցումը կենտրոնացված կամ անհատական	910	871	945	976	961
Ջեռուցումը էլեկտրաջեռուցիչով կամ վառարանով	540	557	479	436	439
Ջեռուցումը բացակայում է		5	8	9	9


Հանրակրթության ոլորտում գերակշիռ մաս են կազմում պետական դպրոցները, իսկ ոչ պետականները ընդամենը 46-ն են: Ընդ որում, ընթացիկ

տասնամյակում ոչ պետական դպրոցների թվի էական տեղաշարժ չի արձանագրվել (գծ. 1.23):




Գծ. 1.23. Պետական և ոչ պետական դպրոցների թվի դինամիկան

2003-ից ի վեր, հանրակրթական դպրոցներում սովորողների թիվը կրճատվել է 120 հազարով և 2018-2019 ուստարում կազմել է 382 հազար աշակերտ: Մյուս կողմից, վերջին տասնամյակում մեկ դպրոցի հաշվով աշակերտների թվաքանակի թույլ աճ է նկատվում (գծ. 1.24):




Գծ. 1.24. Սովորողների թվաքանակը հանրակրթական դպրոցներում

Ոչ պետական դպրոցներում սովորում է 9.3 հազար աշակերտ, ընդ որում այս ցուցանիշը կայուն տեմպերով աճում է: Աճում է նաև ոչ պետական մեկ դպրոցի հաշվով աշակերտների թիվը. 2018-ին այն գերազանցել է 200-ը, այն դեպքում, երբ 2010-ին կազմել է ընդամենը 113 (գծ. 1.25):



ՊՃ. 1.25. Ոչ պետական դպրոցների սովորողների թվաքանակի դինամիկան


Աշակերտների ընդգրկվածության հարաբերական ցուցանիշը (համախառն ընդգրկվածությունը), ըստ հանրակրթության մակարդակների, նվազագույնը ավագ դպրոցում⁹ Է՝ ընդամենը 60%, ինչը շատ ավելի ցածր է, քան տարրական և հիմնական դպրոցում (գժ. 1.26):



ՊՃ. 1.26. Հանրակրթական դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածությունն ըստ կրթական ծրագրերի, 2018/2019 ուսումնական տարի


Ավագ դպրոցում համախառն ընդգրկվածությունը տարեցտարի կայուն կերպով նվազում է՝ 2014-ի 72%-ից 2018-ին հասնելով 60%-ի (գժ. 1.27)

⁹Այստեղ և այսուհետ, եթե այլ նշում չկա, «ավագ դպրոց» հասկացությունը բնութագրում է հանրակրթության երրորդ աստիճանը՝ 10-12 դասարանները:



Պճ. 1.27. Աշակերտների ընդգրկվածությունը ավագ դպրոցում


Ավագ դպրոցում աշակերտ ունեցող SS-ները 1 աշակերտի հաշվով միջինում ծախսում են 4.6 հազար դրամ, իսկ հիմնական և տարրական դպրոցներում աշակերտների վրա կատարվող ծախսը շատ ավելի պակաս է՝ համապատասխանաբար 3.1 և 2.5 հազար դրամ (զժ. 1.28): Ուշագրավ է, որ 2016-ի համեմատությամբ Էականորեն կրճատվել են հատկապես ավագ դպրոցում սովորողների վրա արվող ծախսերը:



Պճ. 1.28. Տնային տնտեսությունների միջին ամսական ծախսը 1 աշակերտի հաշվով, դրամ


Ավագ դպրոցում աշակերտ ունենալու ֆինանսական բեռը SS-ների համար կարելի է նշանակալի համարել, ինչն էլ իր արտացոլումն է գտնում ավագ դպրոցում ընդգրկվածության ցուցանիշի՝ ըստ տնային տնտեսության աղքատության մակարդակի Էական տարբերություններում (զժ. 1.29): Աղքատ տնային տնտեսությունների պարագայում ավագ դպրոցում ընդգրկվածությունը 5 տոկոսային կետով ցածր է, քան միջինն ըստ բոլոր տնային տնտեսությունների, իսկ ոչ աղքատ տնային տնտեսությունների համապատասխան ցուցանիշից

տարբերությունը կազմում է 7 տոկոսային կետ: Մյուս կողմից, 2016թ. այս տարբերություններն ավելի նշանակալի էին, ինչը նախորդ գծապատկերում ներկայացվածի հետ համադրելով, կարելի է դիտարկել ավագ դպրոցում ընդգրկվածության և աշակերտի վրա կատարվող ծախսի միջև առկա սերտ կապի վկայություն:




Գծ. 1.29. Ավագ դպրոցներում համախառն ընդգրկվածությունը, ըստ տնային տնտեսության աղքատության մակարդակի

Ավագ դպրոցում սովորող ունեցող ոչ աղքատ տնային տնտեսությունները մեկ սովորողի հաշվով ամսական միջինում ծախսում են 5.3 հազար դրամ 2 անգամ շատ, քան աղքատ տնային տնտեսությունները և 3.5 անգամ ավելի, քան ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունները (գծ. 1.30):




Գծ. 1.30. Ավագ դպրոցում սովորող ունեցող SS միջին ամսական ծախսը, մեկ սովորողի հաշվով, ըստ SS աղքատության մակարդակի, դրամ

Ավագ դպրոցում սովորող ունեցող ոչ աղքատ ընտանիքների կողմից աշակերտի վրա կատարվող ծախսի կառուցվածքում մասնավոր դասերի մասնաբաժինը բավականին բարձր է՝ 39%: Աղքատ ընտանիքների կողմից մասնավոր դասերի վրա ծախսվում է 13%, ծայրահեղ աղքատ ընտանիքների կողմից նմանատիպ ծախս գործնականում չի արվում (գծ. 1.31):



Գծ. 31. Մասնավոր դասերի վրա կատարվող ծախսերի մասնաբաժինը ավագ դպրոցում սովորողի համար կատարվող ընդհանուր ծախսերի կառուցվածքում, %

Ըստ ամենայնի, ոչ աղքատ ընտանիքները նշանակալի միջոցներ են ծախսում ավագ դպրոցում սովորող աշակերտի մասնավոր դասերի համար՝ կրթական համակարգի հաջորդ մակարդակ աշակերտի սահուն անցումն ապահովելու նպատակով: Աղքատ ընտանիքների հնարավորություններն այս առումով սահմանափակ են, ուստի՝ սահմանափակ են նաև կրթական հաջորդ մակարդակներում իրենց երեխաների տեսնելու շանսերը: Այս պնդումը հավաստող փաստերից կարելի է համարել բուհական համակարգում ընդգրկվածության՝ ըստ SS աղքատության մակարդակի էական տարբերությունները (գծ. 1.32): Ոչ աղքատ տնային տնտեսությունների պարագայում բուհում համախառն ընդգրկվածությունը կազմում է 39%, այն դեպքում, երբ աղքատ SS-ների դեպքում՝ 26%, իսկ ծայրահեղ աղքատ SS դեպքում՝ 0%:




Գծ. 1.32. Բարձրագույն կրթական հաստատություններում համախառն ընդգրկվածությունը¹⁰

Ստացվում է, որ մի կողմից, ավագ դպրոցը չի լուծում իր հիմնական խնդիրը, ավագ դպրոցում սովորելը հատկապես աղքատ ընտանիքների համար նշանակալի ֆինանսական բեռ է ենթադրում, այս և մի շարք այլ պատճառներով տարեցտարի նվազում է ավագ դպրոցում ընդգրկվածության աստիճանը, իսկ մյուս կողմից էլ՝ հիմնական դպրոցն ավարտելուց հետո հանրակրթության համակարգից դուրս եկող պատանիներն ու աղջիկները, որպես կանոն, դադարում են զբաղվել իրենց կրթությամբ: Այս հանգամանքը չափազանց մտահոգիչ է, մասնավորապես՝ մարդկային կապիտալի զարգացման ներուժային հնարավորությունների օգտագործման արդյունավետության բարձրացման համատեքստում:


2010-2018թթ. հիմնական կրթությամբ շրջանավարտների թիվը պակասել է 10 հազարով և կազմել է 31.1 հազար: Անկում է ապրել նաև գերազանց առաջադիմությամբ ավարտածների տեսակարար կշիռը. 2018-ին այն կազմել է 6%՝ 2010-ի 15%-ի դիմաց (գծ. 1.33): Այս փաստը երկակի մեկնաբանության առիթ կարող է տալ: Մի կողմից կարող ենք արձանագրել հիմնական ընդհանուր հանրակրթության որակի նվազման իրողությունը, մյուս կողմից էլ՝ որոշակի շրջանակներում առկա է ամեն գնով բարձր գնահատական ստանալու ձգտման ինքնանպատակության ընկալումը, ինչն ինքնին առողջ երևույթ է:

¹⁰18-22 տարիքային խումբ:



Գծ. 11.33. Հանրակրթական դպրոցների հիմնական կրթությամբ շրջանավարտների թվաքանակը


Հիմնական կրթությամբ շրջանավարտների 27%-ը ուսումը շարունակել է նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում (ՆՄՈՒՀ) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (ՄՄՈՒՀ) (գծ. 34): Ընդ որում, երևանյան հիմնական դպրոցների շրջանավարտները, մարզերի դպրոցների շրջանավարտների համեմատությամբ, ավելի ակտիվ են եղել՝ ուսման շարունակության այս տարբերակի ընտրության հարցում:



Գծ. 1.34. Ընդունվել են ՆՄՈՒՀ կամ ՄՄՈՒՀ


Վերջին տասնամյակում հանրակրթության ոլորտում նկատելի միտումներից է նաև ուսուցիչների թվի նվազումը: 2018-19 ուսումնական տարում հանրակրթության ոլորտում ուսուցիչների թիվը կազմել է շուրջ 31 հազար, ինչը 2009-2010 ուստարվա

մակարդակից պակաս է մոտ 10 հազարով: Նույն շրջանում ավելացել է աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը: Ներկայումս այն կազմում է 12.2 (գծ. 1.35):



Գծ. 1.35. Ուսուցիչների թվաքանակը


Ոչ պետական դպրոցներում աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը ևս ավելացել է, սակայն պետական դպրոցների համեմատությամբ շատ ավելի ցածր մակարդակի վրա է (գծ. 1.36):



Գծ. 1.36. Աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը

Ուսուցիչների գենդերային կառուցվածքում առկա է խիստ անհավասարակշռվածություն: Կանանց տեսակարար կշիռը 89% է: Ընդ որում,

Երևանում այն ավելի բարձր է՝ 93%: Ավելին, այս անհավասարակշռվածությունը դիտարկվող ժամանակահատվածում խորացման միտում է ցուցաբերում (գծ. 1.37):



Պճ. 1.37. Կանանց տեսակարար կշիռը ուսուցիչների ընդհանուր թվաքանակում

Ուսուցիչների շուրջ 78%-ը աշխատում է մեկ դրույքից պակաս բեռնվածությամբ (2010թ-ին՝ 80%-ը): Պետք է արձանագրել, որ ուսուցիչների թվի կրճատումը ուսուցիչների անհատական բեռնվածության կառուցվածքի էական փոփոխության չեն հանգեցրել (աղյուսակ 1.2):

Աղյուսակ 1.2. Հանրակրթական դպրոցների ուսուցիչների թվաքանակն ըստ դրույքի, տոկոսներով ընդհանուրի նկատմամբ

Դրույքը	2010	2014	2018
մինչև 0,5	17	18	16
0,51-0,75	27	28	25
0,76-1,00	36	35	37
1,01-1,25	14	14	16
1,26-1,50	4	5	5
1,5-ից ավելի	0	1	1

Հանրակրթական դպրոցների ուսուցիչների գերակշիռ մասը (ավելի քան 80%-ը) վերապատրաստվել է, ընդ որում՝ վերապատրաստումների առավելագույն ինտենսիվությունը բաժին է ընկել վերջին 5 տարիներին (աղյուսակ 1.3): Միջին հաշվով, տարեկան վերապատրաստումներն ընդգրկում են ուսուցիչների ընդհանուր թվաքանակի 18-20%-ը:

Աղյուսակ 3. Ուսուցիչների վերապատրաստումը (հազ. մարդ)

	2012	2014	2016	2018
Վերապատրաստված ուսուցիչների թվաքանակը	27,9	29,5	31,7	25,2
վերջին 5 տարում վերապատրաստված ուսուցիչների թվաքանակը	24,2	26,4	28,7	23,1
Նախորդ ուսումնական տարում վերապատրաստված ուսուցիչների թվաքանակը	7,6	6,8	5,7	5,7


Ամփոփ դիտարկումներ (հանրակրթություն)

- I. Վերջին մեկուկես տասնամյակում զգալիորեն կրճատվել է հանրակրթական դպրոցների թիվը, նվազել են դրանցում սովորողները: Ոչ պետական դպրոցներում սովորողների թիվը կայուն տեմպով աճում է:
- II. Հանրակրթական դպրոցների շենքային պայմանները արմատական բարելավման կարիք ունեն և կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման առումով զգալի ռիսկեր են պարունակում:
- III. Մարզերում հիմնական կրթությամբ շրջանավարտների ավելի մեծ մասնաբաժինն է ուսումը շարունակում ավագ դպրոցում, քան Երևանյան դպրոցների շրջանավարտները: Մյուս կողմից, վերջիններն ավելի ակտիվ են միջին կամ նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների ընտրության հարցում:
- IV. Ավագ դպրոցում աշակերտ ունենալու ֆինանսական բեռը SS-ների համար նշանակալի էլ, ինչն էլ իր արտացոլումն է գտնում ավագ դպրոցում ընդգրկվածության ցուցանիշի՝ ըստ տնային տնտեսության աղքատության մակարդակի էական տարբերություններում:
- V. Ավագ դպրոցում սովորող ունեցող ոչ աղքատ տնային տնտեսությունները մեկ սովորողի հաշվով ամսական միջինում ծախսում են 2 անգամ շատ, քան աղքատ տնային տնտեսությունները և 3.5 անգամ ավելի, քան ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունները
- VI. Ուսուցիչների թվի առաջանցիկ կրճատմամբ պայմանավորված աճել է աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը: Ոչ պետական դպրոցներում այս ցուցանիշը զգալիորեն ցածր է, քան պետական դպրոցներում:
- VII. Ուսուցիչների գենդերային կառուցվածքում առկա է խիստ անհավասարակշռվածություն: Ուսուցիչների ճնշող մեծամասնությունը կանայք են (Երևանում՝ 93%-ը, ՀՀ միջինը՝ 89%)

VIII. Ուսուցիչների գերակշիռ մասն աշխատում է մեկ դրույքից պակաս բեռնվածությամբ: Ուսուցիչների թվի կրճատումը ուսուցիչների անհատական բեռնվածության կառուցվածքի էական փոփոխության չեն հանգեցրել:


1.5. Բարձրագույն մասնագիտական կրթությունը Հայաստանում

Վերջին տարիներին կրճատվում է նաև ինչպես բուհերի, այնպես էլ դրանցում սովորողների թվաքանակը (գծ. 1.38):




Գծ. 1.38. Բուհերի քանակը և սովորողների թիվը

Ուսանողների 15%-ը կամ ավելի քան 10 հազար ուսանող սովորում է գործարարություն և վարչարարություն մասնագիտությունների խմբում: Առավել նախընտրելի մասնագիտությունների եռյակը լրացնում են սոցիալական և վարքաբանական գիտություններն ու կրթությունը (գծ. 1.39): Բնագիտական մասնագիտությունները նախընտրելիության առումով նկատելիորեն զիջում են նշվածներին, չնայած՝ վերջին տարիներին նկատելի է ուսանողների գերակայությունների որոշակի տեղաշարժի միտումը՝ հոգուտ բնագիտական և տեխնիկական մասնագիտությունները (գծ. 1.40):




Գծ. 1.39. Ուսանողների թվաքանակն ըստ մասնագիտությունների խմբերի, 2018/2019 ուստարի, հազար մարդ




Գծ. 1.40. Ուսանողների թվաքանակն ըստ մասնագիտությունների խմբերի, 2018/2019 ուստարի, ընդունվածներ, մարդ

Արդեն հիշատակվեց, որ բուհերում ընդգրկվածության մակարդակը տարբերվում է՝ ըստ տնային տնտեսությունների աղքատության մակարդակի: Ի լրումն, կարող ենք արձանագրել, որ ըստ ծախսերի մակարդակի ստորին քվանտիլային խմբի SS պարագայում բուհում ընդգրկվածությունը ընդամենը 19% է, մինչդեռ վերին 20% SS-ներում նույն ցուցանիշը 54% է (գծ. 1.41):




Գծ. 1.41. Բուհերում համախառն ընդգրկվածությունն ըստ տնային տնտեսությունների քվանտիլային խմբերի, %

Բուհերի մեծ մասը (45 բուհ) գտնվում է Երևանում, դրանցում սովորում է 59 հազար ուսանող (ուսանողների ընդհանուր թվի 85%): Իսկ Երևանի, Լոռու և Շիրակի մարզի բուհերին բաժին է ընկնում ուսանողների ընդհանուր թվի մոտ 94%-ը (գծ. 1.42):




Գծ. 1.42. Բուհերի ուսանողների տարածքային բաշխվածությունը, 2018/2019 ուստարի, հազար ուսանող

Օտարերկրյա ուսանողների թվաքանակը ՀՀ բուհերում վերջին մի քանի տարիներին աճի աննշան միտումներ է ցուցաբերում, սակայն ուսանողների ընդհանուր կառուցվածքում օտարերկրյա ուսանողների տեսակարար կշիռը դիտարկվող ողջ ժամանակահատվածի ընթացքում չի գերազանցել 5.0% մակարդակը (գծ. 1.43):



Գծ. 1.43. Օտարերկրյա ուսանողները ՀՀ բուհերում

Օտարերկրյա ուսանողների ընդհանուր թվի 81%-ը ապահովվում է միայն 4 երկրներից (ՌԴ, Վրաստան, Սիրիա, Հնդկաստան) ժամանած ուսանողների հաշվին (գծ. 1.44), որոնց մեծ մասը օտարերկրյա քաղաքացիություն ունեցող մեր հայրենակիցներն են:




Գծ. 1.44. ՌԴ-ի, Վրաստանի, Սիրիայի, Հնդկաստանի քաղաքացիների տեսակարար կշիռը ՀՀ բուհերի օտարերկրյա ուսանողների թվաքանակում, %

Ըստ եռլայան, հայաստանյան բուհերը գրավիչ չեն օտարերկրացիների համար, ինչի պատճառը դրանց ցածր մրցունակությունն է, կրթական ծառայությունների՝ միջազգային չափանիշներով ոչ բարձր որակը:

Բարձրագույն կրթության համակարգում ընթացող օպտիմալացումը անդրադառնում է նաև պրոֆեսորադասախոսական անձնակազմի կրճատման վրա, ինչն առավել ակնառու դրսևորում է ստացել հատկապես 2015թ-ից սկսած (գծ. 1.45):

Արդյունքում ներկայումս ՊԴԱ թվաքանակը շուրջ 7000 է, իսկ ՊԴԱ 1 անդամի հաշվով ուսանողների թվաքանակը, 2004-ից ի վեր առաջին անգամ, պակաս է 10-ից:



ՊՃ. 1.45. Կրթության ապահովման անձնակազմի թվաքանակի դինամիկան

Ըստ եուրյան, ՀՀ բուհական համակարգը աչքի է ընկնում ցածր ճկունությամբ, կրթական ծառայությունների ցածր որակով: Վերջին տարիներին համակարգում տեղի ունեցող բարեփոխումները, որոշ փոփոխությունների կամ լավացումների բերելով, բավարար չեն եղել որակական ճեղքման համար: Անհրաժեշտ են բարձրագույն մասնագիտական կրթության արմատական փոփոխություններ, որոնք պետք է ուղղված լինեն ուսանողների թվի կրճատմանը, կրթական ծրագրերի բարելավմանը, բուհերի ֆինանսական աղբյուրների բազմազանեցմանը, գործնական հմտությունների ուժեղացմանը նպատակաուղղված դասընթացների կիրառմանը, պրոֆեսորադասախոսական կազմի օպտիմալացմանը, բուհերի աշխատակազմերը լավագույն մասնագետներով համալրելուն նպաստող մեխանիզմների ներդրմանը, բուհ-աշխատաշուկա-գիտություն կապերի սերտացմանը, բուհերի ինքնավարության ավելացմանը, ինստիտուցիոնալ հենքի հզորացմանը, միջազգայնացմանը և այլն:

Ամփոփ դիտարկումներ


- I. Ոչ աղքատ տնային տնտեսությունների պարագայում բուհում համախառն ընդգրկվածությունը կազմում է 39%, այն դեպքում, երբ աղքատ SS-ների դեպքում՝ 26%, իսկ ծայրահեղ աղքատ SS դեպքում՝ 0%:

- II. Օտարերկրյա ուսանողների թվաքանակը ՀՀ բուհերում վերջին մի քանի տարիներին աճի աննշան միտումներ է ցուցաբերում, սակայն ուսանողների ընդհանուր կառուցվածքում օտարերկրյա ուսանողների տեսակարար կշիռը դիտարկվող ողջ ժամանակահատվածի ընթացքում չի գերազանցել 5.0% մակարդակը: Օտարերկրյա ուսանողների 80%-ը 4 երկրներից են:
- III. Բարձրագույն կրթության ոլորտում արդյունավետության բարձրացման խնդրի լուծումն օրակարգային անհրաժեշտություն է դարձել: Ոլորտում տեղի ունեցող բարեփոխումների տեմպը դեռևս բավարար չէ մասնագիտական կրթության մրցունակության բարձրացման մասին վստահաբար խոսելու համար:

2. Հայաստանյան կրթության և գիտության մրցունակությունը

2.1. Կրթության մրցունակությունը


Գլոբալ մրցունակության 2018թ. զեկույցի համաձայն, Հայաստանում կրթական առաջին մակարդակի որակի գնահատականը 4.3 է (7 բալային համակարգով, որտեղ 7-ը առավելագույն մակարդակն է): Այս ցուցանիշով Հայաստանը երկրների վարկանիշային աղյուսակում 54-րդն է, ինչը բավականին լավ արդյունք է, հատկապես՝ տարածաշրջանի և ԵԱՏՄ առանձին գործընկեր երկրների համեմատությամբ (գծ. 2.1):



Գծ. 2.1. Կրթական առաջին մակարդակի որակի գնահատականը (սյունակների ներքևում նշված է երկրի վարկանիշը)¹¹


Կրթության քանակական բնութագրիչի գնահատականը ՀՀ-ում ավելի բարձր է (5.2), սակայն նույն երկրների վարկանիշային աղյուսակում Հայաստանը համեմատաբար ցածր հորիզոնականում է (66-րդ տեղ), իսկ համեմատվող երկրներից գերազանցում է միայն Ադրբեջանին և Մոլդովային (գծ. 2.2):

¹¹Աղբյուրը՝ Գլոբալ մրցունակության զեկույց, 2018թ., Գլոբալ տնտեսական համաժողով:



ՊՃ. 2.2. Կրթության քանակական ցուցիչ¹²

Կրթական համակարգի որակի գնահատականով Հայաստանը Ռուսաստանի, Չեխիայի, Ուկրաինայի հետ նույն խմբում է և տարածաշրջանի երկրներից զիջում է միայն Ադրբեջանին (պճ. 2.3):




ՊՃ. 2.4. Կրթական համակարգի որակի ցուցիչ¹³

Նույնատիպ պատկեր է նաև կրթության որակի ցուցիչի պարագայում: Այստեղ Հայաստանը 61-րդն է (պճ. 2.5):


¹²Աղբյուրը՝ Գլոբալ մրցունակության զեկույց, 2018թ., Գլոբալ տնտեսական համաժողով:

¹³Աղբյուրը՝ Նույն տեղում:



Գծ. 2.5. Կրթության որակի ցուցիչը¹⁴

Կրթության գլոբալ ցուցիչներով Հայաստանը լավագույն դիրքերում է մաթեմատիկական և բնագիտական կրթության որակի գնահատականով: Այստեղ մեր երկիրը նույնիսկ մրցակցում է բնագիտական կրթության կայացած ու ճանաչված համակարգ ունեցող Կորեայի և Իսրայելի հետ (գծ. 2.6):




Գծ. 2.6. Մաթեմատիկական և բնագիտական կրթության որակը¹⁵

Բարձրագույն կրթության և վերապատրաստումների ընդհանրական գնահատականը նախորդ ցուցանիշի հետ համադրելի է, սակայն քանի որ համեմատվող մյուս երկրների կատարողականն ավելի գոհացուցիչ է, ուստի դիտարկվող ցուցանիշի 4.4 արժեքով Հայաստանը երկրների վարկանիշային աղյուսակում միայն 69-րդն է (գծ. 2.7):


¹⁴Աղբյուրը՝ Գլոբալ մրցունակության զեկույց, 2018թ., Գլոբալ տնտեսական համաժողով:

¹⁵Աղբյուրը՝ Նույն տեղում:



Պճ. 2.7. Բարձրագույն կրթության և վերապատրաստումների որակը¹⁶

Երկրում տաղանդների օգտագործման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշի գնահատականով Հայաստանը շատ ավելի հետին դիրքերում է և չնայած կարողացել է առաջ անցնել տարածաշրջանի երկրների մեծ մասից, սակայն օրինակ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների համեմատությամբ ՀՀ գնահատականը խիստ ցածր կարելի է համարել (Պճ. 2.8):




Պճ. 2.8. Տաղանդների արդյունավետ օգտագործումը

Կրթական համակարգի արդյունավետության կարևոր բնութագրիչներից է դրա թիրախայնությունը, ի մասնավորի՝ շրջանավարտների մոտ համապատասխան հմտություններ ձևավորելու ունակությունը: Այս համատեքստում հանրապետության կրթական համակարգի գնահատականը բավականին ցածր է:


¹⁶Աղբյուրը՝ Գլոբալ մրցունակության զեկուլց, 2018թ., Գլոբալ տնտեսական համաժողով:

Այսպես, հմտությունների ընդհանրական գնահատականը 100 բալային համակարգով 67 է, ինչը 141 երկրների շարքում 61-րդ արդյունքն է: Այս ցուցանիշով Հայաստանը գերազանցում է իր հարևաններից Թուրքիային և Իրանին, ԵԱՏՄ գործընկերներից միայն Ղրղզստանին, իսկ օրինակ Վրաստանից կամ Ադրբեջանից զգալիորեն հետ է մնում (գծ. 2.9):



Գծ. 2.9. Հմտությունների ընդհանրական գնահատականը, 0-100 սանդղակ¹⁷


Ընթացիկ աշխատուժի հմտությունների գնահատականը Հայաստանում ցածր է 50 տոկոսի շեմից, իսկ երկրների վարկանիշային աղյուսակում զբաղեցրած տեղը 84-րդն է (140 երկրների շարքում)՝ շատ ավելի հետ Ադրբեջանից, Ռուսաստանից կամ Ուկրաինայից (գծ. 2.10):



¹⁷ Աղբյուրը՝ Գլոբալ մրցունակության զեկույց, 2019թ., Գլոբալ տնտեսական համաժողով:


Գծ. 2.10. Ընթացիկ աշխատուժի հմտությունները (0-100 սանդղակ)¹⁸

ՀՀ բուհական համակարգի շրջանավարտների հմտությունները 7 բալային սանդղակով գնահատվել են 3.7, ինչը թույլ է տվել երկրների վարկանիշային աղյուսակում զբաղեցնել միայն 100-րդ հորիզոնականը (գծ. 2.11):



Գծ. 2.11. Շրջանավարտների հմտությունները (1-7 սանդղակ)¹⁹

Հայաստանում հեշտ չէ նաև որակավորված աշխատուժ գտնելը: Այս ցուցանիշով մեր հանրապետությունը նորից զիջում է Ադրբեջանին, Ռուսաստանին, Ուկրաինային, Ղազախստանին (գծ. 2.12):




Գծ. 2.12 Որակավորված աշխատող գտնելու հեշտությունը (1-7 սանդղակ)²⁰


¹⁸ Աղբյուրը՝ Գլոբալ մրցունակության զեկույց, 2018թ., Գլոբալ տնտեսական համաժողով:

¹⁹ Նույն տեղում:

Փոքր-ինչ ավելի բարձր են գնահատված ապագա աշխատողի հմտությունները (գծ. 2.13), ինչն առաջին հերթին պայմանավորված է կրթական գործընթացում քննադատական, ճկուն մտածողության կիրառման և սովորողների մոտ դրա զարգացման կարևորմամբ: Այս վերջին ցուցանիշով Հայաստանն առաջ է իր հարևաններից, նաև՝ գերազանցում է ԿԱԵ առանձին երկրներին (գծ. 2.14):



Գծ. 2.14. Ապագա աշխատողի հմտությունները (0-100 սանդղակ)²¹



Գծ. 2.15. Կրթական մտածողությունը ուսուցման գործընթացում (1-7 սանդղակ)²²


²⁰ Աղբյուրը՝ Գլոբալ մրցունակության զեկույց, 2018թ., Գլոբալ տնտեսական համաժողով:

²¹ Աղբյուրը՝ Գլոբալ մրցունակության զեկույց, 2018թ., Գլոբալ տնտեսական համաժողով:

²² Նույն տեղում:


2.2. Գիտության և հետազոտությունների մրցունակությունը

2014-ից հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերի բացարձակ մեծությունը գերազանցել է միայն 10 մլրդ դրամի շեմը, մյուս կողմից՝ ՀՆԱ նկատմամբ նույն ցուցանիշի հարաբերակցությունը նվազման ընդգծված միտում է ցուցաբերում՝ առանց այդ էլիսիստ ցածր 0.24 տոկոսից (2015թ.) սահուն նվազելով մինչև 0.17 տոկոս: Ըստ որում, դիտարկվող ամբողջ ժամանակահատվածի ընթացքում Հունս հարաբերական ցուցանիշը առավելագույնը կազմել է 0.26 տոկոս (գծ. 2.16):



Գծ. 2.16 Հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերը ՀՀ-ում


Հունս ծախսերի միջերկրային համեմատությունների մեր հանրապետության համար լավատեսության քիչ առիթներ են ստեղծում: Այսպես, մեկ շնչի հաշվով Հունս ծախսը, գնողունակության համարժեքությամբ արտահայտված, վերջին տարիներին միջնում կազմել է 22 ԱՄՆ դոլար, ինչը ավելի քան 10 անգամ պակաս է ԿԱԵ երկրների կամ միջինից բարձր եկամտով երկրների խմբի (որի մեջ մտնում է նաև Հայաստանը) ցուցանիշից (գծ. 2.17): Ըստ որում, այս ցուցանիշով Հայաստանը գիջում է նաև իր հարևան երկրներին, նաև՝ ԵԱՏՄ հանգուցային գործընկերներին:



Գծ. 2.17. ՀունՄ, 1 շնչի հաշվով, ԱՄՆ դոլար, ԳՀ²³


ՀՆԱ նկատմամբ ՀունՄ ծախսերի տեսակարար կշռի ցուցանիշով ևս Հայաստանը դիտարկվող երկրների շարքում հետևապահների թվում է. 140 երկրների շարքում՝ 89-րդը (գծ. 2.18): Սույն ցուցանիշով մեր երկրում կայուն կերպով արձանագրվող մակարդակը 4 անգամ պակաս է ԿԱԵ երկրների մակարդակից, իսկ միջինից բարձր եկամտով երկրների խմբի միջին մակարդակին զիջում է մոտ 6 անգամ:

²³ Սույն բաժնում միջազգային համադրություններում օգտագործվել են UNESCO-ի տվյալների բազաները:




Գծ. 2.18. Հոսս ծախսերը, % ՀՆԱ նկատմամբ

Հետազոտությունների և մշակումների ներքին ծախսերի կառուցվածքում բյուջետային միջոցներով արվող ծախսերի մասնաբաժինը դեռևս շարունակում է խիստ բարձր մնալ: 2003-ին արձանագրված նվազագույն մակարդակը՝ 48.7%-ը, հետագա տարիներին անշեղորեն աճելով, վերջին տարիներին կայունացել է 70 տոկոսը գերազանցող մակարդակների վրա: Այս իրողությունը տրամադորեն հակադրվում է զարգացած հետազոտական համակարգ ունեցող մի շարք երկրներում առկա պատկերին (գծ. 2.19):




Գծ. 2.19 Հետազոտությունների և մշակումների ներքին ծախսերը՝ բյուջետային միջոցների հաշվին

Ըստ այդմ, ՀուՄ ծախսերի կառուցվածքում պետական ֆինանսավորման մասնաբաժնի ցուցանիշով Հայաստանի մակարդակը համադրելի է այնպիսի երկրների հետ, ինչպիսիք են, օրինակ, Տաջիկստանը, Ղրղզստանը կամ Մոլդովան: Մյուս կողմից, զարգացած գիտական և հետազոտական համակարգեր ունեցող երկրներում ՀուՄ ծախսերի կառուցվածքում պետական մասնաբաժինը բավականաչափ փոքր է, իսկ օրինակ՝ Ճապոնիայում կամ Իսրայելում չի գերազանցում 15%-ը (գծ. 2.20):




Գծ. 2.20 ՀուՄ պետական ֆինանսավորման մասնաբաժինը, %

Մյուս կողմից, Հայաստանն աչքի է ընկնում ՀուՄ ծախսերի կառուցվածքում բուհերի մասնաբաժնի խիստ ցածր մակարդակով (գծ. 2.21): Հետաքրքրական է, սակայն, որ բուհերի մասնակցությունը ՀուՄ ծախսերում բավականաչափ ցածր է նաև որպես չափանմուշային դիտարկված Ճապոնիայում կամ Իսրայելում: Սա վկայում է ՀուՄ ֆինանսավորման տարբեր արդյունավետ մոդելների առկայության հնարավորության մասին, դրանով հանդերձ նաև՝ չի հերքվում այդ բոլոր մոդելներում պետության նվազագույն մասնակցության կանխադրույթը:




Գծ.2.21 Հուն, բուհերի մասնաբաժինը, %

Դիտարկվող երկրների շարքում Հայաստանն առաջատար է Հուն ծախսերի կառուցվածքում աշխատուժի ծախսերի մասնաբաժնի ցուցանիշով (գծ. 2.22): Սա կարող է նշանակել, որ Հուն ֆինանսավորման հայաստանյան մոդելը ոլորտի ենթակառուցվածքային զարգացման ֆինանսավորման թույլ հնարավորություններ է ստեղծում, ինչը Հուն ոլորտի հատկապես երկարաժամկետ կայուն զարգացման առումով լուրջ ռիսկեր է ստեղծում:




Գծ. 2.22. ՀոՒՄ, աշխատուժի ծախսերի մասնաբաժինը, %

Ընդհանուր առմամբ, Հայաստանում ՀոՒՄ ընդհանրական գնահատականը (ըստ գլոբալ մրցունակության 2019թ. զեկուլցի) 100 բալային համակարգով ընդամենը 27 է, ինչը դիտարկված 141 երկրների շարքում 66-րդ արդյունքն է (գծ. 2.23):




Գծ. 2.23. Հետազոտությունների և մշակումների ընդհանրական գնահատականը (0-100 սանդղակ)

Հայաստանում գիտական կազմակերպությունների թիվը դիտարկվող ժամանակահատվածում նվազման ընդգծված միտումներ է ցուցաբերում (գծ. 2.24), ինչը գիտության համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքի որոշ օպտիմալացման թույլ դրսևորում կարելի է համարել: Մյուս կողմից, նույնիսկ փոքր թվով հետազոտական և գիտական կազմակերպությունները ինստիտուցիոնալ առումով թերզարգացած են, չունեն բավարար ֆինանսական, մարդկային և նյութական կարողություններ՝ մրցունակ հետազոտական կամ գիտական պրոդուկտ ստեղծելու համար:




Գծ. 2.24 Գիտական կազմակերպությունների թիվը Հայաստանում

Հետազոտություններում և մշակումներում ընդգրկված հետազոտողների ու տեխնիկների թվաքանակը դիտարկվող ամբողջ ժամանակահատվածում նվազման ընդգծված միտում է ցուցաբերում: Վերջին 5 տարիների ընթացքում հետազոտողների և տեխնիկների թվաքանակը նվազել է մոտ 1000 մարդով և կազմում է 3.5 հազար, իսկ մեկ գիտական կազմակերպության հաշվով՝ 56 մարդ: Այս հարաբերական ցուցանիշը ևս դիտարկվող ժամանակահատվածում նվազման կայուն միտում է ցուցաբերում՝ կարճատև աճ արձանագրելով միայն 2007թ. (գծ. 2.25):



Գծ. 2.25. Հետազոտողների և տեխնիկների թվաքանակի դինամիկան Հայաստանում, 1996-2018թթ.


Հետազոտողների թվաքանակի ցուցանիշով միջերկրային համադրություններում ևս մեզ համար լավատեսական քիչ բան կա: Այսպես, հետազոտողների հարաբերական թվաքանակի (1 մլն բնակչի հաշվով) ցուցանիշով Հայաստանը զիջում է Ադրբեջանին, Վրաստանին, Բելառուսին, զգալիորեն հետ է մնում նաև Ռուսաստանից, ԿԱԵ երկրներից, իսկ ոլորտի առաջատար երկրների համեմատությամբ տարբերությունը 7-10 անգամ է (գծ. 2.26):



Գծ. 2.26. ՀուՄ, հետազոտողների թիվը, 1 մլն բնակչի հաշվով


Հայաստանում ասպիրանտների թվաքանակը տարեցտարի նվազման միտում է արձանագրում: Այն իր առավելագույն մակարդակին է հասել 2005թ-ին (1528

ասպիրանտ), որից հետո կտրուկ նվազման միտում է արձանագրվել: Արդյունքում 2018-ին ասպիրանտների թիվը 2001-ից ի վեր, առաջին անգամ պակաս է 1000-ից (գծ. 2.27):




Գծ. 2.27. Ասպիրանտների թվաքանակը

Ասպիրանտական տեղերի կառուցվածքում ամենամեծաթիվ մասնագիտական խումբը տնտեսագիտականն է, մյուս կողմից՝ տնտեսագետ ասպիրանտների թիվը հատկապես 2006-ից սկսած կյուն տեմպերով նվազում է: Նվազում է նաև տեխնիկական մասնագիտությունների գծով ասպիրանտների թիվը, իսկ ֆիզիկամաթեմատիկական մասնագիտությունների գծով ասպիրանտների թիվը 2018-ին գտնվում է դիտարկվող ժամանակահատվածի համար նվազագույն մակարդակի վրա (գծ. 2.28):




ՊՃ. 2.28. Ասպիրանտների թվաքանակն ըստ մասնագիտությունների խմբերի

Գիտական հետազոտությունների և մշակումների ծավալների, ֆինանսավորման, դրանցում մասնակիցների թվի քանակային բնութագրիչների կրճատումն անխուսափելիորեն հանգեցրել է Հայաստանում գիտության և հետազոտությունների ոլորտների որակական ցուցանիշների վատթարացման ու մրցունակության ցածր մակարդակի հաստատման: Մասնավորապես, 2018թ. գլոբալ մրցունակության զեկույցի շրջանակներում ներկայացված գիտահետազոտական ինստիտուտների որակի ընդհանրական գնահատականով Հայաստանը 141 երկրների շարքում տեղ է զբաղեցրել 88-րդ հորիզոնականում՝ զգալիորեն զիջելով Ղազախստանին, Ուկրաինային, Իրանին, Ադրբեջանին:




ՊՃ. 2.29. Գիտահետազոտական ինստիտուտների որակը

Մեր երկրում խսիտ ցածր է ֆիրմաների մակարդակում տեխնոլոգիաների կլանման կարողությունը (77-րդ տեղը երկրների վարկանշային աղյուսակում, ՊՃ. 2.30), Էլ ավելի մտահոգիչ է հետազոտությունների և մշակումների ոլորտում կրթական հաստատությունների և արտադրական ընկերությունների համագործակցության արդյունավետության ցածր մակարդակը (88-րդ տեղ, ՊՃ. 2.31):




ՊՃ. 2.30. Տեխնոլոգիաների կլանումը ֆիրմաների մակարդակում



Պճ. 2.31. Բուհ-արտադրություն համագործակցության արդյունավետությունը հետազոտությունների և մշակումների ոլորտում


Վերը նշվածով հանդերձ, նորարարական ընկերությունների աճի գնահատականը Հայաստանում համեմատաբար բարձր է (4.2` 7 բալային համակարգով), ինչը թույլ է տվել 141 երկրների շարքում լինել 54-րդը` առաջ անցնելով ԵԱՏՄ երկրներից, հարևան պետություններից (բացառությամբ Ադրբեջանի), և գերազանցելով նույնիսկ ԿԱԵ առանձին երկրների:




Պճ. 2.32. Նորարարական ընկերությունների աճի գնահատականը (1-7 սանդղակ)

Դրանով հանդերձ, Հայաստանում համեմատաբար ցածր է գիտական հրապարակումների ինտենսիվությունը (այս ոլորտը գնահատող ինտեգրալային ցուցիչով Հայաստանը 141 երկրների շարքում 71-րդն է, Պճ. 2.33), նաև`

անբավարար մակարդակի վրա է հայտնագործությունների, գյուտերի գրանցման հարաբերական ակտիվությունը (գծ. 2.34):




Գծ. 2.33 Գիտական հրապարակումների գնահատականը



Գծ. 2.34. Պատենտների հայտերը, 1 մլն բնակչի հաշվով

Այնուհանդերձ, գիտության և հետազոտությունների ոլորտի, ինովացիոն ակտիվության հարաբերական ցուցանիշներով մեր հանրապետության համեմատական դիրքն ավելի լավ է, քան ընդհանրապես համաշխարհային տնտեսական տարածությունում մեր ազգային տնտեսության մրցակցային դիրքը (գծ. 2.35): Սա նշանակում է, որ գլոբալ մրցակցային պայքարում գիտության, հետազոտությունների և նորարարությունների գործոնները Հայաստանյան տնտեսության առավել խոցելի տեղերը չեն:



Գծ. 2.35. Գյուղալ մրցունակության գնահատականը (0-100 միջակայք) և վարկանիշը՝ ըստ առանձին երկրների

Ամփոփ դիտարկումներ. կրթության և գիտության մրցունակությունը.


- I. կրթության քանակական բնութագրիչներով Հայաստանն աշխարհում համեմատաբար բարվոք դիրք է զբաղեցնում՝ ի տարբերություն որակական բնութագրիչների,
- II. շրջանավարտների հմտությունների գնահատականը Հայաստանում բավականին ցածր է՝ ինչպես ԵԱՏՄ հիմնական գործընկեր երկրների, այնպես է ավանդաբար համեմատության հենք դիտվող երկրների համեմատությամբ,
- III. Հայաստանում համեմատաբար դժվար է որակյալ աշխատուժի ներգրավումը, բացի այդ՝ ընթացիկ աշխատուժի հմտությունները զգալիորեն զիջում են ապագա աշխատուժի հմտություններին,
- IV. որակական ցուցիչներից լավագույն արդյունքը մաթեմատիկական և բնագիտական կրթությանն է, սակայն բարձրագույն կրթության և վերապատրաստումների ընդհանրական գնահատականը շարունակում է մնալ ցածր,
- V. գիտատեխնիկական գործունեության համար անհրաժեշտ մարդկային կապիտալի մրցունակ մակարդակով հանդերձ՝ Հայաստանում ցածր է գիտահետազոտական ինստիտուտների գործունեության ընդհանուր որակը,

VI. հայաստանյան ընկերությունները տեխնոլոգիաների կլանման թույլ կարողություններ ունեն, ինչն արտահայտվում է նաև հետազոտությունների և մշակումների ոլորտում կրթական հաստատությունների հետ թերզարգացած ինստիտուցիոնալ կապերով:

3. Կրթության և գիտության բյուջետային ֆինանսավորումը Հայաստանում


3.1. Կրթության բյուջետային ֆինանսավորումը

Կրթության ոլորտում բյուջետային ծախսերը 2018-ին կազմել են 127 մլրդ դրամ, իսկ 2019թ. ծրագրային ցուցանիշը գերազանցում է 140 մլրդ դրամի սահմանաչափը: Դրանով հանդերձ, բյուջետային ծախսերի կառուցվածքում կրթության մասնաբաժինը շարունակում է կրճատվել. 2018-ին՝ 8.7%, 2019-ի համար ծրագրված մակարդակը՝ 8.6% (գծ. 3.1): Հատկանշական է, որ 2020թ. ծրագրային մակարդակը 2018թ. ծախսերը գերազանցում է մոտ 34 մլրդ դրամով, մինչդեռ 2018-ին նախորդով տասնամյա ժամանակահատվածում կրթության բյուջետային ծախսերն ավելացել են ընդամենը 20 մլրդ դրամով:



Գծ. 3.1. Կրթության բյուջետային ֆինանսավորումը ՀՀ-ում

Նույն պատկերն է նաև կրթության բյուջետային ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության պարագայում: Ցուցանիշը 2018-ին կազմել է շուրջ 2.1%, իսկ 2019-ի ծրագրային մակարդակը 2.2% է (գծ. 3.2):




ՊՃ. 3.2. Կրթության բյուջետային ֆինանսավորում/ՅԱԱ, %

ՀՀ 2014-25թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով²⁴ սույն ցուցանիշի համար 2017թ. նվազագույն թիրախ էր սահմանված 2.8% մակարդակը, 2021թ.՝ 3.3%, 2025թ.՝ 3.7%: Մինչդեռ արդեն իսկ 2017թ. թիրախային մակարդակը թերակատարվել է (փաստացի կազմել է 2.4%), իսկ 2019թ. բյուջետային ցուցանիշներով պլանավորված է ավելի ցածր մակարդակ՝ 2.1%:

Հետաքրքրական է դիտվում կրթության բյուջետային ֆինանսավորման համեմատությունն այլ հողվածներով կատարված հատկացումների հետ: Օրինակ, պետական բյուջեից կրթությանն ուղղվող ֆինանսավորման ծավալները նախաճգնաժամային տարիներին հիմնականում գերազանցել են ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին ուղղվող ֆինանսավորմանը (ՊՃ. 3.3): 2008-ից իրավիճակը տրամագծորեն փոխվել է. հանրային ծառայությունների ֆինանսավորումը կրթության ֆինանսավորման համեմատությամբ տարեցտարի առաջանցիկ աճ է արձանագրել: Վերջին մի քանի տարիներին կրթության բյուջետային ֆինանսավորման հարաբերակցությունը հանրային ծառայությունների հողվածով կատարվող ծախսերին կազմել է 40-50%, իսկ 2019թ. ծրագրային ցուցանիշներով սույն հարաբերակցությունը 45.4% է:

²⁴Հաստատվել է ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի N442-Ն որոշմամբ:




Գծ. 3.3. Կրթության բյուջետային ծախսերի հարաբերակցությունը այլ հոդվածների նկատմամբ

Պետական բյուջեի սոցիալական ծախսերի (սոցիալական պաշտպանություն, առողջապահություն և կրթություն) կառուցվածքում կրթական ծախսերի մասնաբաժինը ևս համեմատաբար մեծ չէ, վերջին տասնամյակում միջինում կազմել է 24%, իսկ 2019թ. ծրագրային ցուցանիշներով չի գերազանցում 21%-ը, նույնը՝ 2020թ. համար:

Կարելի է արձանագրել, որ ՀՀ-ում տարեցտարի նկատելի է կրթության ոլորտի բյուջետային գերակայության աստիճանական թուլացման միտումը (առնվազն՝ մի շարք այլ բյուջետային ուղղությունների համեմատությամբ):


ՀՀ բյուջեի կրթական ծախսերի կառուցվածքում գերակշռում են միջնակարգ ընդհանուր կրթությանն ուղղվող ծախսերը: 2019թ. բյուջեով այս բաղադրիչի համար նախատեսված է կրթության բյուջետային հատկացումների 40%, ընդ որում, այս ցուցանիշի մասով 2008-ի համեմատ եական փոփոխություն չի արձանագրվել (գծ. 3.4): 2018-ի համեմատությամբ, 2019թ. պետական բյուջեի ծրագրային ցուցանիշներով կրթության ծախսերի կառուցվածքում միջնակարգ ընդհանուր կրթության և տարրական կրթության մասնաբաժինների որոշակի նվազում է նախատեսված: Փոխարենը նկատելի աճ է նախատեսվում կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների տեսակարար կշռի պարագայում:



Գծ. 3.4. Պետական բյուջեի կրթական ծախսերի կառուցվածքը, %

3.2. Գիտության բյուջետային ֆինանսավորումը

Գիտության բնագավառի բյուջետային հատկացումները վերջին տարիներին գրեթե անփոփոխ են, ինչի արդյունքում ՀՆԱ նկատմամբ ցուցանիշը շարունակում է մնալ խիստ ցածր մակարդակի վրա (գծ. 3.5):



Գծ. 3.5. Գիտության բնագավառի ծախսերը Հայաստանում

Գիտության բնագավառի բյուջետային ծախսերի կառուցվածքում գերակշռում է բազային ֆինանսավորումը, որի մասնաբաժինը հատկապես 2018-ին, 2017-ի համեմատ էականորեն կրճատվել է: Փոխարենը աճել է պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման մասնաբաժինը (17.8%): Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման տեսակարար կշիռը ևս կրճատման թույլ միտումներ է արձանագրել: Ըստ էության, գիտության բնագավառի պետական ծախսերի կառուցվածքի փոփոխությունը ի ցույց է դնում պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման ուղղությամբ ծախսային գերակայությունների աստիճանական տեղաշարժման միտումը (աղյուսակ 3.1):

Աղյուսակ 3.1. Գիտության բնագավառի ծախսերի կառուցվածքը, տոկոսներով²⁵

Ֆինանսավորումը	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Բազային	62,3	72,3	72,9	72,6	70,4	69,5	69,9	69,3	64,4
Նպատակային-ծրագրային	12,8	13,3	13,3	13,4	13,1	13,0	12,9	12,8	17,8
Պայմանագրային (թեմատիկ)	18,6	8,7	8,4	9,7	11,8	9,4	9,5	10,5	9,1

Կրթության և գիտության բնագավառի բյուջետային ֆինանսավորման բնութագրիչների ընդհանրական վերլուծության արդյունքում հարկ է արձանագրել,

- I. հետճգնաժամային ժամանակահատվածում շոշափելի են անբարենպաստ զարգացումները, որոնք տարեցտարի խորացման միտումներ են ցուցաբերում,
- II. ՀՀ-ում տարեցտարի նկատելի է կրթության ոլորտի բյուջետային գերակայության աստիճանական թուլացման միտումը (առնվազն՝ մի շարք այլ բյուջետային ուղղությունների համեմատությամբ),
- III. կրթության բյուջետային ծախսերի 2020թ. ծրագրային մակարդակը 2018թ. ծախսերը գերազանցում է մոտ 34 մլրդ դրամով, մինչդեռ 2018-ին նախորդով տասնամյա ժամանակահատվածում կրթության ծախսերն ավելացել են ընդամենը 20 մլրդ դրամով,
- IV. գիտության բնագավառի պետական ծախսերի կառուցվածքի փոփոխությունը ի ցույց է դնում պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման ուղղությամբ ծախսային գերակայությունների աստիճանական տեղաշարժման միտումը,
- V. կրթության և գիտության բյուջետային ֆինանսավորման բացարձակ և հատկապես՝ հարաբերական ցուցանիշները որակական տեղաշարժ չեն

²⁵Աղբյուրը՝ համապատասխան տարիների ՀՀ պետական բյուջեի մասին օրենքները:

գրանցել և գտնվում են մարդկային կապիտալի զարգացման վրա ազդեցության կարողունակության առումով անթույլատրելի ցածր մակարդակի վրա:

3.3. Կրթության ֆինանսավորումը և ակնկալվող արդյունքները միջնաժամկետ հատվածում (2020-2022թթ.)

2020-2022թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը այն ուղենիշն է, որով ընթանալու է երկրի զարգացումն առաջիկա երեք տարիների ընթացքում: Այս առումով հետաքրքրական է կրթության և գիտության ոլորտների մասով սահմանված թիրախների դիտարկումը, դրանց իրագործելիության գնահատումը:

Ստորև կրթության և գիտության ոլորտների միջնաժամկետ ուղենիշերն ու թիրախները դիտարկվել են ըստ բյուջետային հիմնական ծրագրերի:

«Հանրակրթություն» ծրագրի միջնաժամկետ ուղենիշերն ու թիրախներն են.

- ▶ ապահովել դպրոցահասակ երեխաների պարտադիր կրթության՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքը՝ օրենսդրությամբ սահմանված չափորոշիչների և ծրագրերի շրջանակում:
- ▶ ծրագրի թիրախը՝ միջնաժամկետ հատվածում սովորողների համախառն ընդգրկվածության ցուցանիշի 99% ապահովում
- ▶ սովորողներին մատուցվող ծառայությունների որակի և մատչելիության ապահովում,
- ▶ հավասար մեկնարկային պայմաններ ստեղծելու համար հանրակրթական դպրոցների հենքի վրա ստեղծված նախադպրոցական ծառայությունների ֆինանսավորում

«Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն» ծրագրի շրջանակներում միջնաժամկետ հատվածում ակնկալվում է՝

- ▶ ՆՄՄԿ համակարգում տվյալ տարում ընդունված սովորողների թիվը մասնագիտական կրթության (նախնական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական) համակարգում տվյալ տարում ընդունված սովորողների ընդհանուր թվում 43.4%-ից հասցնել 46%-ի,

- ▶ ՆՄՄԿ համակարգում տվյալ տարում ընդունված սովորողների թիվը հիմնական և միջնակարգ դպրոցների շրջանավարտների թվում 24.75%-ից հասցնել 27%-ի,
- ▶ Ուսումնառած մասնագիտության գծով ուսումնառության ավարտից հետո 6 ամսվա ընթացքում զբաղվածություն ունեցող շրջանավարտների թիվը 38.3%-ից հասցնել 41.0%-ի,
- ▶ Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ ուսումնառությունը բուհերում շարունակած շրջանավարտների թիվը 17%-ից հասցնել 19%-ի:

Ուշագրավ է, որ չնայած թիրախներում գերակշռում են քանակական բնութագրիչները, սակայն կարևոր է, որ դրանց շարքում առկա է, օրինակ, կրթական հաստատությունների շրջանավարտների զբաղվածության հարաբերական մակարդակն արտահայտող ցուցիչ:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն» ծրագրի առանցքային թիրախներն են.

- ▶ ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցմամբ սովորող ուսանողների տեսակարար կշիռը բարձրագույն կրթություն ստացողների մեջ 18%-ից հասցնել 24%-ի,
- ▶ սոցիալապես անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ուսանողների տեսակարար կշիռն ընդհանուր ուսանողների թվաքանակի մեջ 4.1%-ից՝ 5.0%-ի:

Ծրագրի թիրախներն, ըստ էության, միտված են բարձրագույն և հետբուհական կրթության մատչելիության բարձրացմանը: Մյուս կողմից, թիրախավորված չէ բարձրագույն կրթության որակը, մրցունակությունը, ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցումը և այլն, որոնք չնայած դիտվում են բուհերի ակադեմիական ազատության ածանցյալներ, սակայն դրանք ևս պետք է որոշակի համակարգային թիրախավորման ենթարկվեն:

«Ապահով դպրոց» ծրագիր.

- ▶ 2022 թվականին ունենալ աղետներին դիմակայելուն պատրաստ բարելավված միջավայրով 51 դպրոցներ (հետագայում միջոցառումը կրելու է շարունակական բնույթ),
- ▶ 2023 թվականին ապահովել հանրապետության բոլոր տարրական դասարանների և նախակրթարանների սովորողներին կայուն դպրոցական սննդով,
- ▶ ապահովել հանրապետության գործող բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններին համացանցի հասանելիությամբ

Ծրագրի թիրախները բխում են դրա բովանդակությունից, արտացոլում են կառավարության հանձնառությունը՝ մեծացնել բյուջետային ծախսերի կառուցվածքում կապիտալ բնույթի ծախսերի բաղադրիչը:

«Կրթության որակի ապահովում» ծրագրի մասով միջնաժամկետ հատվածի համար սահմանվել են հետևյալ թիրախները.

- ▶ միջազգային համաթվերում (Համընդհանուր տնտեսական ֆորում, 1-7 բալային համակարգ), կրթության համակարգի որակի գնահատման 3.7 բալլը հասցնել 5-ի, իսկ տարրական դպրոցների որակի գնահատման 4.1 բալլը՝ 6-ի,
- ▶ պետական միասնական քննությունների արդյունքներում հայոց լեզու և հայ գրականություն, մաթեմատիկա առարկաներից 1-20 բալային համակարգում համապատասխանաբար՝ 12.9 և 11 բալերը 2021 թվականին հասցնել 15-ի,
- ▶ ազգային և միջազգային ստուգատեսների (TIMSS) արդյունքներում մաթեմատիկա և բնագիտական առարկաներից 444-481 գրանցված բալերը 2020 թվականին հասցնել 500-ի,
- ▶ հանրակրթական դպրոցների կամավոր ատեստավորմանը մասնակցած ուսուցիչների թիվը 2023 թվականին հասցնել 45%-ի:

Ընդհանուր առմամբ, ծրագրի միջնաժամկետ թիրախներում առանցքայինը կրթության որակական բնութագրիչն է՝ քանակական ցուցանիշների պրիզմայով այն դիտարկելը: Պետք է նկատել, որ թիրախները բավականին հավակնոտ են, կարճ ժամանակահատվածի համար կտրուկ աճ են ենթադրում: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ կրթության ոլորտում փոփոխությունները դանդաղորեն կենսագործվելու և շոշափելի արդյունք տալու հակում ունեն, ուստի սահմանված

թիրախների իրականացումը, մեր կարծիքով, խնդրահարույց է և բավականին ռիկային:

«Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» ծրագիր.

- ▶ հաշմանդամություն ունեցող աշակերտների համար հարմարեցված ենթակառուցվածքներ և կյուլթեր ունեցող դպրոցների թիվը 25%-ից 2021 թվականին հասցնել 100%-ի,
- ▶ հանրակրթական դպրոց հաճախող կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների տեսակարար կշիռը կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների ընդհանուր թվաքանակի մեջ 14%-ից 2021 թվականին հասցնել 100%-ի:

Ծրագրի միջոցառումների թիրախները բխում են դրա բովանդակությունից, հայտեցակարգային նպատակադրումից և ընդհանուր տրամաբանությունից:

Վերը դիտարկված թիրախների կենսագործումը հնարավոր է համարժեք ծախսային քաղաքականության իրականացման պարագայում: Արդ, ծախսային միջնաժամկետ գերակայությունների ճշգրիտ սահմանումը կրթության ծրագրային թիրախների կյանքի կոչման առանցքային նախապայման են հանդիսանում:

Դիտարկվող ՊՄԺԾԾ-ում սահմանված են հետևյալ ծախսային գերակայությունները.

- ▶ Ուսուցիչների նվազագույն աշխատավարձի բարձրացում՝ այն հասցնելով շնչային ՀՆԱ-ին
- ▶ Կրթության բովանդակային բարեփոխումներ. հատուկ կարևորվում են STEM առարկաները, որոնց արդյունքում ձեռքբերված կարողություններն ու գիտելիքներն առանցքային են ժամանակակից աշխարհում: Կշարունակվի ինժեներական լաբորատորիաների հիմնումն ու հետագա գործարկումը հանրակրթական դպրոցներում:
- ▶ Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավում
- ▶ Համընդհանուր ներառական կրթության ընդլայնում

- ▶ Դպրոցական երեխաներին սննդով ապահովում. «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիր, մինչև 2023թ.՝ 108 հազար շահառուների ընդգրկում: Ներկայումս նախատեսված է 60 հազար, փաստացի օգտվում է 49 հազարը
- ▶ Բարձրագույն կրթության մատչելիության մեծացումը՝ օժանդակելով խոցելի խմբերի երիտասարդներին՝ ընդլայնելով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման միջոցառման շահառուների խմբերը

Ձևակերպված ծախսային գերակայությունները, ընդհանուր առմամբ, համահունչ են սահմանված ծրագրային թիրախներին: Այնուհանդերձ, տվյալ պարագայում խնդիրը ինչպես որակի, այնպես էլ ֆինանսավորման քանակային ծավալների մեջ է:

Աղյուսակ 3.2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կատարվելիք ծախսերը միջնաժամկետ հատվածում

	2020	2021	2022
Ծախսը, մլն դրամ	179,041.5	197,484.0	214,019.0
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ, %	2.6	2.6	2.6
տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում, %	9.6	9.7	9.6

Արդյո՞ք կրթության և գիտության ֆինանսավորման հարաբերական ցուցանիշներով Հայաստանը կկարողանա միջնաժամկետ հատվածում որոշ առաջընթաց արձանագրել և որոշակի չափով կրճատել միջինից բարձր եկամտային խմբում գտնվող զարգացող երկրների՝ միջին մակարդակից ունեցած էական տարբերությունները: Այս հարցի պատասխանը, ամենայն հավանականությամբ, բացասական է, քանզի կրթության և գիտության, նաև՝ հարակից ոլորտների բյուջետային ֆինանսավորումն առաջանցիկ չի լինելու ոչ ՀՆԱ աճի, ոչ էլ բյուջետային ծախսերի աճի նկատմամբ: Արդյունքում, նշված ոլորտների բյուջետային ֆինանսավորման հարաբերական ցուցանիշները դիտարկվող միջնաժամկետ հատվածում չեն փոխվի (աղյուսակ 3.2), ինչը լուրջ մտահոգություններ կարող է առաջ բերել՝ միջնաժամկետ հեռանկարում կրթության և գիտության ծրագրային թիրախների լիարժեք իրագործման մասով:

3.4. Կրթության և գիտության բյուջետային ծախսերի դիտարկումը՝ 2020թ. պետական բյուջեի նախագծի համապատկերում

2020թ. պետական բյուջեի մասին օրենքի նախագծում կրթության և գիտության ոլորտների մասով նախատեսվող ծախսը կազմում է 158,1 մլրդ դրամ, ինչը 2019-ի համեմատ 12,7% աճ է ենթադրում: Կրթության բյուջետային ծախսերի ծրագրային կառուցվածքում էական փոփոխություններ են նախատեսվում, մասնավորապես՝

- ▶ «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն» ծրագրի գծով նախատեսվել է 14,325.5 մլն դրամ՝ 2019 թվականի 11,685.4 մլն դրամի դիմաց: Աճը կազմել է 22,6%:
- ▶ Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավման համար հատկացվելու է 2,2 մլրդ դրամ (2019-ին՝ 1,4 մլրդ դրամ)
- ▶ Ընդհանրապես, կրթական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով ծախսերը նախատեսվել են 9,763.6 մլն դրամի չափով /2019 թվականի համար հաստատված ցուցանիշը 2,546.0 մլն դրամ է:
- ▶ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի» գծով 2020թ. համար նախատեսվել է 10,6մլրդ դրամ՝ 2019 թվականի 10,3 մլրդ դրամի դիմաց: Ծախսերի աճն աննշան է՝ 2,5 տոկոս:
- ▶ «Հանրակրթության ծրագրի» գծով նախատեսվել է 98,1 մլրդ դրամ՝ 2019 թվականի 87,2 մլրդ դիմաց: Ծախսերի աճը՝ 12,4 տոկոս:
- ▶ 2020թ. պետական բյուջեի նախագծով մանկավարժների աշխատավարձի ֆոնդի գծով ծախսերի աճը նախատեսվել է 9,7 մլրդ դրամի չափով, որից 5,9 մլրդ դրամը՝ աշխատավարձերի բարձրացման գծով նախատեսված 10 տոկոս աճն է:
- ▶ Հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված երեխաների սննդով ապահովման գծով նախատեսվել է 1,66 մլրդ դրամ՝ 2019թ համեմատ 0,5 մլրդ դրամով ավելի: 2020 թվականին սննդով կապահովվեն 7 մարզերի պետական հանրակրթական դպրոցների

տարրական դասարաններում և դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված, շուրջ 65.9 հազար երեխաները:

- ▶ «Հանրակրթության ծրագրի» շրջանակներում ներառական կրթության միջոցառումների գծով նախատեսվել է 0,6 մլրդ դրամ, որը 2019-ի մակարդակից պակաս է 0,46 մլրդ դրամով: Ծախսերը նախատեսվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, միջին տարեկան հաշվարկով, շուրջ 1.0 հազար երեխաների ուսուցման կազմակերպման գծով՝ 2019 թվականի 1.9 հազարի դիմաց:
- ▶ «Հանրակրթության ծրագրի» շրջանակներում «Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում» միջոցառման գծով 2020թ. նախատեսվում է հատկացնել 780.3 մլն դրամ՝ 2019թ. 1,077.9 մլն դրամի դիմաց. ծախսերի նվազումը կազմել է շուրջ 300 մլն դրամ:
- ▶ «Դպրոցներում STEM կրթության և ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացում» միջոցառման գծով նախատեսվել է 671.7 մլն դրամ՝ 2019թ. 352.2 մլն դրամի դիմաց. ծախսերի աճը կազմել է 319.5 մլն դրամ: Ծախսերը նախատեսվել են ռոբոտաշինության 30 խմբակների և ինժեներական 676 լաբորատորիաների խմբակավարների վարձատրության գծով՝ 2019թ. 74 խմբակների և ինժեներական 348 լաբորատորիաների դիմաց:
- ▶ «Գիտական ենթակառուցվածքի արդիականացում» միջոցառման գծով նախատեսվել է 7,2 մլրդ դրամ՝ 2019թ. 8,6 մլրդ դրամի դիմաց: Առանձին միջոցառումների գծով 10-15 տոկոսի չափով նվազեցումներ են նախատեսվում:
- ▶ «Ապահով դպրոց» ծրագրի գծով նախատեսվել է 7,6 մլրդ դրամ՝ 2019թ. 1,2 մլն դրամի դիմաց: Ծախսերի աճը կազմում է 6,4 մլրդ դրամ: Մի կողմից նվազել է «Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավում» միջոցառման գծով հատկացումը, 2020-ին նախատեսվում է 0,6 մլրդ դրամ, իսկ «Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների

- մոդուլային շենքերի կառուցում» միջոցառման գծով նախատեսվում է ավելացում, իսկ ֆինանսավորումը կկազմի 6,9 մլրդ դրամ:
- ▶ «Կրթության որակի ապահովում» ծրագրի գծով նախատեսվել է 7,6 մլրդ դրամ 2019թ. 9,8 մլրդ դրամի դիմաց:
 - ▶ 2020թ. «Համաշխարհային բանկի կողմից իրականացվող «Կրթության բարելավում» վարկային ծրագիր» և «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավման ծրագիր» ծրագրի շրջանակներում կապիտալ ներդրումներ ավագ, միջնակարգ և հիմնական դպրոցներում և կրթության ոլորտի կազմակերպություններում /ԿՏԱԿ/» միջոցառումների գծով նախատեսվել է 3,8 մլրդ դրամ, որից վարկային միջոցները՝ 3,0 մլրդ դրամ:
 - ▶ Մինևոյն ժամանակ, «Ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը» միջոցառման գծով՝ նախատեսվում է 1,7 մլրդ դրամ, նախորդ տարվա համեմատ՝ 833.4 մլն դրամով ավելի:
 - ▶ Էականորեն կրճատվել են այլ միջոցառումների գծով հատկացումները . նախատեսվում է 0,5 մլրդ դրամ, 2019-ին կազմել է 3,7 մլրդ դրամ
 - ▶ «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» ծրագրի գծով նախատեսվել է 2,2 մլրդ դրամ, 2019ին նախատեսվել էր 0,6 մլրդ դրամ: Նշված աճից շուրջ 0,5 մլրդ դրամը «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումներ» միջոցառման գծով է՝ համընդհանուր ներառական կրթության անցմամբ պայմանավորված, հատուկ կրթական հիմնարկների՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների վերանվանման հետ կապված:
 - ▶ «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառական դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» նոր միջոցառման գծով նախատեսվել է 165.5 մլն դրամ:

- ▶ «Կրթության ոլորտում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության զարգացում» ծրագրի գծով նախատեսվել է 413.9 մլն դրամ՝ 2019թ. 165.8 մլն դրամի դիմաց:

Ամփոփում

- I. 2020թ. կրթության ոլորտում ծախսային գերակայությունները ուղղված են լինելու կրթական օբյեկտների հիմնանորոգմանը, ուսուցիչների աշխատավարձի որոշակի բարձրացմանը, ներառական կրթության մասշտաբների ընդլայնմանը, տեխնիկական կրթության ուժեղացմանը միտված ենթակառուցվածքների հզորացմանը,
- II. գիտության ոլորտում հատկացումների շոշափելի փոփոխությունն չկա, ավելին՝ գիտական ենթակառուցվածքների արդիականացում ծրագրով, նաև՝ մի շարք այլ ծրագրերով ֆինանսավորման էական կրճատում է նախատեսվում,
- III. նկատելի է գիտության ոլորտում պետության ծախսային քաղաքականության ուղենիշերի անհստակություն, գիտության պետական ֆինանսավորման ուղղությամբ հետագա անելիքների անորոշություն, արդյունավետության բարձրացման գերակայության՝ գիտության ոլորտում կատարվող միջոցառումների առանձնահատկություններից չբխող պարզունակ տեղայնացում:

4. Արդյունավետության չափորոշիչները կրթության ոլորտում

4.1. Ընդհանուր նկատառումներ

Արդյունավետության չափորոշիչը փոփոխական է, որը քանակապես արտահայտում է գործընթացի կամ համակարգի արդյունավետությունը՝ տրված թիրախային նպատակի նկատմամբ ²⁶ : Արդյունավետության չափորոշիչները առանցքային դերակատարում ունեն կառավարչական որոշումների կատարման տեղեկատվական հենքն ու հիմնավորվածություններն ապահովելու գործում ²⁷ : Կատարողականի գնահատման համակարգը պետք է կենտրոնանա գործընթացների և ոչ թե ամբողջ կազմակերպության կամ կազմակերպական միավորների վրա²⁸:

Արդյունավետության չափորոշիչները, ըստ էության, քանակական բնութագրիչներ են, որոնք հետազոտվող ոլորտների վերաբերյալ տեղեկատվություն և վիճակագրություն են տրամադրում, հնարավորություն են տալիս իրականացնել դրանց ստատիկ և դինամիկ համեմատություններ՝ հիմնվելով ընդհանրական չափորոշիչների վրա և տեղեկատվություն են տալիս սահմանված նպատակների իրագործման աստիճանի վերաբերյալ ²⁹ : Արդյունավետության չափորոշիչների օգտակարության կարևոր նախապայման է հանդիսանում գնահատվող երևույթի կամ ծառայության նպատակի, թիրախների ու խնդիրների հստակ նկարագրությունը³⁰:

Արդյունավետության չափորոշիչները պետք է բավարարեն հետևյալ երկու կարևոր բնութագրիչների.

1. տեսականորեն սահմանված և բացատրված լինեն, հստակորեն նկարագրեն գնահատվող երևույթի այս կամ այն դիտակետը,

²⁶ Lohman, C., Fortuin, L., & Wouters, M. (2004). Designing a performance measurement system: A case study.

²⁷ Gunasekaran, A., & Kobu, B. 2007. Performance measures and metrics in logistics and supply chain management: a review of recent literature (1995–2004) for research and applications. *International journal of production research*, vol. 45, no. 12, pp. 2819-2840.

Stricker, N., Echsler Minguillon, F., & Lanza, G. 2017. Selecting key performance indicators for production with a linear programming approach. *International Journal of Production Research*, pp. 1-13.

Papakiriakopoulos, D. 2006. Performance measurement in supply chain networks. *Manag-ing Dynamic Networks*, pp. 211-237.

²⁸ Kueng, P. (2000). Process performance measurement system: a tool to support process-based organizations.

²⁹ D. Chalmers, "Defining quality indicators in the context of quality models," (2008).

³⁰ K. Rowe, "Analysing and Reporting Performance Indicator Data: Caress' the data and user beware!," ACER, 2004.

2. կոչտ լինեն ելակետային տեղեկատվության սահմանափակումների նկատմամբ³¹:

Արդյունավետության չափորոշիչների կիրառելիության և նպատակահարմարության վճռական բնութագրիչ կամ հատկանիշ է հանդիսանում գնահատվող ոլորտում առաջընթացի առանցքային գործոններն արտացոլելու և նկարագրելու կարողությունը³²:

Որպես կանոն, արդյունավետության չափորոշիչները դասակարգվում են քանակականի և որակականի³³:

Քանակական ցուցիչներ.

- մուտքի ցուցիչներ (input), որոնք արտացոլում են ծրագրերում, գործունեության մեծ կամ մատուցվող ծառայություններում ներգրավված մարդկային, ֆինանսական և այլ նյութական ռեսուրսները,
- արդյունքի ցուցիչներ (output) – նկարագրում են ստեղծված ապրանքների կամ ծառայությունների քանակը,
- ազդեցության ցուցիչներ (impact) – արտացոլում են նախագծի կամ ծրագրի ամփոփ և երկարաժամկետ ազդեցությունը:

Որակական ցուցիչներ.

- վերջնարդյունքի ցուցիչներ (outcome) - բնութագրում են ծրագրի, գործողության կամ ծառայության որակը, արտացոլում են շահառուների վրա դրանց ուղղակի, կարճաժամկետ ազդեցությունը,
- գործընթացի ցուցիչներ (process) –ներառում են ծրագրերի, գործողությունների կամ ծառայությունների մատուցման (իրականացման) համար օգտագործված միջոցները,
- ազդեցության ցուցիչներ – նկարագրում են ռազմավարական նպատակների իրագործման ուղղությամբ այնպիսի առաջընթացը, որը ոչ նյութական բնույթ ունի և համեմատաբար պակաս շոշափելի է:

Արդյունավետության չափորոշիչների ընտրության գործընթացը բաղկացած է երեք փուլերից.

³¹ C. Propper and D. Wilson, “The Use and Usefulness of Performance Measures in the Public Sector,” *Oxford Rev. Econ. Policy*, vol. 19, no. 2, pp. 250–267, (2003).

A. Bonaccorsi, C. Daraio, B. Lepori, and S. Slipers,ter, “Indicators on individual higher education institutions: addressing data problems and comparability issues,” *Res. Eval.*, vol. 16, no. 2, pp. 66–78, (2007).

³² C.-S. Wu and R. J.-C. Cheng, “A study on Key Performance Indicators (KPIs) for Basic Education in Taiwan,” in *International Conference: Innovative Research in a Changing and Challenging World*, , no. December, (2012).

³³ D. Chalmers, “Defining quality indicators in the context of quality models,” (2008).

1. առաջին փուլը վերլուծական է, որի ընթացքում նույնականացվում են այն մարտահրավերները, որոնք հատուկ ուշադրություն են պահանջում և պետք է դիտարկվեն,
2. երկրորդ փուլն ավելի առարկայական է, դրա ընթացքում սահմանվում են արդյունավետության չափորոշիչները և կապակցվում են առաջին փուլում վերհանված մարտահրավերներին,
3. երրորդ փուլում ընտրված չափորոշիչները ստանդարտացվում և ներկայացվում են հաշվառման, հաշվարկման և գնահատման առումով հարմար տեսքով (այլ կերպ՝ փաստաթղթավորվում են):

Կրթության ոլորտում արդյունավետության չափորոշիչների կիրառությունը, հնարավորություն է տալիս չափել սովորողների ուսման վերջնարդյունքները, ընդլայնել կրթական համակարգում ներգրավվածությունը և կիրառել արդարացի մուտքի քաղաքականություն (սովորողները հնարավորություն են ստանում ընտրել ավելի թիրախային ուսումնական հաստատություն), իրականացնել կատարողականի և արդյունավետության վրա հիմնված ուսումնական հաստատությունների վարկանիշավորում, իրականացնել կրթական հաստատությունների և դրանցում իրականացվող հիմնական գործառնությունների (ուսուցում, հետազոտություն, գիտելիքի փոխանցում) մշտադիտարկում և գնահատում, իրականացնել արդյունքների վրա հիմնված բյուջետավորում, ֆինանսավորում և հաշվետվողականություն:

Կրթության ոլորտում առավել լայն կիրառություն ունեն արդյունավետության չափորոշիչների հետևյալ խմբերը.

1. ռեսուրսների տրամադրման և օգտագործման չափորոշիչներ,
2. կրթական հաստատություններ սովորողների մուտքի հարաբերական ցուցանիշներ,
3. կրթական բոլոր մակարդակներում ներգրավվածության հարաբերական ցուցանիշները, մասնակցության խոչընդոտները, դպրոցից դուրս մնացած երեխաների նկարագիրը,
4. կրթությանն ուղղվող ՀՆԱ մասնաբաժինը,
5. կրթական մակարդակներից յուրաքանչյուրում հարաբերական ծախսերը՝ մեկ սովորողի հաշվով,
6. դասարանների չափերը, ուսուցիչ/աշակերտ հարաբերակցությունը,

7. ուսուցիչների վերապատաստումը, մասնակցությունը մասնագիտական զարգացման ծրագրերին,
8. կրթական առաջընթացի ցուցիչները և սովորողների առաջադիմության վրա ազդող գործոնների գնահատականները,
9. հատուկ կարիք ունեցող սովորողներին կրթական ծառայությունների մատուցման քանակի և որակի չափորոշիչները:

4.2. Հանրակրթության ոլորտի արդյունավետության չափորոշիչների առաջարկվող համակարգը

Մեր կողմից մշակվել է հանրակրթության ոլորտում արդյունավետության չափորոշիչների համակարգ: Չափորոշիչները ներկայացված են ըստ հետևյալ խմբերի.

1. դպրոցներ,
2. հազեցվածություն,
3. ֆինանսներ,
4. ընդգրկվածություն,
5. ուսուցիչներ,
6. արդյունքներ:

Արդյունավետության չափորոշիչները, ըստ յուրաքանչյուր խմբի, առավել հանգամանորեն ներկայացված են սույն հաշվետվության **Առաջարկություն** բաժնում:

4.3. Արդյունքային չափորոշիչների կիրառությունը ՀՀ բյուջետային գործընթացում

ՀՀ պետական բյուջեի մասին 2019թ. օրենքով, նաև՝ 2020թ. օրենքի նախագծով սահմանված են բյուջետային ծրագրերի իրականացման արդյունքային չափորոշիչներ, որոնք հնարավորություն են տալիս մշտադիտարկել բյուջետային ֆինանսավորմամբ կատարվող ծրագրերի ընթացքն ու արդյունքները: Կրթության ոլորտում սահմանված արդյունքային չափորոշիչները մեծ թիվ են կազմում, դրանք խմբավորված են ըստ հիմնական ծրագրերի և մանրամասնեցված են ծրագրային միջոցառումների մակարդակով: Արդյունքային չափորոշիչների կիրառությունն, ըստ եռության, բյուջետային գործընթացի արդյունավետության բարձրացմանը միտված կարևոր քայլ հանդիսանալով հանդերձ, մեզանում դեռևս գտնվում է սաղմային վիճակում, ինչի վառ վկայություն է այն հանգամանքը, որ կոնկրետ ծրագրերի ու միջոցառումների համար սահմանված արդյունքային չափորոշիչները գլխավորապես քանակական բնույթ ունեն, գնահատում են միջոցառման միայն քանակական ասպեկտը (միջոցառման շրջանակներում ֆինանսավորվող կրթական հաստատությունների թիվը, ուսանողների թվաքանակը, դպրոցներում տեղայնացված նորարարական մանկավարժական ծրագրերի թիվը, անցկացված օլիմպիադաների թիվը, ռոբոտաշինության խմբակների և ինժեներական լաբորատորիաների թիվը, կրթական տվյալ ծառայությունից օգտվողների թիվը,

ծախսերի փոխհատուցում ստացող երեխաների թիվը և այլն): Այս տեսանկյունից, միջոցառման իրականացման որակական կողմն ընդհանրապես չի գնահատվում, ինչը Էականորեն սահմանափակում է կրթության և գիտության ոլորտում բյուջետային ծախսերի արդյունավետության լիարժեք ու ամբողջական գնահատման հնարավորությունը: ՀՀ բյուջետային գործընթացում ներկայումս կիրառվող մոտեցումը թույլ է տալիս գնահատել ծախսերի միայն տեխնիկական արդյունավետությունը, իսկ արդյունավետության մյուս հարթություններն ու ասպեկտները մնում են չբացահայտված: Այս համատեքստում, կարևոր նշանակություն ունի արդյունքային չափորոշիչների շրջանակի ընդլայնումը, կրթության ոլորտում կատարվող միջոցառումների տնտեսական, սոցիալական Էֆեկտը լիարժեքորեն նկարագրող արդյունքային չափորոշիչների կիրառությունը³⁴:

Բացի այդ, արդյունքային ցուցիչների լայն շրջանակի առկայությունը թիրախային կառավարչական որոշումների կայացման հարցում որոշ դժվարություններ է ստեղծում: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է դիտվում արդյունքի մասնակի ցուցիչները ինտեգրել մեկ միասնական կամ մի քանի խմբային ցուցիչներում, որոնք էլ, ըստ էության, կհանդիսանան արդյունավետության հիմնական ցուցիչների գնահատականները կամ արժեքները: Հաջորդիվ ներկայացված են այս խնդրի լուծման ուղղությամբ մեր մոտեցումները, որոնք ենթադրում են կլաստերային և գործոնային վերլուծության միջոցով արդյունքային ցուցանիշների ընդհանրացում՝ կոնկրետ վիճակագրական տվյալների հիման վրա:

4.4. Բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատումը կլաստերային և գործոնային վերլուծության մեթոդներով

Կրթության և գիտության ոլորտների քանակական և որակական բնութագրիչները մեծ թիվ են կազմում և դրանց հիման վրա դժվար է ամբողջական պատկեր ստանալ ոլորտների ընդհանուր վիճակի, առանձնահատկությունների կամ հիմնարար ուղղվածության վերաբերյալ: Այս տեսանկյունից, մասնակի ցուցանիշների ընդհանրացմանը միտված վիճակագրական մեթոդների ու վերլուծությունների կիրառությունը արդիական խնդիր են հանդիսանում: Նշված նպատակով մեր կողմից կիրառվել է կլաստերային և գործոնային վերլուծության գործիքակազմը, վերլուծության արդյունքները հակիրճ ներկայացված են ստորև:

³⁴ Այս ուղղությամբ Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ-ն իր համալիր առաջարկությունները ներկայացրել է «Հայաստանում կրթության բյուջետային ծախսերի արդյունավետության մոնիթորինգ և գնահատում» ամփոփ հաշվետվության մեջ, որը հրապարակվել է 2018թ. հոկտեմբերին:

Կլաստերացումը կատարվել է ըստ կրթության և գիտության որակական ու քանակական ասպեկտները բնութագրող 11 մասնակի արդյունքային ցուցիչների: Նախ արվել է աստիճանակարգային կլաստերացում, որի հիման վրա դուրս է բերվել կլաստերների օպտիմալ թիվը. 5 կլաստեր: Այնուհետև կլաստերացումը շարունակվել է k-միջինների մեթոդով, որի արդյունքները բերված են աղյուսակներ 4.1 և 4.2-ում:

Աղյուսակ 4.1-ում ամփոփված են կլաստերների վերջնական կենտրոնները՝ ըստ կլաստերացման համար կիրառված ցուցանիշների: Վերջնական կենտրոնների վերլուծությունից բխում է, որ կլաստեր 1-ում կրթության, գիտատեխնիկական և հետազոտական գործունեության հիմնական բնութագրիչները հիմնականում միջինից ցածր մակարդակ են գրանցել, սակայն՝ կրթության քանակական ցուցիչի բավականին բարձր արդյունքի պայմաններում: Ստացվում է, որ այս խմբում ընդգրկված երկրներում կրթության քանակական կատարողականը բարվոք վիճակում է, սակայն դա կրթության և գիտության ոլորտներում համարժեք որակի ու ցանկալի արդյունքի չի հանգեցնում: Ըստ եռթյան, այստեղ գործ ունենք կրթական ռեսուրսների ոչ բավարար արդյունավետ օգտագործման հետ:

Աղյուսակ 4.1. Կլաստերների վերջնական կենտրոնները

Ցուցանիշը	Կլաստերը				
	1	2	3	4	5
Կառավարման արդյունավետությունը	3,1526	4,0721	3,1192	3,2053	4,8154
Կրթական առաջին մակարդակի որակը	3,6742	4,5435	2,8554	4,6892	5,5507
Կրթական համակարգի որակ	3,2339	4,4725	2,9408	3,8549	5,2051
Մաթեմատիկական և բնագիտական կրթության որակը	3,8551	4,5483	2,9418	4,6302	5,3559
Կրթության որակը	3,7578	4,5717	3,1815	4,5429	5,4532
Տաղանդների օգտագործման արդյունավետությունը	3,4628	3,9973	3,2855	4,2260	5,1930
Ինովացիա կատարելու կարողությունը	3,9129	4,4498	3,7260	4,6934	5,3674
Գիտահետազոտական ինստիտուտների որակը	3,6780	4,1620	2,8648	4,7447	5,6645
Հետազոտությունների և մշակումների ոլորտում բուհ-արտադրություն համագործակցությունը	3,1804	4,0719	2,8459	3,8545	5,0246
Գիտնականների և ինժեներների առկայությունը	3,8521	4,4844	3,5488	4,2933	4,9756
Կրթության քանակական բնութագրիչը	5,7122	4,4294	2,8588	6,5245	6,5667

Կլաստեր 2-ում և 3-ում քանակական ու որակական բնութագրիչների միջև որոշակի համապատասխանություն կա: Պարզապես կլաստեր 2-ում կրթության քանակական բնութագրիչը ավելի բարձր է, քան կլաստեր 3-ում: Հետաքրքրական է, որ արդյունքային և որակական ցուցանիշների մասով կլաստերներ 2-ում և 4-ում ընդհանրություններ կան, սակայն այն տարբերությամբ, որ կլաստեր 4-ում նույն արդյունքը ապահովվել է ավելի շատ կրթական ռեսուրսների կիրառմամբ:

Կլաստեր 5-ը անվիճելի առաջատար է որակական և արդյունքային բնութագրիչներով, ընդ որում՝ Եականորեն գերազանցում է նաև կլաստեր 4-ին, այն դեպքում, երբ քանակական բնութագրիչը երկուսի դեպքում էլ գրեթե նույնական է:

Արված դիտարկումները հիմք ընդունելով՝ կարելի է կլաստերներին տալ հետևյալ պայմանական բնութագրիչները.

- կլաստեր 1. անբավարար որակ՝ զգալի քանակի պայմաններում,
- կլաստեր 2. համարժեք որակ՝ զգալի քանակի պայմաններում,
- կլաստեր 3. համարժեք որակ՝ ցածր քանակի պայմաններում,
- կլաստեր 4. միջին որակ՝ միջինից բարձր քանակի պայմաններում,
- կլաստեր 5. բարձր որակ՝ բարձր քանակի պայմաններում:

Նշված բնութագրիչները կարելի է դիտարկել որպես ստացված խմբերում կրթական ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատականներ: Աղյուսակ 4.2-ում ներկայացված է երկրների բաշխումն ըստ ստացված 5 կլաստերների:

Աղյուսակ 4.2. Երկրների բաշխումն ըստ կլաստերների

Կլաստեր 1	Կլաստեր 2	Կլաստեր 3	Կլաստեր 4	Կլաստեր 5
Ալբանիա	Չինաստան	Պակիստան	Ֆրանսիա	Շվեյցարիա
Թաիլանդ	Ադրբեջան	Ուզանդա	Ավստրիա	Ֆինլանդիա
Ֆիլիպիններ	Հնդկաստան	Գվատեմալա	Պորտուգալիա	Սինգապուր
Հայաստան	Ինդոնեզիա	Բանգլադեշ	Սլովենիա	Նիդեռլանդներ
Ղազախստան	Բահրեյն	Նիգերիա	Կորեա	Գերմանիա
Հվ. Աֆրիկա	Լիբանան	Սվազիլենդ	Չեխիա	Նոր Չեխիան
Մոնտենեգրո	Տաջիկստան	Եգիպտոս	Լիտվա	Իսրայել
Չիլի	Ճամայկա	Պարագվայ	Իտալիա	Բելգիա
Բուլղարիա		Նիկարագուա	Ռուսաստան	Շվեդիա
Սերբիա			Իսպանիա	Նորվեգիա
Իրան			Ուկրաինա	Կանադա
Հունգարիա			Լեհաստան	Իռլանդիա
Ռումինիա			Լատվիա	Դանիա
Արգենտինա				Հոնգկոնգ
Մոնղոլիա				Իսլանդիա
Հունաստան				Ճապոնիա
Թունիս				Ավստրալիա
Մեքսիկա				Էստոնիա
Թուրքիա				
Խորվաթիա				
Մոլդովա				
Էկվադոր				
Վրաստան				
Բրազիլիա				
Ալժիր				
Ղրղզստան				
Բոսնիա և Հերցեգովինա				

Հայաստանը կլաստեր 1-ում է, այսինքն՝ մեր երկրում կրթության քանակական բնութագրիչների կամ ռեսուրսային նշանակալի հենքը բավարար արդյունավետությամբ չի օգտագործվում, չի կերպավորվում կրթության և գիտության համարժեք արդյունքի կամ որակի: Նույնիսկ ավելի թույլ քանակական բնութագրիչների պարագայում կլաստեր 2-ի երկրները կարողացել են ավելի լավ արդյունքներ ապահովել:

Լավագույն կլաստերում (5-րդ կլաստեր) տեղ են գտել այն երկրները, որոնք կարողացել են կրթական զգալի ռեսուրսները վերափոխել կրթության, գիտության և ինովացիոն ոլորտներում ստացված լուրջ արդյունքների և բարձր որակի: Ուշագրավ է, որ այս խմբում նախկին խորհրդային հանրապետություններից միայն Էստոնիան է:

Մեկ այլ կլաստերային վերլուծությամբ կատարվել է կրթության քանակական ու որակական բնութագրիչների և ֆինանսավորման հարաբերական ցուցիչների համակցում: Դիտարկվել են 12 ցուցանիշներ, 56 երկրների համար: Նույն տրամաբանությամբ, ինչ նախորդ դեպքում, կատարվել է աստիճանակարգային կլաստերացում, կլաստերների նպատակահարմար թիվ է ստացվել 4-ը: Հաջորդ քայլով կատարվել է իտերացիոն մեթոդով կլաստերացում, որի արդյունքները ներկայացված են ստորև աղյուսակներ 4.3 և 4.4-ում:

Կլաստեր 1-ում հնարավոր է եղել նույն ֆինանսավորման պայմաններում ապահովել նույն որակը, ինչը նախորդ կլաստերում, սակայն՝ ավելի ցածր քանակային ներգրավվածության պարագայում:

Կլաստեր 2-ում կրթության քանակական և որակական բնութագրիչները համադրելի են, սակայն կրթության ֆինանսավորման հարաբերական ցուցանիշը միջինից ցածր է:

Կլաստեր 3-ում կրթության ֆինանսավորումը միջինից բարձր է, միաժամանակ ապահովվել է նույն որակը, ինչը կլաստեր 2-ում, սակայն ավելի մեծ քանակային ներգրավվածության կամ բնութագրիչների պայմաններում:

Աղյուսակ 4.3 Կլաստերների վերջնական կենտրոնները

<i>Ցուցանիշը</i>	<i>Կլաստերը</i>			
	1	2	3	4
Ներգրավվածությունը հանրակրթության 1-ին մակարդակում, %	84,3	95,0	96,1	98,3
Ներգրավվածությունը հանրակրթության 2-րդ մակարդակում, %	45,8	89,1	102,6	129,0
Ներգրավվածությունը հանրակրթության 3-րդ մակարդակում, %	10,3	30,7	68,1	75,1
Կրթության քանակ	1,7	4,4	6,3	6,5
Կրթական համակարգի որակը	3,1	3,8	3,9	4,9
Մաթ. և բնագիտ. կրթության որակը	3,3	4,1	4,5	4,9

Կրթության որակը	3,4	4,1	4,4	5,2
Վճարում և արտադրողականություն	3,3	4,1	4,2	4,5
Տաղանդների արդյունավետ օգտագործում	3,6	3,8	4,2	4,9
Տարրական կրթության ծախսերի մասնաբաժինը կրթության բյուջետային ծախսերի կառուցվածքում, %	36,3	34,1	27,3	31,1
Կառավարության ծախսերը հանրակրթության 2-րդ մակարդակում, 1 սովորողի հաշվով, % շնչային ՀՆԱ նկատմամբ	17,9	16,9	20,3	25,6
Կրթության ոլորտում պետության ծախսերը, % ՀՆԱ նկատմամբ	4,1	4,2	4,9	5,9

Կլաստեր 4-ում կրթության ֆինանսավորումն առավելագույնն է, առավելագույն մակարդակի վրա է նաև կրթության որակը՝ գրեթե նույն քանակի պայմաններում, ինչ կլաստեր 3-ում:

Վերը նշվածը հիմք ընդունելով, կլաստերները պայմանականորեն կարող ենք բնութագրել հետևյալ կերպ.

- ✚ Կլաստեր 1. Անարդյունավետ մոդել՝ ցածր ֆինանսավորման պայմաններում
- ✚ Կլաստեր 2. Միջին արդյունավետության մոդել՝ ցածր ֆինանսավորման պայմաններում
- ✚ Կլաստեր 3. Անարդյունավետ մոդել՝ բարձր ֆինանսավորման պայմաններում
- ✚ Կլաստեր 4. Արդյունավետ մոդել՝ բարձր ֆինանսավորման պայմաններում

Երկրներն ըստ ստացված կլաստերների բերված են աղյուսակ 4.4-ում:

Աղյուսակ 4.4. Երկրների բաշխումն ըստ կլաստերների

Կլաստեր 1	Կլաստեր 2	Կլաստեր 3	Կլաստեր 4
Բենին	Հայաստան	Ավստրիա	Ավստրալիա
Գվատեմալա	Բահրեյն	Չեխիա	Ֆինլանդիա
Գվինեա	Էկվադոր	Էստոնիա	Իսլանդիա
Մալավի	Էլ Սալվադոր	Ֆրանսիա	Իռլանդիա
Պակիստան	Ինդոնեզիա	Գերմանիա	Նոր Չեղանդիա
Սենեգալ	Ճամայկա	Հոնգկոնգ	Պորտուգալիա
Ռուանդա	Լատինական Ամերիկա	Հունգարիա	Իսպանիա
	Լյուքսեմբուրգ	Իսրայել	Շվեդիա

	Մալազիա	Իտալիա	Մեծ Բրիտանիա
	Մավրիտանիա	Լիտվա	ԱՄՆ
	Նեպալ	Նորվեգիա	
	Պերու	Լեհաստան	
	Հարավային Ասիա	Շվեյցարիա	
		Թուրքիա	

Աղյուսակ 4.4-ից ակնառու է, որ Հայաստանը պատկանում է այն երկրների խմբին, որտեղ կրթության ցածր ֆինանսավորման պայմաններում ապահովվում է դրա միջին արդյունավետություն:

Կրթական և գիտահետազոտական քանակական ու որակական բնութագրիչների ընդհանրացման, դրանց հենքի վրա միասնական արդյունքային ցուցիչի (չափորոշիչի) ստացման նպատակով մեր կողմից արվել է **գործոնային վերլուծություն**, որի արդյունքները բերված են աղյուսակներ 4.5 և 4.6-ում:

Գլխավոր կոմպոնենտների մեթոդով արված վերլուծության արդյունքում դուրս է բերվել միայն մեկ գործոն, որի սեփական արժեքը գերազանցում է սահմանային մակարդակը (տվյալ դեպքում՝ 1-ը): Ստացված գործոնը կամ լատենտային փոփոխականը նկարագրողական մեծ ներուժ ունի. նկարագրում է ցուցանիշներիով պայմանավորված վարիացիայի ավելի քան 83%-ը, ինչը լավ արդյունք է: Աղյուսակ 4-ում ամփոփված են գործոնի բնութագրիչ ելակետային ցուցանիշները և դրանց համապատասխան գործոնային բեռնվածքները, որոնք ցույց են տալիս ելակետային ցուցանիշներից յուրաքանչյուրի մասնակցությունը լատենտային փոփոխականում: Այլ եզրաբանությամբ՝ դրանք կարելի է համարել ընդհանրական ցուցանիշում մասնակի ցուցիչների կարևորության հարաբերական մեծություններ: Ավելի պարզ ձևակերպմամբ, գործոնի արժեքները կարելի է ընդունել որպես գործոնային վերլուծության մեջ օգտագործված 10 տարբեր ցուցանիշների ագրեգացված մեծություն, որը, ըստ էության, բնութագրում է կրթության, գիտության և ինովացիոն ոլորտների զարգացման մակարդակը:

Աղյուսակ 4.5 Գործոնի բովանդակությունը

Ցուցանիշը	Գործոնը
Կառավարության արդյունավետությունը	,822
Կրթական առաջին մակարդակի որակը	,898
Կրթական համակարգի որակը	,939
Մաթեմատիկական և բնագիտական կրթության որակը	,842

Կրթության որակի ընդհանրական ցուցիչը	,969
Տաղանդների օգտագործման արդյունավետությունը	,869
Նորարարության կարողությունը	,924
Գիտահետազոտական ինստիտուտների որակը	,913
Ընկերությունների ծախսերը հետազոտությունների և մշակումների վրա	,924
Հետազոտությունների և մշակումների ոլորտում բուհ-արտադրություն համագործակցության մակարդակը	,938

Այդուսակ 4.6-ում ներկայացված են վերլուծության մեջ ներառված 75 երկրների գնահատականներն ըստ մեր կողմից ստացված ընդհանրական ցուցանիշի: Այն, ըստ եռության, կարելի է ընդունել որպես ագրեգացված արդյունքային չափորոշիչ, որը կարելի է կիրառել կրթության և գիտության ոլորտներում բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման նպատակով:

Այս ցուցանիշով Հայաստանի գնահատականը միջինից բավականին ցածր է և կազմում է 3.51: Մյուս կողմից, նույնպիսի կամ ավելի ցածր մակարդակ ունեն այնպիսի երկրներ, ինչպես Լեհաստանը, Լատվիան, Ղազախստանը, Բուլղարիան, Հունգարիան, Մոլդովան և Վրաստանը:

Այդուսակ 4.6. Երկրները՝ ըստ գործոնի գնահատականի (0-10բալանոց համակարգ, որտեղ 10-ը առավելագույն մակարդակն է)

Երկիրը	Գործոնի արժեքը	Երկիրը	Գործոնի արժեքը	Երկիրը	Գործոնի արժեքը
Շվեյցարիա	9,95	Ինդոնեզիա	5,16	Պակիստան	2,54
Ֆինլանդիա	9,08	Կորեա	4,92	Հունգարիա	2,54
Սինգապուր	8,78	Չեխիա	4,86	Ռումինիա	2,41
Նիդեռլանդներ	8,59	Բահրեյն	4,57	Արգենտինա	2,39
Գերմանիա	8,12	Լիտվա	4,56	Ուզանդա	2,36
Նոր Չեխիա	7,62	Լիբանան	4,44	Մոնղոլիա	2,25
Իսրայել	7,55	Իտալիա	4,09	Հունաստան	2,21
Բելգիա	7,54	Ռուսաստան	4,05	Թունիս	2,12
Շվեդիա	7,39	Տաիլանդ	4,00	Մեքսիկա	2,10
Նորվեգիա	7,38	Իսպանիա	3,88	Թուրքիա	2,02
Կանադա	7,31	Ճամայկա	3,83	Խորվաթիա	2,00
Իռլանդիա	7,21	Ալբանիա	3,80	Մոլդովա	1,85
Դանիա	7,11	Ուկրաինա	3,69	Էկվադոր	1,78
Հոնգկոնգ	6,98	Թաիլանդ	3,57	Վրաստան	1,67
Իսլանդիա	6,98	Ֆիլիպիններ	3,52	Գվատեմալա	1,56
Ճապոնիա	6,72	Հայաստան	3,51	Բրազիլիա	1,53
Ավստրալիա	6,61	Լեհաստան	3,49	Ալժիր	1,46
Ֆրանսիա	6,32	Լատվիա	3,49	Բանգլադեշ	1,33
Էստոնիա	6,29	Ղազախստան	3,26	Նիգերիա	1,16
Ավստրիա	6,24	Հվ. Աֆրիկա	3,21	Սլովակիա	1,07
Չինաստան	5,42	Մոնտենեգրո	3,17	Ղրղզստան	1,06
Ադրբեջան	5,24	Չիլի	3,06	Բու. և Հերց.	0,78
Պորտուգալիա	5,21	Բուլղարիա	3,06	Եգիպտոս	0,48

Երկիրը	Գործոնի արժեքը	Երկիրը	Գործոնի արժեքը	Երկիրը	Գործոնի արժեքը
Սլովենիա	5,18	Սերբիա	2,75	Պարագվայ	0,27
Հնդկաստան	5,18	Իրան	2,67	Նիկարագուա	0,01

Ստացված գնահատականը կարելի է դիտարկել որպես կրթության և գիտության ոլորտների արդյունքային չափորոշիչ, որի հետ համեմատելով կրթության և գիտության բյուջետային ծախսումները մեծությունը, հնարավոր է դուրս բերել բյուջետային ծախսերի արդյունավետության ունիվերսալ գնահատական: Նկարագրված մոտեցմամբ կարելի է նաև ստանալ արդյունքային չափորոշիչներ՝ ըստ կրթության և գիտության ոլորտում իրականացվող հիմնական բյուջետային ծրագրերի և դրանց համապատասխան միջոցառումների:

Ամփոփ դիտարկումներ.

- I. Հայաստանը կրթության ոլորտում նշանակալի ռեսուրսները ցածր արդյունավետությամբ օգտագործող երկրների խմբում է,
- II. Հայաստանում ըստ երկրի գործում է կրթության ֆինանսավորման այնպիսի մոդել, որի շրջանակներում հաջողվում է ցածր ֆինանսավորման պայմաններում ապահովել միջին արդյունավետություն,
- III. գործոնային վերլուծության արդյունքներով դուրս է բերվել կրթության, գիտության և ինովացիոն ոլորտների զարգացման ընդհանրական ցուցիչ, որով Հայաստանը գնահատականը չնայած միջինից ցածր է, սակայն համեմատաբար բարվոք է՝ մի շարք համադրելի երկրների նկատմամբ,
- IV. Նկարագրված ընթացակարգով կարելի է դուրս բերել արդյունքային չափորոշիչներ՝ ըստ կրթության և գիտության ոլորտներում իրականացվող բյուջետային ծրագրերի և միջոցառումների: Այս կերպ ստացված արդյունքային չափորոշիչների կարևոր առավելություն է այն, որ դրանցում համակցված են ծրագրի կամ միջոցառման քանակական և որակական ասպեկտները նկարագրող մասնակի ցուցանիշներ:

5. Կրթության և գիտության ֆինանսավորման ծրագրային միջոցառումների դիտարկումը (2019թ. առաջին կիսամյակի օրինակով)

ՀՀ կրթության և գիտության ոլորտներում 2019թ. առաջին կիսամյակում իրականացվել են 10 բյուջետային ծրագրեր, որոնց շրջանակներում օգտագործվել է 56 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 93.4%-ը կամ տարեկան ծրագրի շուրջ 40%-ը (աղյուսակ 5.1):

Աղյուսակ 5.1. Կրթության բյուջետային ֆինանսավորման պլանային ցուցանիշները և կատարողականը, 1-ին կիսամյակ, մլն դրամներով

#	Ծրագիրը	Տարեկան պլան	Տարեկան ճշգրտ. պլան	Կիսամյակի պլան	Կիսամյակի ճշգ. պլան	Փաստ	Կատ. %, տատ. առ. նմ.	Կատ. %, կիս. պլ. նմ.
1	Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	11685,5	11730,3	4642,7	4807,6	4572,7	39,0	95,1
2	Բարձրագույն և հետբուհական մասնագիտ. կրթության ծրագիր	10351	10351	4728,3	4728,3	4672,4	45,1	98,8
3	Կրթության և գիտության բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	887,7	892	375,1	379,4	355,5	39,9	93,7
4	Հանրակրթության ծրագիր	87209,4	88464,1	37178,0	38322,1	36994,2	41,8	96,5
5	Արտադպրոցական դաստիարակության ծրագիր	4132,2	4142,8	1847,1	1857,7	1736,67	41,9	93,5
6	Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	14350,9	14350,9	6457,3	6500,35	5923,7	41,3	91,1
7	Ապահով դպրոց	1170,2	1170,2	552,2	552,2	211,6	18,1	38,3
8	Կրթության որակի ապահովում	9897,8	8806,2	3438,3	2268,5	1034,4	11,7	45,6
9	Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում	1590,5	1355,8	724,4	489,7	489,7	36,1	100,0
10	Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում	-	56,4	-	56,4	-	-	-
Ընդամենը		141275,2	141319,7	59943,6	59962,4	55990,9	39,6	93,4

Ստորև ներկայացված են հաշվետու ժամանակահատվածում բյուջետային ծախսերի վերլուծություններն՝ ըստ կրթության և գիտության ոլորտի հիմնական բյուջետային ծրագրերի:

5.1. Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ծրագիր

Ծրագրի նպատակը աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին

մասնագիտական կրթության որակավորում ունեցող մասնագետների պատրաստումն է, կրթության մատչելիության ապահովումը: Ծրագրի շրջանակներում նախատեսված են թվով 6 միջոցառումներ (աղյուսակ 5.2): 2019թ. առաջին կիսամյակում սույն ծրագրին տրամադրվել է 4.57 մլրդ դրամ՝ ապահովելով 95.1% կատարողական:

Աղյուսակ 5.2. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ծրագիր, մլն դրամներով

#	Միջոցառումը	Միջոցառման տեսակը ³⁵	Տարեկան ճշգրտ. պլան	Կիսամյակի ճշգ. պլան	Փաստ	Կատ. %, տար. պլ. նկ.	Կատ. %, կիս. պլ. նկ.
1	ՆՄԿՈՒ հաստատություններում համապատասխան մասնագետով համալրված մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնների ստեղծում	Ծ	92.3	41.5	41.5	45,0	100
2	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ	Տ	342.2	142.6	142.6	41,7	100
3	Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ	Տ	713.1	297.1	297.1	41,7	100
4	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում	Տ	1943.9	814.5	814.5	41,9	100
5	Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում	Տ	7158,2	3158.9	3158.9	44,1	100
6	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում	Գ	1480.6	353	118.1	8,0	33,5
Ընդամենը, ըստ ծրագրի բոլոր միջոցառումների			11730.3	4807.6	4572.7	39.0	95.1

Միջոցառումներից 4-ը տրանսֆերտների տրամադրման միջոցառումներ են (դրանց շրջանակներում բաշխվում է ֆինանսավորման ընդհանուր ծավալի 95%-ից ավելին), 1-ը ծառայության մատուցման միջոցառում է, ևս 1-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություն:

Ծրագրի ծախսերում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման միջոցառման ծախսերը (ծրագրով 1-ին կիսամյակի համար նախատեսված ընդամենը ծախսերի 67%-ը)՝ 3.2 մլրդ դրամ:

³⁵ Ծ – ծառայությունների մատուցում, Տ – տրանսֆերտների տրամադրում, Գ - Այլ պետական կազմակերպությունների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ:

Ծրագրի միջոցառումներից հաշվետու ժամանակահատվածում թերակատարված է միայն *Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում* միջոցառման շրջանակներում նախատեսված ֆինանսավորումը: Կիսամյակի կատարողականը կազմել է ընդամենը 33.5%: Այս թերակատարում է պայմանավորված է այն հանգամանքով, որ ԿԳՄՍՆ կողմից չորս քոլեջների մասով նախաձեռնված որոշման նախագծերն ընթացքի մեջ են և երկու քոլեջների մասով կատարողական ակտերը գտնվում են ընդունման գործընթացում:

Արդյունքի չափորոշիչները

Արդյունակ 5.3-ում ներկայացված են ծրագրի արդյունքի չափորոշիչները՝ ըստ միջոցառումների:

Արդյունակ 5.3. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ծրագրի արդյունքի չափորոշիչները՝ ըստ միջոցառումների

Արդյունքի չափորոշիչները		Տարեկան ճշտ. պլան	Կիսամյակի ճշտ. պլան	Կիս. փաստ.	Շեղում
1	ՆՄԿՈՒ հաստատություններում համապատասխան մասնագետով համալրված մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնների ստեղծում				
1.1	Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոններ ունեցող ՆՄԿՈՒ հաստատությունների թիվ, հատ	95	95	95	0
1.2	Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոններում աշխատակազմի միջին թվաքանակ, մարդ	1	1	1	0
1.3	Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնների պատասխանատուների պաշտոնի անձնագրերի թիվ, հատ (ըստ ՆՄԿՈՒ ուսումնական հաստատությունների)	95	95	95	0
1.4	Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնի տարեկան աշխատանքային ծրագրերի թիվ, հատ (ըստ ՆՄԿՈՒ ուսումնական հաստատությունների)	95	95	95	0
1.5	Կարիերայի կենտրոնների ծառայություններից օգտված ուսանողների թիվը, մարդ	7000	7000	7000	0
2.	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ				
2.1	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրի իրականացնող պետական ուսումնական հաստատությունների թիվ, հատ	20	20	20	0
2.2	Կրթաթոշակ ստացող ուսանողների թիվ, մարդ	6132	6132	6132	0
3.	Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ				
3.1	Միջին մասնագիտական կրթական ծրագրի իրականացնող պետական ուսումնական հաստատությունների թիվ, հատ	68	68	68	0
3.2	Կրթաթոշակ ստացող ուսանողների թիվ, մարդ	12510	12510	12431	-79
4.	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում				
4.1	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրի իրականացնող պետական ուսումնական հաստատությունների թիվ, հատ	20	20	20	0
4.2	Ուսանողական նպաստ ստացող ուսանողների թիվ, մարդ	6132	6132	6132	0

Արդյունքի չափորոշիչները		Տարեկան ճշտ. պլան	Կիսամյակի ճշտ. պլան	Կիս. փաստ.	Շեղում
5	Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում				
5.1	Միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների թիվ, հատ	68	68	68	0
5.2	Ուսանողական նպաստ ստացող ուսանողների թիվը, մարդ	17998	17998	17989	-9
6	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում				
6.1	Կազմակերպությունների թիվը, որտեղ կատարվում են ներդրումները, հատ (Ստեփանավանի պետական գյուղատնտեսական և Հայաստանի ազգային Ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղի քոլեջներ)	6	4	2	-2
6.2	Աշխատանքների ավարտվածության աստիճանը, %	100	22	14.4	-7.6

Կիսամյակի պլանից շեղումներ են արձանագրվել հետևյալ չափորոշիչների մասով.

1. Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ միջոցառման շրջանակներում Կրթաթոշակ ստացած ուսանողների փաստացի թիվը 79-ով պակաս է պլանայինից: Տարբերությունը պայմանավորված այն հանգամանքով, որ կրթաթոշակը հատկացվում է գերազանց և բարձր առաջադիմություն ունեցող սովորողներին, ինչպես նաև 1 ուսանող հետացվել է և 5 ավարտել են:

2. Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում միջոցառման ուսանողական նպաստ ստացող ուսանողների թիվը չափորոշիչի մասով ևս առկա է փաստացի և պլանային մակարդակների տարբերություն (-9)՝ պայմանավորված այն հանգամանքով, որ քոլեջի սովորողների միջին թվաքանակը ըստ եռամսյակների տարբեր է. յուրաքանչյուր ամիս հնարավոր է լինեն ազատվողներ և ընդունվողներ:

3. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում միջոցառման շրջանակներում ներդրումների օբյեկտ հանդիսացած կրթական հաստատությունների փաստացի թիվը պակաս է պլանայինից, ինչը, արդեն նշվեց, պայմանավորված է ժամանակային գործոնով, մյուս 2 քոլեջների մասով նախաձեռնված որոշման նախագծերն ընթացքի մեջ են և դրանց վերջնարդյունքում աշխատանքների ավարտվածության աստիճանը կհասնի պլանային մակարդակին:

5.2. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր

Ծրագրի շրջանակներում նախատեսված ֆինանսավորումը 2019թ. առաջին կիսամյակի համար կազմել է 4.73 մլրդ դրամ, փաստացի կատարվել է 4.67 մլրդ դրամի ծախս կամ նախատեսվածից 60 մլն դրամով պակաս (կատարողականը՝ 98.8%):

Ծրագրի ծախսերում նախատեսված են թվով 10 միջոցառումներ (աղյուսակ 5.4): Դրանց շարքում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման ծախսերը, որոնք կատարվել են նախատեսված ծավալով և կազմել են ավելի քան 3.68 մլրդ դրամ: Ծրագրի միջոցառումներից 9-ը տրանսֆերտների տրամադրման և միայն 1-ը՝ ծառայությունների մատուցման միջոցառումներ են: Ծրագրի 3 ամենախոշոր միջոցառումներին (ուսանողական նպաստներ և կրթաթոշակ) բաժին է ընկնում ծրագրի ընդհանուր ֆինանսավորման ավելի քան 95%-ը:

Աղյուսակ 5.4. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր, մլն դրամներով

#	Միջոցառումը	Միջոցառման տեսակը ³⁶	Տարեկան ճշգրտ. պլան	Կիսամյակի ճշգ. պլան	Փաստ	Կատ. %, տար. պլ. նկ.	Կատ. %, կիս. պլ. նկ.
1	Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ	Ծ	47,3	20.3	20.3	42.9	100
2	Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ	S	878,2	497.9	497	56.6	99.8
3	Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ բուհական հաստատություններում	S	237,5	138.1	137.7	58.0	99.7
4	Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակներ	S	28,5	12.8	10.1	35.4	78.9
5	Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում	S	8312,2	3689.4	3688.9	44.4	100
6	Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում բուհական հաստատություններում	S	626,7	274.3	272.6	43.5	99.4
7	Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում գիտակրթական հաստատություններում	S	41,4	18.6	17.1	41.3	91.9
8	Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին	S	30,1	8.7	8.7	28.9	100
9	Ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում	S	54,5	20,9	20	36.7	95.7
10	Աջակցություն արտասահմանում սովորող ուսանողներին	S	94,6	47.3	0,0	0	0
Ընդամենը, ըստ ծրագրի բոլոր միջոցառումների			10351	4728.3	4672.4	45.1	98.8

Կիսամյակային պլանից շեղումը կազմել է 56 մլն դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է արտասահմանում սովորող ուսանողներին աջակցության միջոցառման չկատարմամբ (ծրագրի իրականացման նպատակահարմարությունը քննարկման փուլում է): Բացի այդ, ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակների կիսամյակային պլանը թերակատարվել է 2.7 մլն դրամով՝ ասպիրանտների թվաքանակի փոփոխությամբ պայմանավորված, ինչպես նաև՝ գիտակրթական հաստատություններում հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման միջոցառմամբ նախատեսված ֆինանսավորման 8.1%-ով թերակատարմամբ՝ պայմանավորված դասընթացների դիմորդների թվի՝ պլանայինի նկատմամբ ավելի ցածր մակարդակով:

³⁶ Ծ – ծառայությունների մատուցում, S – տրանսֆերտների տրամադրում, Գ - Այլ պետական կազմակերպությունների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ:

Արդյունքի չափորոշիչները

Ծրագրի արդյունքի չափորոշիչները՝ ըստ համապատասխան միջոցառումների, բերված են աղյուսակ 5.5-ում:

Աղյուսակ 5.5. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի արդյունքի չափորոշիչները

#	Արդյունքի չափորոշիչը	Տարեկան ճշտ. պլան	Կիսամյակի ճշտ. պլան	Կիս. փաստ.	Շեղում
1	Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ				
1.1.	Խորհրդատվության տրամադրում/խորհրդատվական տեղեկանք, հաստ	750	337	337	0
2	Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ				
2.1.	Կրթաթոշակ ստացող ուսանողների միջին տարեկան թիվ, մարդ	7508	7373	7508	+135
3	Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ բուհական հաստատություններում				
3.1.	Կրթաթոշակ ստացող ուսանողների թիվ, մարդ	523	523	523	0
4	Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակներ				
4.1.	Կրթաթոշակ ստացող ուսանողների թիվ, մարդ	102	102	96	-6
5	Բարձրագույն մասնագիտ. կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում				
5.1.	Ուսանողական նպաստներ ստացող միջին տարեկան թիվ, մարդ	12114	12114	12114	0
6	Հետբուհ. մասնագիտ. կրթ. գծով նպաստների տրամադրում բուհական հաստ.-ում				
6.1.	Ուսանողական նպաստներ ստացող միջին տարեկան թիվ, մարդ	1603	1603	1603	0
7	Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում գիտակրթական հաստատություններում				
7.1.	Ուսանողների միջին տարեկան թիվ, մարդ	212	212	160	-52
8	Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին				
8.1	Ուսանողների թիվ, մարդ	190	-	-	-
9	Ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում				
9.1	Ուսանողների միջին տարեկան թիվ, մարդ	1750	670	4777	+4107
10	Աջակցություն արտասահմանում սովորող ուսանողներին				
10.1	Աջակցություն արտասահմանում սովորող ուսանողներին	10	10	0	-10

Պլանայինի համեմատությամբ շեղումներ են արձանագրվել հետևյալ չափորոշիչների մասով.

- բարձրագույն մասնագիտական կրթության՝ կրթաթոշակ ստացող ուսանողների փաստացի թիվը պլանայինը գերազանցել է 135-ով, այսինքն՝ փաստացի սովորողների թիվն ավելին է, քան պլանավորվել էր,
- ասպիրանտական և դոկտորական կրթաթոշակ ստացող ուսանողների թիվը պլանայինից պակաս է 6-ով,

- գիտակրթական հաստատություններում Ջետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստ ստացող ուսանողների թիվը պլանայինից պակաս է 52-ով
- Ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում միջոցառման շրջանակներում աջակցություն ստացած ուսանողների փաստացի թիվը պլանայինը գերազանցել է 4107-ով կամ 7 անգամ և տարակուսելի է, որ այս պայմաններում փոխհատուցման համար տրամադրված տրանսֆերտների փաստացի մեծությունը չի գերազանցել պլանային մակարդակը:

5.3. Կրթության և գիտության բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ ծրագիր

Ծրագրի շրջանակներում 4 միջոցառումները հաշվետու ժամանակահատվածում ֆինանսավորվել են 355.5 մլն դրամի չափով, ինչը կազմել է պլանայինի 93.7%: Շեղումը հիմնականում պայմանավորված է առաջին երկու միջոցառումների (աղյուսակ 5.6) իրականացման ընթացքում ներքին գործուղումներից և պարզևատրումներից արված տնտեսումներով:

Աղյուսակ 5.6. Կրթության և գիտության բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ ծրագիր

#	Միջոցառումը	Միջոցառման տեսակը ³⁷	Տարեկան ճշգրտ. պլան	Կիսամյակի ճշգ. պլան	Փաստ	Կատ. %, տար. պլ. նկ.	Կատ. %, կիս. պլ. նկ.
1	Կրթության և գիտության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծառայություններ	Ծ	796,6	336.4	315.5	39.6	93.8
2	Լեզվի բնագավառում պետական քաղաքականության մշակման և իրականացման ծառայություններ	Ծ	91,1	38.7	35.7	39.2	92.2
3	Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ	Ծ	4.2	4.2	4.2	100	100
4	ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	Ծ	0,1	0,1	0,1	100	100
Ընդամենը, ըստ ծրագրի բոլոր միջոցառումների			892	379.4	355.5	39.9	93.7

Արդյունքի չափորոշիչները

Ծրագրի հիմնական միջոցառումների համար արդյունքի չափորոշիչներ սահմանված չեն:

5.4. Հանրակրթության ծրագիր

Ծրագրի շրջանակներում 2019թ. առաջին կիսամյակում օգտագործվել է շուրջ 37 մլրդ դրամ՝ ապահովելով 96.5% կատարողական:

Ծրագրում ընդգրկված են 27 միջոցառումներ (2019թ. առաջին եռամսյակում ֆինանսավորվել է 26 միջոցառում: Երկրորդ եռամսյակում որպես նոր միջոցառում ներառվել է «Հայ-չինական բարեկամության դպրոց» հիմնադրամին օժանդակությունը, որի շրջանակներում հատկացվել է 35 մլն դրամ): Ծրագրի ծախսերում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն ունեն տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր հանրակրթության ծախսերը, որոնց հանրագումարը կազմել է 32.7 մլրդ դրամ կամ կիսամյակում կատարված փաստացի ընդհանուր ծախսերի 88.4%-ը (աղյուսակ 5.7):

³⁷ Ծ – ծառայությունների մատուցում, Տ – տրանսֆերտների տրամադրում, Գ - Այլ պետական կազմակերպությունների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ:

Ծրագրի միջոցառումների մեծ մասը՝ թվով 21 միջոցառում, ծառայությունների մատուցման միջոցառումներ են: Մնացածը (թվով 6-ը) տրանսֆերտների տրամադրման միջոցառումներ են՝ 139.2 մլն դրամ փաստացի ֆինանսավորմամբ (ծրագրի շրջանակներում փաստացի ֆինանսավորման ընդամենը 0.37%):

Աղյուսակ 5.7. Հանրակրթության ծրագիր

#	Միջոցառումը	Միջոցառում ն տեսակը ³⁸	Տարեկան ծրագր. պլան	Կիսամյակի ծրագր. պլան	Փաստ	Կատ. %, կիս. տար. պլ. նկ.	Կատ. %, կիս. պլ. նկ.
1	Տարրական ընդհանուր հանրակրթություն	Ծ	26213,3	11088.3	11066.4	42,2	99,8
2	Հիմնական ընդհանուր հանրակրթություն	Ծ	37339,9	15776.5	15144.8	40,6	96,0
3	Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն	Ծ	15570,4	6615.5	6531.6	41,9	98,7
4	Տարրական հատուկ հանրակրթություն	Ծ	472,2	340.7	336.9	71,3	98,9
5	Հիմնական հատուկ հանրակրթություն	Ծ	740,7	544.7	535.6	72,3	98,3
6	Միջնակարգ հատուկ հանրակրթություն	Ծ	435,0	417	407.4	93,7	97,7
7	Ներառական կրթություն տարրական դպրոցում	Ծ	420,0	188.8	186.8	44,5	98,9
8	Ներառական կրթություն միջին դպրոցում	Ծ	582,6	287	280.7	48,2	97,8
9	Ներառական կրթություն ավագ դպրոցում	Ծ	63.9	26.7	26	40,7	97,4
10	Տարրական մասնագիտացված հանրակրթ.	Ծ	302,7	128.6	128.6	42,5	100
11	Հիմնական մասնագիտացված հանրակրթ.	Ծ	1210,1	514.2	5114.2	42,5	100
12	Միջնակարգ մասնագիտացված հանրակրթություն	Ծ	1886,7	871.4	768.2	40,7	88,2
13	Նախադպրոցական կրթություն	Ծ	843,7	362.8	354	42.0	97,6
14	Նորարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում	Ծ	117,0	49	49	41,9	100,0
15	Դպրոցականների օլիմպիադաների անցկացում	Ծ	60,2	60.2	52	86,4	86,4
16	Կրթ. հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումն. գրականությամբ ապահովում	Ծ	1077,9	538.9	249.3	23,1	46,3
17	Կրթական հաստատություններին ուսումնամեթոդական նյութերով ապահովում	Ծ	206,1	120.4	33.7	16,4	28,0
18	Դպրոցներում STEM կրթության և ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացում	Ծ	352,2	144.4	144.4	41,0	100,0
19	«Ազգային երգ ու պար» առարկայի ներդրում հանրակրթ. ուսումնական հաստատություններում	Ծ	7,8	7.8	3.9	50,0	50,0
20	Միջնակարգ հանրակրթություն երեկոյան դպրոցում (Շիրակի մարզ)	Ծ	15,3	6.5	6.5	42,5	100,0
21	Օժանդակություն «Հայ-չինական բարեկամության դպրոց» հիմնադրամին	Ծ	35	35	35	100	100
22	Փոխհատուցում ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետ. հանրակրթական դպրոցների մանկավարժներին	S	45,1	18.1	11.3	25,1	62,4
23	Հանրակրթ. դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրևասպորտային ծախսերի փոխհատուցում	S	79,1	33.5	31.6	39,9	94,3

³⁸ Ծ – ծառայությունների մատուցում, S – տրանսֆերտների տրամադրում, Գ - Այլ պետական կազմակերպությունների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ:

#	Միջոցառումը	Միջոցառում և տեսակը ³⁸	Տարեկան ծախս. պլան	Կրթամյակի ծճգ. պլան	Փաստ	Կատ. %, տար. պլ. նկ.	Կատ. %, կիս. պլ. նկ.
24	Սոցիալապես անապահով և սահմանամերձ ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում	S	31,1	0	0	-	-
25	Ատենտավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում	S	334,9	137.3	87.6	26,2	63,8
26	Մասնագիտացված հանրակրթական ուսումնական հաստատությունների երեխաների կրթաթոշակ հիմնական ընդհանուր կրթության մակարդակում	S	3,2	1.3	1.2	37,8	90,3
27	Մասնագիտացված հանրակրթական ուսումնական հաստատությունների երեխաների կրթաթոշակ միջնակարգ ընդհանուր կրթության մակարդակում	S	18,0	7.5	7.5	41,6	100,0
Ընդամենը, ըստ ծրագրի բոլոր միջոցառումների			88464.1	38322.1	36994.2	41.8	96.5

Ընդհանուր հանրակրթության միջոցառումների շարքում համեմատաբար ցածր կատարողականը **հիմնական ընդհանուր հանրակրթության** միջոցառման գծով է (96%): Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ աշակերտների փաստացի թվաքանակը պակաս է եղել աշակերտների միջին թվաքանակի ցուցանիշից, ըստ որի կատարվել է պլանավորում: Նույն պատճառով թերակատարում կա նաև **միջնակարգ ընդհանուր հանրակրթության** մասով:

Հատուկ հանրակրթության միջոցառումների մասով ևս 1-2%-ի չափով պլանային մակարդակների թերակատարում կա: Տարրական հատուկ հանրակրթությունը թերակատարվել է 4 մլն դրամով, քանի որ ՀՀ պետական բյուջեում միջոցներ չեն նախատեսվել թիվ 8 հատուկ դպրոցի մասով՝ ենթադրելով, որ այն փակվելու է: Հիմնական և միջնակարգ հատուկ հանրակրթության միջոցառումների փաստացի ծախսը պլանայինի համեմատ պակաս է մոտ 10-ական մլն դրամով, ինչի պատճառը կնքված պայմանագրերի արդյունքում առաջացած տևտեստումն է: Պայմանագրերը կվերակնքվեն 2019-2020թ. ուս. տարվա ճշտված աշակերտների թվով:

Տարրական, միջին և ավագ դպրոցներում **ներառական կրթության** միջոցառումների գծով փաստացի ծախսերը ևս փոքր-ինչ պակաս են ճշտված պլաններից, ինչը ևս պայմանավորված է սովորողների փաստացի և պլանային թվաքանակների տարբերություններով: Այսինքն՝ տեղի է ունեցել սովորողների թվի՝ պլանայինի համեմատ որոշ նվազում:

Միջնակարգ մասնագիտացված հանրակրթություն միջոցառումը, որը միտված է միջնակարգ կրթության մակարդակում մասնագիտացված

հանրակրթական ծառայությունների մատուցման միջոցով սովորողների ընդգրկվածության, համակողմանի զարգացման և գրագիտության ապահովմանը, թերֆինանսավորվել է 11.8%-ով կամ ավելի քան 100 մլն դրամով: Պատճառը հաստիքների ոչ լրիվ համալրվածությունն է, բացի այդ, գնումների դիմաց վճարումները իրականացվել են նախատեսվածից քիչ:

Դպրոցականների օլիմպիադաների անցկացում միջոցառումը փաստացի ֆինանսավորվել է 52 մլն դրամի չափով կամ պլանայինից 8 մլն դրամով պակաս: Տարբերությունը լրացվել է 3-րդ եռամսյակում համահայկական օլիմպիադայի պայմանագրի կնքմամբ:

Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում միջոցառման գծով պլանավորված 539 մլն դրամից փաստացի ծախսվել է 249 մլն դրամ կամ 46.3%-ը: Նախարարությունն իր պայմանագրային պարտավորությունները՝ ըստ 1-ին կիսամյակի, լրիվությամբ կատարել է, մնացած գումարը նախատեսվում է վճարել երկրորդ կիսամյակում լրիվ ծավալով:

Կրթական հաստատություններին ուսումնամեթոդական նյութերով ապահովում միջոցառումը կատարվել է ընդամենը 28%-ով: Չի ծախսվել 86 մլն դրամ: Տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայտարարված մրցույթների արդյունքում փաստացի կնքված պայմանագրերը նախատեսվածից պակաս են, ինչ վերաբերում է մյուս պայմանագրերին, ապա դրանց կնքումը նախատեսվում է առաջիկա եռամսյակներում ըստ նպատակահարմարության:

«Ազգային երգ ու պար» առարկայի ներդրում հանրակրթական ուսումնական հաստատություններում միջոցառումը կատարվել է կիսով չափ: Պատճառն այն է, որ համապատասխան որոշումը ուշ է հաստատվել (ս.թ. մայիսի վերջին), իսկ ֆինանսավորումը շարունակվել է երրորդ եռամսյակում:

Փոխհատուցում ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին միջոցառման կատարողականը 62.4% է: Պատճառն այն է, որ մարզերը ժամանակին չեն ներկայացրել համապատասխան ֆինանսավորման հայտերը, արդյունքում էլ գումարն օգտագործվել է մասնակիորեն:

Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում միջոցառման շրջանակներում պլանային 137 մլն

դրամից փաստացի ծախսվել է շուրջ 88 մլն դրամը (64%): Թերակատարումը պայմանավորված է հաշվետու կիսամյակում տարակարգ ունեցող ուսուցիչների փաստացի և պլանային թվաքանակների տարբերությամբ:

Արդյունքի չափորոշիչները

Ծրագրի արդյունքի չափորոշիչները՝ ըստ համապատասխան միջոցառումների, բերված են աղյուսակ 5.8-ում:

Տարրական ընդհանուր հանրակրթություն միջոցառման մասով ներմուծվել են երկու նոր չափորոշիչներ՝ տարրական ընդհանուր կրթությունն ապահովող հաստատությունների թիվը և տարրական դպրոցների թիվը: Չափորոշիչների թվի ավելացումը դրական դիտարկելով հանդերձ, պետք է արձանագրել, որ ինչպես նոր, այնպես էլ նախկինում սահմանված չափորոշիչները բացառապես քանակական բնույթ ունեն, որոնց կիրառումը թույլ չի տալիս վերհանել միջոցառման կենսագործման որակական արդյունքը:

Աղյուսակ 5.8. Հանրակրթության ծրագրի արդյունքի չափորոշիչները

Արդյունքի չափորոշիչը		Տարեկան ճշտ. պլան	Կիսամյակի ճշտ. պլան	Կիս. փաստ.	Ճեղում
1	Տարրական ընդհանուր հանրակրթություն				
1.1	Տարրական ընդհ. կրթության դասարանների սովորողների թիվը, մարդ	150986	150986	150210	-776
1.2	Տարրական ընդհ. կրթությունն ապահովող հաստատութ.-ների թիվ, հատ				
1.3	Տարրական դպրոցների թիվ, հատ				
1.4.	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատ.				
2	Հիմնական ընդհանուր հանրակրթություն				
2.1	Հիմնական ընդհ. կրթության դասարանների սովորողների թիվը, մարդ	164594	164594	163038	-1556
2.2	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատ.				
3	Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն				
3.1	Միջնակարգ ընդհ. կրթության դասարանների սովորողների թիվը, մարդ	59251	59251	57279	-1972
3.2	Գիտելիքների ստուգման արդյ. սովորողների միջին գնահատականը				
4	Տարրական հատուկ հանրակրթություն				
4.1	Սովորողների թիվ, մարդ	442	563	583	20
4.2	Գիտելիքների ստուգման արդյ. սովորողների միջին գնահատականը				
5	Հիմնական հատուկ հանրակրթություն				
5.1	Սովորողների թիվ, մարդ	626	821	858	37
5.2	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատ.				
6	Միջնակարգ հատուկ հանրակրթություն				

Արդյունքի չափորոշիչը		Տարեկան ճշտ. պլան	Կիսամյակի ճշտ. պլան	Կիս. փաստ.	Ճեղում
6.1	Սովորողների թիվ, մարդ	268	504	504	0
6.2	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատ.				
7	Ներառական կրթություն տարրական դպրոցում				
7.1	Սովորողների թիվ, մարդ	747	747	743	-4
7.2	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատ.				
8	Ներառական կրթություն միջին դպրոցում				
8.1	Սովորողների թիվ, մարդ	1036	1036	1034	-2
8.2	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատ.				
9	Ներառական կրթություն ավագ դպրոցում				
9.1	Սովորողների թիվ, մարդ	110	110	107	-3
9.2	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատ.				
10	Տարրական մասնագիտացված հանրակրթություն				
10.1	Սովորողների թիվ, մարդ	350	350	350	0
10.2	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատ.				
11	Հիմնական մասնագիտացված հանրակրթություն				
11.1	Սովորողների թիվ, մարդ	1542	1542	1542	0
11.2	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատ.				
12	Միջնակարգ մասնագիտացված հանրակրթություն				
12.1	Սովորողների թիվ, մարդ	1407	1407	1342	-65
12.2	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատ.				
13	Նախադպրոցական կրթություն				
13.1	Ճառայությունը ստացող երեխաների թվաքանակը	6965	6965	6899	-66
14	Նորարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում				
14.1	Սովորողների թիվը, մարդ	6000	6000	6000	0
14.2	Այլ դպրոցներում տեղայնացված ծրագրերի թիվը, հատ	14	14	14	0
15	Դպրոցականների օլիմպիադաների անցկացում				
15.1	Հանրապետական առարկայական օլիմպիադաների թիվը, հատ	16	16	16	0
15.2	Միջազգային առարկայական օլիմպիադաների թիվը, հատ	7	7	0	-7
15.3	Միջազգային առարկայական օլիմպ. մեդալակիրների թիվը, մարդ	10			
16	Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում				
16.1	Տարրական դասարանների սովորողներին տրվող դասագրքերի և վարժությունների տետրերի թվաքանակ, հատ	795400	795400	795400	0
17	Կրթական հաստատություններին ուսումնամեթոդական նյութերով ապահովում				
17.1	Ավարտական փաստաթղթեր, հատ	50100			
17.2	Դասամատյաններ, հատ	27550			
17.3	Մեդալներ, հատ	207			
17.4	Մանկավարժական կրթական պարբերականներ, անվանում	13			
17.5	Գովասանագրեր, հատ	50000			
17.6	Հավաստագրեր, հատ	1000			
17.7	Ուսումնադիտողական պարագաներ, հատ	6			

Արդյունքի չափորոշիչը		Տարեկան ճշտ. պլան	Կիսամյակի ճշտ. պլան	Կիս. փաստ.	Շեղում
18	Դպրոցներում STEM կրթության և ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացում				
18.1	Ռոբոտաշինության խմբակների թիվը, հատ	74	74	74	0
18.2	Ինժեներական լաբորատորիաների թիվը, հատ	348	348	348	0
19	«Ազգային երգ ու պար» առարկայի ներդրում հանրակրթական ուսումնական հաստատություններում				
19.1	Վերապատրաստված ուսուցիչների թիվը, մարդ	100	100	100	0
20	Միջնակարգ հանրակրթություն երեկոյան դպրոցում (Շիրակի մարզ)				
20.1	Ծառայությունը ստացող երեխաների թվաքանակը, մարդ	33	33	33	0
20.2	Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատականը				
22	Փոխհատուցում ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին				
22.1	Շահառուների թիվը	237	237	237	0
23	Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում				
23.1	Հանրակրթական դպրոցների թիվը, հատ	196	196	196	0
23.2	Տրանսպորտային ծախսերի փոխհատուցում ստացող դպրոցահասակ երեխաների թիվը, մարդ	1318	1318	1334	16
23.3	Տրանսպ. ծախսերի փոխհատուցում ստացող մանկավարժների թիվը	1166	1166	1139	-27
24	Սոցիալապես անապահով և սահմանամերձ ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում				
24.1	Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների թիվը, մարդ	328			
24.2	Սահմանամերձ համայնքների դպրոցների թիվը, հատ	46			
24.3	Սահմանամերձ համայնքների դպրոցների 5-12-րդ դասարանների սովորողների թիվը, մարդ	5022			
25	Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում				
25.1	Որակավորման տարակարգ ստացած ուսուցիչների թիվը, մարդ	2424	2424	1509	-915
26	Մասնագիտացված հանրակրթական ուսումնական հաստատությունների երեխաների կրթաթոշակ հիմնական ընդհանուր կրթության մակարդակում				
26.1	Կրթաթոշակ տրամադրող դպրոցների թիվը, հատ	6	6	6	0
26.2	Կրթաթոշակ ստացող սովորողների թիվը, մարդ	72	72	72	0
27	Մասնագիտացված հանրակրթական ուսումնական հաստատությունների երեխաների կրթաթոշակ միջնակարգ ընդհանուր կրթության մակարդակում				
27.1	Կրթաթոշակ տրամադրող դպրոցների թիվը, հատ	6	6	6	0
27.2	Կրթաթոշակ ստացող սովորողների թիվը, մարդ	366	366	366	0

Հանրակրթության ծրագրի 1-14 միջոցառումների համար սահմանված չափորոշիչներից թիրախներ են սահմանված միայն սովորողների թիվը բնութագրող չափորոշիչների համար, դրանց շեղումները հիմնականում ոչ էական են և պայմանավորված են սովորողների պլանային և փաստացի թվաքանակներում տեղ գտած տարբերություններով: Մասնավորապես, տարրական ընդհանուր հանրակրթության դասարանների սովորողների փաստացի թիվը պլանայինից

պակաս է 776-ով, հիմնական ընդհանուր հանրակրթության դասարանների սովորողների թիվը՝ 1556-ով, իսկ միջնակարգ ընդհանուր հանրակրթության սովորողների թիվը՝ 1972-ով:

Չետաքրքրական է, որ սովորողների միջին գնահատականի չափորոշիչների համար ս.թ. առաջին եռամսյակի բյուջեում սահմանված էին թիրախային մակարդակներ, որոնք կհամայնակային բյուջեից արդեն իսկ հանված են:

Հատուկ հանրակրթության միջոցառումների արդունքային թիրախները գերակատարվել են, և ինչը հետաքրքրական է՝ դրա համար ոչ միայն փաստացի հավելյալ ֆինանսավորում չի պահանջվել, այլ հակառակը՝ փաստացի ծախսը պլանայինից պակաս է եղել: Այսինքն, այստեղ գործ ունենք արդյունավետության որոշակի աճի դասական օրինակի հետ:

Միջնակարգ մասնագիտացված հանրակրթության թիրախը թերակատարվել է. փաստացի ընդունելությունը պլանայինից 39 աշակերտով պակաս է եղել, բացի այդ, 26 սան տեղափոխվել է այլ ավագ դպրոց: Այստեղ ևս որոշ տևտեսման իրողություն կա: Սովորողների թիվը պլանայինից պակաս է ընդամենը 5%-ով, սակայն փաստացի ֆինանսավորումը պլանավորվածից պակաս է ավելի քան 11%-ով:

Նախադպրոցական կրթություն միջոցառման շրջանակներում ևս որոշ տևտեսում է առկա: Միջոցառումն, ընդհանուր առմամբ, միտված է նախադպրոցական կրթություն մակարդակում սաների ընդգրկվածության, զարգացման բարձր մակարդակի ապահովմանը, տարրական դպրոցին 5-6 տարեկան երեխաների նախապատրաստմանը: Հաշվետու կհամայնակում ծառայությունը ստացել են 6899 երեխաներ, ընդ որում՝ փաստացի թվաքանակը պլանայինից ցածր է ընդամենը 1%-ով, մինչդեռ փաստացի ֆինանսավորումը պլանայինից ցածր է 2.4%-ով:

Դպրոցականների օլիմպիադաների անցկացում միջոցառման թիրախները կատարվել են մասնակիորեն: Այսպես, հաշվետու ժամանակահատվածում նախատեսված էր մասնակցություն 7 միջազգային առարկայական օլիմպիադաների, մինչդեռ փաստացի կատարողականը 0 է: Այս թիրախի իրագործումը տեղափոխվել է հաջորդ եռամսյակներ:

Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում միջոցառման արդյունքի չափորոշիչը՝

որակավորման տարակարգ ստացած ուսուցիչների թիվը կատարվել է 62.2%-ով, գրեթե նույնքան է (իրականում մի փոքր ավելի, որը սակայն կարելի է նշանակալի տարբերություն չհամարել) ֆինանսավորման կատարողականը:

Դիտարկվող ծրագրի արդյունքի չափորոշիչների առնչությամբ պետք է նկատել, որ դրանց մեծ մասի պարագայում կիսամյակային թիրախներ սահմանված չեն, ինչը դժվարացնում է կիսամյակային ծախսերի նպատակայնության ու արդյունավետության գնահատումը: Բացի այդ, հանրակրթության ծրագրի արդյունքի չափորոշիչները ընդգծված քանակական բնույթ ունեն, չեն արտացոլում հանրակրթության տարբեր մակարդակներում ստացվելիք արդյունքի առանձնահատկությունները: Ի հավելումս, հանրակրթության տարբեր մակարդակներում միջոցառումների իրականացման արդյունքները գնահատվում են ընդամենը երկուական չափորոշիչներով, որոնք են՝ շահառուների կամ սովորողների թիվը և միջին գնահատականը: Եվ սա այն դեպքում, երբ այս միջոցառումներին բաժին է ընկնում ոչ միայն տվյալ ծրագրի, այլ ողջ կրթության ոլորտի բյուջետային ֆինանսավորման նշանակալի մասնաբաժինը:

5.5. Արտադպրոցական դաստիարակության ծրագիր

Արտադպրոցական դաստիարակության ծրագրի ծախսերը 2019թ. առաջին կիսամյակում կազմել են 1.74 մլրդ դրամ՝ ապահովելով ժամանակաշրջանի ծրագրի 93.5%-ով կատարում (աղյուսակ 5.9):

Ծրագրում ներառված են 10 միջոցառումներ, որոնցից մեկը՝ **«Քո արվեստը դպրոցում»** միջոցառումը նոր է և միտված է հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող դպրոցականների համար մշակութային կրթության բաղադրիչի լրացմանը: Դրա շրջանակներում հատկացվել է 43 մլն դրամ:

Ֆինանսավորման ամենամեծ մասնաբաժինը **Արտադպրոցական դաստիարակություն** միջոցառման գծով է՝ 1.28 մլրդ դրամ (ծրագրի բոլոր միջոցառումների ֆինանսավորման շուրջ 74%-ը), կիսամյակային պլանի կատարողականը կազմել է 98.9%: Շեղումը (15 մլն դրամ) պայմանավորված է կոմպլեկտավորման փաստացի և պլանային մակարդակների տարբերությամբ:

Կիսամյակային պլանից զգալի շեղումներ են արձանագրվել **Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում** միջոցառման գծով, որի շրջանակներում նախատեսվում է զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և աշխարհագորայինների, ծնողազուրկ և սակավ ապահովված բազմազավակ

ընտանիքների 7-13 տարեկան երեխաների ամառային հանգստի կազմակերպում: Միջոցառման փաստացի ֆինանսավորումը շուրջ 45 մլն դրամով կամ 31 տոկոսով պակաս է պլանայինից, ինչը պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած տևտեսմամբ, ինչպես նաև՝ Արցախի ճամբարի վերաբերյալ վերջնական որոշման բացակայությամբ:

Աղյուսակ 5.9. Արտադպրոցական դաստիարակության ծրագիր

#	Միջոցառումը	Միջոցառման տեսակը ³⁹	Տարեկան ճշգրտ. պլան	Կիսամյակի ճշգ. պլան	Փաստ	Կատ. %, տար. պլ. նկ.	Կատ. %, կիս. պլ. նկ.
1	Արտադպրոցական դաստիարակություն	Ծ	2861,8	1296.4	1281.5	44.8	98.9
2	Մանկապատ. մարզական խաղերի անցկացում	Ծ	9,3	9.3	4.6	49.0	49.0
3	Դպրոցականների հանրապետական սպարտակիադայի անցկացում	Ծ	32,6	32.6	22.8	70,0	70,0
4	Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում	Ծ	480,6	144.2	99.6	20,7	69,1
5	Արտադպրոցական դաստիարակություն հասարակական կազմակերպությունների կողմից	Ծ	626,3	283.7	283.7	45,3	100,0
6	Մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպում	Ծ	7,2	4.9	4.9	68,1	100,0
7	«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր» ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպում	Ծ	7,5	3.4	3.4	45.0	100,0
8	Գրադարանային ֆոնդի համալրում	Ծ	44,4	44.4	0,0	0,0	0,0
9	«Զո արվեստը դպրոցում»	Ծ	43	43	43	73.6	73.6
10	Ուսումնամարզական գործընթացի իրականացում մարզադպրոցներում	S	62,6	28.4	28.4	45.4	100,0
Ընդամենը, ըստ ծրագրի բոլոր միջոցառումների			4142.8	1857.7	1736.7	41.9	93.5

Դպրոցականների հանրապետական սպարտակիադայի անցկացում միջոցառումը թերակատարվել է 10 մլն դրամով կամ 30%-ով: Պատճառն այն է, որ միջոցառման առաջին փուլում իրականացվել են ավելի քիչ թվով մարզաձևերից մրցումներ, քան նախատեսված էր:

Կիսամյակի կատարողականի ցածր մակարդակ է գրանցվել նաև **Մանկապատանեկան մարզական խաղերի անցկացում** միջոցառման գծով (49.0%): Պատճառն այն է, որ ժամանակացույցի համաձայն վճարումների մի մասը պետք է կատարվի միջոցառումների ավարտից հետո:

³⁹ Ծ – ծառայությունների մատուցում, S – տրանսֆերտների տրամադրում, Գ - Այլ պետական կազմակերպությունների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ:

Չի կատարվել **Գրադարանային ֆոնդի համալրում** միջոցառումը: Դրա շրջանակներում հանրապետության դպրոցներից յուրաքանչյուրը պետք է ապահովվեր 5-6 անուն հանրամատչելի գրականությամբ: Միջոցառումը չի կատարվել մրցույթի հետաձգման պատճառով, ինչն էլ, իր հերթին, պայմանավորված է գնման ձևի փոփոխությամբ՝ տեղի է ունեցել էլեկտրոնային աճուրդի փոխարինում գնանշման հարցումով:

Արդյունքի չափորոշիչները

Արդյունքի չափորոշիչները ամփոփ ներկայացված են աղյուսակ 5.10-ում:

Աղյուսակ 10. Արտադպրոցական դաստիարակության ծրագրի արդյունքի չափորոշիչները

Արդյունքի չափորոշիչը		Տարեկան ճշտ. պլան	Կիսամյակի ճշտ. պլան	Կիս. փաստ.	Շեղում
1	Արտադպրոցական դաստիարակություն				
1.1.	Սաների թիվ, հատ	19458	19458	9980	-9478
1.2.	Չաստատությունների թիվ, հատ	44	44	44	0
2	Մանկապատ. մարզական խաղերի անցկացում				
2.1.	Միջոցառումների քանակը, հատ	2	2	2	0
2.2.	Մասնակիցների թիվը, մարդ	21349	21349	21349	0
3	Դպրոցականների հանրապետական սպարտակիադայի անցկացում				
3.1.	Մարզածների թիվ, հատ	9	9	4	-5
3.2.	Միջմարզային և հանրապետական փուլերի մասնակիցների թիվ, մարդ	2551	2551	1236	-1315
4	Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում				
4.1.	Ճամբարների թիվ, հատ	7	7	6	-1
4.2.	Ճամբարներում ամառային հանգիստ անցկացնող երեխաների թիվը, մարդ	4800	1440	780	-560
5	Արտադպր. դաստիարակություն հասարակական կազմակերպությունների կողմից				
5.1.	Մարզական հասարակական կազմակերպությունների թիվ, հատ	3	3	3	0
5.2.	Սաների թիվ, մարդ	5097	5097	4983	-114
5.3.	Մարզադպրոցների թիվ, հատ	22			-
6	Մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպում				
6.1.	Վերապատրաստվող մարզիչ-մանկավարժների թիվ, մարդ	176	88	141	+53
7	«Չակոբ Կոջոյան» կրթահամալիր» ՊՈԱԿ-ում արտադպր. դաստ. կազմակերպում				
7.1.	Կրթահամալիրում սովորող երեխաների թիվ, մարդ	383	383	380	-3
8	Գրադարանային ֆոնդի համալրում				
8.1.	Գրքերի թվաքանակը, հատ	7700	7700	0	-7700
8.2.	Դպրոցների թվաքանակը, հատ	1400	1400	0	-1400
9	«Զո արվեստը դպրոցում»				
9.1.	Ծրագիրը իրականացնող արվեստագետների թիվը (մարդ)	43	43	43	0
10	Ուսումնամարզական գործընթացի իրականացում մարզադպրոցներում				
10.1.	Մարզադպրոցներում սովորող երեխաների թիվ, մարդ	754	754	754	0

Չաշվետու ժամանակահատվածի փաստացի և պլանային արդյունքի չափորոշիչների միջև զգալի շեղում կա **արտադպրոցական դաստիարակություն** միջոցառման գծով: Դրանից օգտվողների փաստացի թիվը մոտ երկու անգամ պակաս է պլանավորվածից, ինչը պայմանավորված է կոմպլեկտավորման պլանով: Չատկանշական է, որ արդյունքային ցուցիչի կատարողականի նման ցածր մակարդակի պայմաններում միջոցառման ֆինանսավորման կատարողականը անհամեմատ բարձր է՝ մոտ 98%:

Ծրագրի մի շարք այլ միջոցառումների պարագայում ևս առկա է դրանցում ներգրավված աշակերտների՝ պլանավորվածից ավելի ցածր մակարդակ: Մյուս կողմից, **մարզիչ-մանկավարժների վերապատրաստման** միջոցառման շրջանակներում փաստացի վերապատրաստված մարզիչ-մանկավարժների թիվը շատ ավելին է, քան պլանավորված էր: Ըստ որում դա հաջողվել է կատարել առանց լրացուցիչ ֆինանսավորման:

Ընդհանուր առմամբ, դիտարկելով **Արտադպրոցական դաստիարակության ծրագրի** արդյունքի չափորոշիչները, պետք է նկատել, որ դրանք բոլորն ունեն ընդգրկման սահմանափակ շրջանակ և բացառապես քանակական են, ուստի՝ չեն նկարագրում միջոցառումների վերջնարդյունքի որակական ասպեկտը, նաև՝ չեն ապահովում ծրագրի նպատակի (այն է՝ նպաստել հանրակրթական ուսուցման համակարգում ընդգրկված երեխաների ֆիզիկական, հոգևոր և գեղագիտական զարգացմանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը) իրագործման աստիճանի մշտադիտարկման և գնահատման հնարավորությունը:

5.6. Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր

Ծրագրի կիսամյակային պլանով նախատեսվել է հատկացնել 6.4 մլրդ դրամ, փաստացի հատկացվել է 5.8 մլրդ դրամ: Կատարողականը կազմել է 91.1% (աղյուսակ 5.11):

Շեղումը հիմնականում առաջացել է ծրագրի ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեցող **գիտական ենթակառուցվածքի արդիականացման** գծով ծախսերում (400 մլն դրամից ավելի): Այսչափ շեղումը (10.6%) պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված հատկացումներով, որոնք ամբողջությամբ չեն օգտագործվել: Նույն պատճառով 40 մլն դրամի շեղում կա ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանության միջոցառման պարագայում:

Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ միջոցառումը թերակատարվել է մոտ 20 մլն դրամով. կատարվել է թեմաների քանակի փոփոխություն՝ պայմանավորված մի շարք թեմաների ավարտմամբ, նաև՝ անցկացված նոր մրցույթները դեռ ամփոփված չլինելով:

Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ և ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարների տրամադրում միջոցառումների շրջանակներում փաստացի ծախսը պլանայինից պակաս է ավելի քան 60 մլն դրամով, ինչը պայմանավորված է հավելավճարների պարագայում մրցութային արդյունքների ոչ ամբողջությամբ ամփոփմամբ, իսկ պատվովճարների դեպքում՝ ակադեմիկոսների և թղթակից անդամների ընտրության՝ հաշվետու ժամանակահատվածում չկայացմամբ:

Արտասահմանյան համալսարաններում հայոց լեզվի դասավանդման կազմակերպում միջոցառման ֆինանսավորումը թերակատարված է 17.4 տոկոսով՝ պայմանավորված Չալցբուրգի համալսարանից համապատասխան հաշվետվության ժամանակին չստացմամբ:

Աղյուսակ 5.11. Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր

#	Միջոցառումը	Միջոցառման տեսակը ⁴⁰	Տարեկան ճշգրտ. պլան	Կիսամյակի ճշգ. պլան	Փաստ	Կատ. %, տար. պլ. նկ.	Կատ. %, կիս. պլ. նկ.
1	Գիտության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծառայություններ	Ծ	191,1	80.7	79.1	41,4	98,0
2	Գիտական ենթակառուցվածքի արդիականացում	Ծ	8576,9	3824.4	3418.9	40,2	89,4
3	Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն	Ծ	1103,2	501.8	460.6	41,8	91,8
4	Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ	Ծ	1595,3	712.5	693.3	43,5	97,3
5	Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ	Ծ	144,0	64.8	64.1	44,5	98,9
6	Գիտ. ամսագրերի և մենագրութ. հրատարակում	Ծ	89,1	34.9	29	32,5	83,1
7	Բարձր Էներգիաների ֆիզիկայի բնագավառի ենթակառուցվածքների արդիականացում	Ծ	846,7	381	363.3	42,9	95,4
8	Արագացուցչային տեխնոլոգիաների զարգացում	Ծ	330,5	148.7	143.5	43,4	96,5
9	Անտենային Էտայոնների պահպանում և զարգացում	Ծ	54,0	24.3	24.3	45,0	100,0
10	Գիտական գրադարանային ծառայություններ	Ծ	147,1	63.7	63.7	43,3	100,0
11	Գիտատեխն. գրադարանային ծառայություններ	Ծ	160,4	69.1	69.1	43,1	100,0
12	Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների հարկային պարտավորությունների փոխհատուցում	Ծ	78.3	78.3	78.3	100,0	100,0
13	Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ	Տ	842,0	378.9	327.2	38,9	86,4
14	ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարների տրամադրում	Տ	182,4	82.1	70.7	38,8	86,1
15	Հայագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրում	Տ	3,6	3.6	3.6	100,0	100,0
16	Արտասահմանյան համալսարաններում հայոց լեզվի դասավանդման կազմակերպում	Տ	20,7	20.7	17.1	82,6	82,6
17	ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում	Պ.Գ	3,85	3.85	2.9	75,3	75,3
18	ՀՀ ԳԱԱ ինստիտուտների տեխնիկական հագեցվածության բարելավում և արդիականացում	Պ.Գ	60,0	27.0	15,0	25,0	55,6
Ընդամենը, ըստ ծրագրի բոլոր միջոցառումների			14272.6	6422.1	5845.4	41.3	91.1

ՀՀ ԳԱԱ ինստիտուտների տեխնիկական հագեցվածության բարելավում և արդիականացում միջոցառման ֆինանսավորումը թերակատարվել է 45 տոկոսով՝ պայմանավորված գնման գործընթացի առանձնահատկություններով՝ պայմանագիրը կնքվել է հունիս ամսվա վերջում:

Արդյունքի չափորոշիչները

⁴⁰ Ծ – ծառայությունների մատուցում, Տ – տրանսֆերտների տրամադրում, Գ - Այլ պետական կազմակերպությունների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ:

Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի արդյունքի չափորոշիչները ամփոփ ներկայացված են աղյուսակ 5.12-ում:

Աղյուսակ 12. Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի արդյունքի չափորոշիչները

	Արդյունքի չափորոշիչը	Տարեկան ճշտ. պլան	Կիսամյակի ճշտ. պլան	Կիս. փաստ.	Շեղում
1	Գիտության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծառայություններ				
	<i>Չափորոշիչներ սահմանված չեն</i>				
2.	Գիտական ենթակառուցվածքի արդիականացում				
2.1.	Ընտրված կազմակերպությունների թիվ, հատ	72	72	72	0
2.2.	Գիտութ. ոլորտում համագործակցող գիտ. կառույցների թիվ, հատ	10	10	8	-2
2.3.	Միջազգային գիտական ծրագրերի թիվ, հատ	90	90	90	0
2.4.	Միջազգ. գիտ. կառույցների թիվ, որոնց անդամակցում է ՀՀ-ն, հատ	3	3	3	0
2.5.	Պետական բյուջեից ֆինանսավորման երաշխավորված գիտական միջոցառումների թիվ, հատ	25	13	13	0
2.6.	Պետական բյուջեից ֆինանսավորման երաշխավորված երիտասարդ գիտնականների դպրոցների թիվ, հատ	12	12	8	-4
2.7.	Գիտական գործուղումների թիվ, հատ	47	24	24	0
2.8.	Գիտական հայտերի փորձաքննությ. քանակ՝ ըստ հայտերի, հատ	300	150	150	0
2.9.	Անկախ փորձագետների /այդ թվում արտասահմանյան/ թվաքանակ, մարդ	1714	1714	1639	-75
2.10.	Փորձաքննության աշխատանքների կազմակերպման համար ստեղծված հանձնախմբերի թիվ, հատ	13	13	13	0
2.11.	Գիտության ոլորտում տեղեկատվական ցանցերի պահպանում և զարգացում իրականացնող կազմակերպությունների թիվ, հատ	1	1	1	0
2.12.	Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացում ծրագրով պետական աջակցություն ստացած կազմակերպությունների թիվ, հատ	5	5	5	0
2.13.	Գիտական կենտրոնների ստեղծում և տեխնոլոգիական հետազոտական համալսարանի պիլոտային ծրագրի իրականացում ծրագրով աջակցություն ստացած գիտական կենտրոնների թիվ, հատ	1	1	1	0
3.	Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն				
3.1.	Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների թիվ, հատ	5	5	5	0
4.	Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ				
4.1.	Թեմաների թիվ, հատ	270	260	236	-24
4.2.	Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների թվաքանակ, մարդ	120	120	120	0
4.3.	Հետազոտական խմբերի միջին թվաքանակ, մարդ	4.3	4.3	4.3	0
5	Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ				
5.1.	Գիտական և գիտատեխն. պետական նպատակային ծրագրեր իրականացնող կազմակերպութ. թիվ, հատ	11	11	10	-1
5.2.	Նպատակային-ծրագրային հետազ. քանակ, հատ	11	11	10	-1
5.3.	Հետազոտական խմբերի միջին թվաքանակ, մարդ	11.4	11.4	11.4	0
6.	Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում				
6.1.	Ամսագրերի և մենագրությունների քանակ, հատ	18	18	18	0

Արդյունքի չափորոշիչը		Տարեկան ճշտ. պլան	Կիսամյակի ճշտ. պլան	Կիս. փաստ.	Շեղում
7.	Բարձր Էներգիաների ֆիզիկայի բնագավառի ենթակառուցվածքների արդիականացում				
7.1.	Ընտրված կազմակերպությունների թիվ, հատ	1	1	1	0
8.	Արագացուցչային տեխնոլոգիաների զարգացում				
8.1.	Ընտրված կազմակերպությունների թիվ, հատ	1	1	1	0
9.	Անտենային Էտալոնների պահպանում և զարգացում				
9.1.	Ընտրված կազմակերպությունների թիվ, հատ	1	1	1	0
10	Գիտական գրադարանային ծառայություններ				
10.1.	Ընթերցողների թիվը	18000	7740	7740	0
10.2.	Գրականության համալրում, միավոր	7500	3060	3060	0
10.3.	Գրքատացք, միավոր	750000	355000	355000	0
10.4.	Գրքատացք/առցանց, միավոր	170000	85000	65000	-20h.
11	Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ				
11.1.	Ձեռք բերված գիտատեխնիկական գրականություն, օրինակ"	380	187	199	12
11.2.	Համալրված Էլեկտրոնային քարտարան, գրառում	16000	7500	8671	1171
11.3.	Գրադ.-յին հիմնապաշարների միջին տացքի ապահովում, տացք	160000	75000	88118	13h.
11.4.	Փաստաթղթերի Էլեկտրոնային առաքման ծառայությունից օգտվող շահառուների թիվը	200	110	193	83
11.5.	"Պատրաստված մատենագիտական ցանկեր, սինթետիկ տեղեկատվական կյուբեր, թիվը"	40	18	38	20
11.6.	Օգտագործված միջազգ. գրադ.-տեղեկատվական բազաներ, թիվը	25	18	35	17
11.7.	Նոր գրականության ցուցահանդես, ցուցահանդես	40	18	37	19
12.	Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ				
12.1.	Կազմակերպությունների թիվ	82	82	82	0
13.	ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարների տրամադրում				
13.1.	ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների թվաքանակը, մարդ	101	101	101	0
14.	Հայագիտության ոլորտում գիտ. կադրերի պատրաստ. գծով նպաստների տրամադրում				
14.1.	Վերապատրաստված ուսուցիչների թվաքանակը, մարդ	60	60	60	0
14.2.	Մասնակից երկրների թիվը, հատ	17	17	17	0
14.3.	Տրամադրված ուսումնական կյուբերի թիվը, հատ	50	50	50	0
15.	Արտասահմանյան համալսարաններում հայոց լեզվի դասավանդման կազմակերպում				
15.1.	Դասախոսների թվաքանակը, մարդ	6	6	6	0
15.2.	Ուսանողների թվաքանակը, մարդ	40	40	40	0
16.	ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում				
	<i>Չափորոշիչներ սահմանված չեն</i>				
17.	ՀՀ ԳԱԱ ինստիտուտների տեխն. հագեցվածության բարելավում և արդիականացում				
17.1.	Կազմակերպությունների թիվ	20	20	1	-19
17.2.	Լաբորատոր սարքավորումներ, հատ	5	3	1	-2
17.3.	Սարքավորումների ծառայութ. կանխատեսվող միջին ժամկետ, տարի	7	7	7	0

Թերակատարված չափորոշիչներից առանձնացրել ենք հետևյալները.

- ✓ **Գիտական կառուցվածքի արդիականացում** միջոցառման շրջանակներում գիտության ոլորտում համագործակցող գիտական կառույցների թիվը 2-ով պակաս է պլանավորվածից, այս տարբերությունը կազմակերպական ինդիկսներով է պայմանավորված և կիրականացվի առաջիկա եռամսյակներում, նույն պատճառով պետական բյուջեից ֆինանսավորման երաշխավորված երիտասարդ գիտնականների դպրոցների թիվը պլանայինից պակաս է 4-ով, ներգրավված անկախ փորձագետների թիվը ևս պլանայինից պակաս է, տարբերությունը նույնպես պլանավորվում է լրացնել առաջիկա եռամսյակներում,
- ✓ **Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ** միջոցառման շրջանակներում ֆինանսավորվել է 236 թեմա՝ 260-ի փոխարեն: Տարբերությունը պայմանավորված է մի շարք թեմաների ավարտմամբ:
- ✓ **Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ** միջոցառման շրջանակներում ձեռք բերված գրականությունը ավելին է, քան պլանավորված էր: Պատճառն այն է, որ գրականության ձեռքբերումն իրականացվում է արտերկրյա բաժանորդագրության միջոցով, իսկ գրականության հրատարակման ժամկետների ճշգրիտ կանխատեսում իրատեսական չէ: Նույն միջոցառման շրջանակներում, ընթերցողների կողմից ներկայացված պահանջարկի մեծացմամբ պայմանավորված, կատարողականի մի շարք այլ արդյունքային ցուցիչներ գերակատարվել են:
- ✓ **ՀՀ ԳԱԱ ինստիտուտների տեխնիկական հագեցվածության բարելավում և արդիականացում** միջոցառման կազմակերպությունների թվի, նաև՝ սարքավորումների քանակի չափորոշիչները էականորեն թերակատարվել են՝ պայմանավորված գնման գործընթացի առանձնահատկություններով և հաջորդ եռամսյակում պլանային ցուցանիշները արդեն իսկ կատարվել են:

Ծրագրի միջոցառումների արդյունքի չափորոշիչների մասով ևս կարելի է անել նույն դիտարկումները, ինչ նախորդների դեպքում: Մտահոգիչ է, որ գիտության ոլորտում քաղաքականության համար պատասխանատու մարմնի գործունեության արդյունքի չափորոշիչները բացակայում են: Բացի այդ, **Գիտական ենթակառուցվածքի արդիականացում** միջոցառման նկարագրությունը բավականին լայն է՝ գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացում, ծրագրերի իրականացում, գիտական

սարքավորումների արդիականացում, միջազգային համագործակցության աջակցություն: Մեր մոտեցմամբ, արդյունքի չափորոշիչները այս թվարկածներին համապատասխան պետք է լինեն: Մինչդեռ դրանք պարզ քանակական բնույթ են կրում, չեն արտացոլում կամ մակերեսորեն են նկարագրում գիտական կազմակերպությունների կամ ստորաբաժանումների զարգացման, սարքավորումների արդիականացման, միջազգային համագործակցության աջակցության դիտակետերը:

5.7. Ապահով դպրոց ծրագիր

Ծրագրի նպատակը դպրոցներին սպառնացող աղետների ռիսկի կառավարման կարողությունների հզորացումն է, դպրոցի անձնակազմի և աշակերտների անվտանգության ապահովման մակարդակի բարձրացումը՝ կիրառելով ներառական և երեխայակենտրոն մոտեցում: Ծրագրի 4 միջոցառումներով պլանավորված էր հատկացնել 552.2 մլն դրամ, սակայն փաստացի հատկացումը կազմել է 211.6 մլն դրամ (կատարողականը՝ 38.3%, աղյուսակ 5.13):

Շեղումը հիմնականում պայմանավորված է կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավման միջոցառման թերակատարմամբ (մոտ 263 մլն դրամով). շինարարական օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերը մասնակի լրամաշակման և լրամաշակման փուլում են, ինչպես նաև որոշ կատարողական ակտեր ներկայացվել են հունիս ամսվա վերջին:

Աղյուսակ 5.13. Ապահով դպրոց ծրագիր

#	Միջոցառումը	Միջոցառման տեսակը	Տարեկան ճշգրտ. դրամ	Կիսամյակի ճշգ. պլան	Փաստ	Կատ. %, տար. պլ. նկ.	Կատ. %, կիս. պլ. նկ.
1	Դպրոցների համալիր անվտ. ապահովում	Ծ	14,2	14.2	0,0	0,0	0,0
2	Դպրոցական երեխաներին սննդով ապահովում	Տ	45,7	25.1	12.1	26,5	48,2
3	Կրթ. օբյեկտների շենք. պայմանների բարելավում	Գ	1060,1	462.7	199.5	18,8	43,1
4	Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթ. դպրոցների մոդուլային շենքերի կառուցում	Գ	50,2	50.2	0,0	0,0	0,0
Ընդամենը, ըստ ծրագրի բոլոր միջոցառումների			1170,2	552.2	211.6	18.1	38.3

Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցում միջոցառման կատարողականը գրոյական է: ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 27-ի N 788-Ն որոշմամբ տեղի է ունեցել

գումարների վերաբաշխում: Դպրոցների համալիր անվտանգության ապահովում միջոցառմամբ ևս հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ չեն կատարվել, ինչը պայմանավորված է դրամաշնորհային մրցույթի արդյունքների՝ հաջորդ եռամսյակում ամփոփմամբ:

Արդյունքի չափորոշիչները

Արդյունքի չափորոշիչները՝ ըստ միջոցառումների, ներկայացված են աղյուսակ 5.14-ում:

Դպրոցների համալիր անվտանգության ապահովում միջոցառման արդյունքի ցուցիչները, ինչպես վերևում արձանագրվեց, գրոյական մակարդակի վրա են՝ մրցույթի արդյունքների ուշ ամփոփման պատճառով:

Դպրոցական երեխաներին սննդով ապահովում միջոցառման արդյունքի չափորոշիչը թերակատարվել է: Փաստացի շահառուները 48,5 հազար երեխաներ են, այն դեպքում, երբ պլանայինը 60 հազար է: Տարբերությունը պայմանավորված է մարզերի դպրոցների փաստացի կոմպլեկտավորմամբ: Նկատենք նաև, որ միջոցառման մյուս արդյունքի չափորոշիչը գրոյական մակարդակի վրա է, քանի որ սովորողներին հատկացված սննդի գումարը ներառվել է հանրակրթության մեջ:

Աղյուսակ 5.14. Ապահով դպրոց ծրագրի արդյունքի չափորոշիչները

	Արդյունքի չափորոշիչը	Տարեկան ճշտ. պլան	Կիսամյակի ճշտ. պլան	Կիս. փաստ.	Չեղում
1	Դպրոցների համալիր անվտանգության ապահովում				
1.1.	Ռազմագիտական ուսումնադիրական կարգի կայաններ, հատ	7000	7000	0	-7000
1.2.	Դպրոցների համամասնությունը, որտեղ առկա են երեխաներին ուղղված և ներառական աղետների ռիսկի կառավարման պլաններ, տոկոս	6	6	0	-6
1.3.	Դպրոցների թիվը, որտեղ առկա են աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) ներառական պլաններ, հատ	-	-	-	-
2.	Դպրոցական երեխաներին սննդով ապահովում				
2.1.	Նախակրթարաններում և տարրական դասարաններում սնունդ ստացող սովորողների թիվը, մարդ	563	563	0	-563
2.2.	Պարենի համաշխարհային ծրագրի շրջանակում սնունդ ստացող սովորողների թիվը	60000	60000	48549	-11.5h
3.	Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավում				
3.1.	Կազմակերպությունների թիվը, որտեղ կատարվում են ներդրումները, հատ	6	6	5	-1
3.2.	Աշխատանքների ավարտվածության աստիճանը, %	100	44	43.1	-0.9
4.	Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթ. դպրոցների մոդուլային շենքերի կառուցում				
4.1.	Նախագծվող դպրոցների քանակը (հատ)	22	22	0	-22
4.2.	Կառուցվող դպրոցների աշակերտների միջին թվաքանակ, աշակերտ	99	99	0	-99
4.3.	Աշխատանքների ավարտվածության աստիճանը, %	100	100	0	-100

Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավում միջոցառման արդյունքային չափորոշիչներից է ներդրումներ արվող կազմակերպությունների թիվը, որի փաստացին մեկով պակաս է պլանայինից: Պատճառը շինարարի կողմից կատարողական ակտերի ուշ ներկայացումն է: Արդյունքում աշխատանքների ավարտվածության աստիճանը պետք է լիներ 44%, սակայն փաստացի 43,1 տոկոս է:

Ծրագրի միջոցառումների արդյունքի չափորոշիչների առնչությամբ պետք է նկատել, որ դրանք բնութագրում են միայն ծախսերի տեխնիկական կամ միջանկյալ արդյունքը: Իսկ վերջնարդյունքը, ըստ եռության, մնում է չնկարագրված, ինչը խնդիրներ կարող է հարուցել ծրագրի միջոցառումների արդյունավետության լիարժեք գնահատման ու մշտադիտարման գործընթացում:

5.8. Կրթության որակի ապահովում ծրագիր

Ծրագրի նպատակը ընթացիկ աշխատանքների, բարեփոխումների և նոր նախաձեռնությունների միջոցով ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ոլորտում իրականացվող միջոցառումների, մատուցվող ծառայությունների բովանդակության և կազմակերպման որակի շարունակական բարելավումն է: Ծրագրի շրջանակներում նախատեսված են 14 միջոցառումներ՝ կիսամյակային ծախսերի 2,27 մլրդ դրամ պլանով: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի կատարվել է 1 մլրդ դրամի ծախս, կատարողականը կազմել է 45,6% (աղյուսակ 5.15):

Աղյուսակ 5.15. Կրթության որակի ապահովում ծրագիր

#	Միջոցառումը	Միջոցառման տեսակը ⁴¹	Տարեկան ճշգրտ. պլան	Կիսամյակի ճշգ. պլան	Փաստ	Կատ. %, տար. պլ. նկ.	Կատ. %, կիս. պլ. նկ.
1	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) բարեփոխումներ	Ծ	154,7	64.7	38.7	25,0	59,8
2	Նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթ. որակի ապահովման ծառայություններ	Ծ	64,3	32.2	32.2	50,1	100,0
3	Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի անդամակցությամբ պայմանավորված բարձրագույն մասնագիտ. կրթ. համակարգի բարեփոխումներ	Ծ	27,9	13.9	13.9	50,0	100,0
4	Գիտական որակավորման պարբերական գործընթացի համակարգում և մոնիտորինգ	Ծ	77,2	32.9	29.4	38,1	89,4
5	Գիտական աստիճանաշնորհման և գիտամանկավարժական կոչումների շնորհում	Ծ	63,4	28.5	6.4	10,1	22,5
6	Կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում	Ծ	443,3	187.9	0,0	0,0	0,0
7	Հանրակրթական դպրոցների ուսուցիչների ատեստավորման ծառայություններ	Ծ	4,0	0,0	0,0	0,0	0,0
8	Կրթության ոլորտում ՏՀՏ ներդրում և շարունակականության ապահովում	Ծ	202.6	83.6	79.8	39,4	95,5
9	Գնահատման և թեստավորման ծառայություններ	Ծ	494,7	321.6	321.6	65,0	100,0
10	Ատեստավորման նոր համակարգի ներդրում ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը	Ծ	852,4	258.7	0,0	0,0	0,0
11	Համաշխարհային բանկի կողմից իրականացվող «Կրթության բարելավում» վարկային ծրագիր	Ծ	693,6	253.2	151.2	21,8	59,7
12	Աջակցություն հայկական կրթօջախներում դասավանդման որակի բարելավմանը	Ծ	33,8	0,0	0,0	0,0	0,0
13	Կրթության և գիտության ոլորտի այլ միջոցառումներ	Ծ	2597.4	312.7	0,0	0,0	0,0

⁴¹ Ծ – ծառայությունների մատուցում, Տ – տրանսֆերտների տրամադրում, Գ - Այլ պետական կազմակերպությունների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ:

#	Միջոցառումը	Միջոցառման տեսակը ⁴¹	Տարեկան ճշգրտ. պլան	Կիսամյակի ճշգ. պլան	Փաստ	Կատ. %, տար. պլ. նկ.	Կատ. %, կիս. պլ. նկ.
1 4	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավման ծրագիր» ծրագրի շրջանակներում կապիտալ ներդրումներ ավագ, միջնակարգ և հիմնական դպրոցներում և կրթության ոլորտի կազմակերպություններում /ԿՏԱԿ/	Գ	3096,9	678.6	361. 2	11.7	53.2
Ընդամենը, ըստ ծրագրի բոլոր միջոցառումների			8806.2	2268.5	1034.4	11.7	45.6

Շեղումը հիմնականում պայմանավորված է **Ատեստավորման նոր համակարգի ներդրում ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը** միջոցառման չկատարմամբ (չի օգտագործվել պլանավորված 258,7 մլն դրամը): Միջոցառմամբ նախատեսվում էր մշակել և ներդնել հանրակրթական դպրոցներում դասավանդող ուսուցիչների կամավոր ատեստավորման համակարգ: Ժամանակացույցի փոփոխությամբ պայմանավորված սույն միջոցառումը նախատեսվում է իրականացնել երկրորդ կիսամյակում:

Կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում միջոցառումը ևս չի կատարվել, արդյունքում չի բաշխվել 188 մլն դրամ: Սա պայմանավորված է «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ը կազմակերպության լուծարային գործընթացով:

Համաշխարհային բանկի կողմից իրականացվող «Կրթության բարելավում» վարկային ծրագրի հանրակրթության որակի բարելավում, աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը բաղադրիչներով փաստացի կատարվել է 151 մլն դրամի ծախս՝ պլանայինից 100 մլն դրամով պակաս: Տարբերությունը պայմանավորված է համապատասխան քանակի փորձագետների առկայության պակասով, որի արդյունքում բուհերի հայտերի գնահատման գործընթացը հետաձգվել է: Բացի այդ, հաշվետու ժամանակահատվածում Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում ծառայությունների մատուցման և ավագ, միջնակարգ ու հիմնական դպրոցներում և կրթության ոլորտի կազմակերպություններում կապիտալ ներդրումների ֆինասավորման նպատակով նախատեսված 680 մլն դրամից օգտագործվել է 361 մլն դրամը կամ 53%-ը: Կատարողականի նման ցածր մակարդակը պայմանավորված

Է կապված բանկային երաշխիքների ուշացման պատճառով 3 դպրոցների կանխավճարների չտրամադրմամբ:

Կրթության և գիտության ոլորտի այլ միջոցառումների գծով նախատեսված 313 մլն դրամը չի օգտագործվել: Պատճառն այն է, որ դրանց կատարողներ դեռևս ընտրված չեն: Նկատենք, որ միջոցառման եռամսյակային, կիսամյակի և տարվա ճշտված պլաններն էապես տարբերվում են հաստատվածներից, ընդ որում՝ վերանայումն արվել է նվազման ուղղությամբ:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) բարեփոխումներ միջոցառումը, որը ենթադրում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության չափորոշիչների մշակման, վերանայման, ինչպես նաև դասախոսների վերապատրաստման միջոցով ՄԿՈԼ կրթության որակի բարելավում, կատարվել է 60 տոկոսով՝ պլանավորված 65 մլն դրամից օգտագործվել է 39 մլն դրամը: Պատճառը վերստին այն է, որ «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ը կազմակերպությունը գտնվում է լուծարման գործընթացում, իսկ նշված գործառնությունների կատարման կազմակերպումը նախկինում վերապահվում էր հենց այս հաստատությանը:

Գիտական աստիճանաշնորհման և գիտամանկավարժական կոչումների շնորհում միջոցառումը կատարվել է 22,5 տոկոսով՝ չի օգտագործվել 22 մլն դրամ: Պատճառը փաստացի գիտական աստիճանների և գիտական կոչումների նվազումն է:

Արդյունքի չափորոշիչները

Աղյուսակ 5.16-ում ներկայացված են ծրագրի արդյունքի չափորոշիչները:

Աղյուսակ 5.16. Կրթության որակի ապահովում ծրագրի արդյունքի չափորոշիչները

	Արդյունքի չափորոշիչը	Տարեկան ճշտ. սլան	Կիսամյակի ճշտ. սլան	Կիսամյակի փաստ.	Շեղում
1.	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) բարեփոխումներ				
1.1.	Պետական կրթական չափորոշիչների մշակում, հատ	0			-
1.2.	Մշակված չափորոշիչների համապատասխան ուսումնական և մոդուլային ուսումնական ծրագրերի մշակում, հատ	0			-
1.3.	Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտ. հաստատությունների վերապատրաստում անցած ղեկավարների, մանկավարժների, փորձագետների և աշխատողների թվաքանակը, մարդ	465			-

	Արդյունքի չափորոշիչը	Տարեկան ճշտ. պլան	Կիսամյակի ճշտ. պլան	Կիսամյակի փաստ.	Շեղում
1.4.	Վերապատրաստման դասընթացների մասնակցած անձանցից հավաստագիր ստացած մանկավարժների տես. կշիռը, տոկոս	100			-
1.5.	Փորձագիտ. դրական եզրակացություն ստացած պետ. կրթ. մասնագիտ. չափորոշիչների և մոդուլային ծրագրերի տես. կշիռը, տոկոս	100			-
1.6.	Մշակված և վերանայված նախնական և միջին մասնագիտ. կրթ. մասնագիտությունների և որակավորումների պետ. կրթական չափորոշիչների համապատ. մոդուլային ծրագրերի մշակում, հատ	24			-
1.7.	Նախնական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների պետական կրթական չափորոշիչների մշակում և վերանայում, հատ	24			-
2.	Նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայություններ				
2.1.	Մասնագիտական ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման կազմակերպում	15	10	15	5
2.2.	Հիմնադրամի տարեկան ինքնավերլուծության իրականացում: Տարեկան ինքնավերլուծությունը նպատակաուղղված է հիմնադրամի ուժեղ և թույլ կողմերի վերհանմանը, կանխատեսելու հետագա գործողությունները և բարձրացնելու որակի ապահովման մասին հասարակության իրազեկվածությունը	1	1	1	0
2.3.	Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համակարգերի մշտադիտարկման իրականացում	10	5	5	0
2.4.	Մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնագիտական կրթական ծրագրերի հավատարմագրման կազմակերպում	5	5	2	-3
2.5.	Մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների գիտելիքների ընթացիկ և ամփոփիչ գնահատման չափանիշների և մեթոդների մշակման ուղղությամբ խորհրդատվության տրամադրում աշխատաժողովների միջոցով	2	1	1	0
2.6.	Հիմնադրամի աշխատակիցների վերապատրաստում, մարդ	10	7	7	0
2.7.	Հիմնադրամի գործ. վերաբերյալ հասարակությանն իրազեկում	50	25	32	7
2.8.	Ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած բուհերի և փորձնական ծրագրային հավատարմագրում անցած մասնագիտությունների մշտադիտարկման իրականացում	10	6	6	0
3.	Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի անդամակցությամբ պայմանավորված բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներ				
3.1.	Բոլոնիայի գործընթացին հետամուտ խմբում աշխատանքային և խորհրդատվական խմբերում ՀՀ մասնակցությունների թիվը	4	4	4	0
3.2.	Եվրոպական բարձրագույն կրթ. տարածքի ինտեգրմանն ուղղված բարեփոխումների իրականացման աշխատանքներ, միջոցառումներ	5	2.25	2.25	0
4.	Գիտական որակավորման պարբերական գործընթացի համակարգում և մոնիտորինգ				
4.1.	Պետական մարմնի թիվը	1	1	1	0
5.	Գիտական աստիճանաշնորհման և գիտամանկավարժական կոչումների շնորհում				
5.1.	Շնորհվող գիտական աստիճանների թիվը	390	176	108	-68
5.2.	Շնորհվող գիտական կոչումների թիվը	490	221	89	-132
6.	Կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում				
6.1.	Ուսուցիչների մասնագիտական որակի և մասնագիտության վարկանիշի բարձրացման նպատակով հանրապետության վերապատրաստվող ուսուցիչների թիվը	9000			-
6.2.	Հրատարակվող հոդվածների և ուղեցույցների թիվը	180			-
6.3.	Մշակվող և փորձագիտական եզրակացություն ստացող էջերի թիվը	-			-
6.4.	Հանրակրթ. մշակման ու վերամշ. չափորոշիչների և ծրագրերի թիվը	20			-

	Արդյունքի չափորոշիչը	Տարեկան ճշտ. պլան	Կիսամյակի ճշտ. պլան	Կիսամյակի փաստ.	Շեղում
7.	Հանրակրթական դպրոցների ուսուցիչների ատեստավորման ծառայություններ				
7.1.	Հանրակրթ. դպրոցների ատեստավորված ուսուցիչների քանակ	7000			-
8.	Կրթության ոլորտում ՏՀՏ ներդրում և շարունակականության ապահովում				
8.1.	Ուսումնական հաստատությունների քանակը	1662	1662	1420	-242
8.2.	Էլեկտրոնային ռեսուրսների մշակում և ներդրում	1	1	1	0
9.	Գնահատման և թեստավորման ծառայություններ				
9.1	Միջնակարգ դպրոցի պետ. ավարտ. քնն. մասնակցողների թիվը	17831	17831	17803	-28
9.2	Հիմնական դպրոցի ավարտական քննութ. մասնակցողների թիվը	30995	30994	30962	-32
9.3	11-րդ դասարանի քննություններին մասնակցողների թիվը	17831	18795	0	-18h
9.4	«Պատիվ ունեմ» ծրագրի մասնակցողների թիվը	1000	1000	763	-237
9.5	Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցողների թիվը	20000	10000	0	-10h
9.6	TIMSS PIRLS-2019 փորձնական փուլի մասնակիցների թիվը	3200	0	0	0
9.7	Ազգային ստուգատեսին մասնակցողների թիվը	3500	3500	0	-3.5h
9.8	PISA միջազգային ստուգատեսի նախապատրաստական աշխատանքների իրականացում և անցկացում, տոկոս	20	-	-	-
10.	Ատեստավորման նոր համակարգի ներդրում ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը				
10.1	Կամավոր ատեստավորված ուսուցիչների թվաքանակը	1982	1982	0	-1982
10.2	Կամավոր ատեստավորման արդյունքում հավելվածար ստացող ուսուցիչների թվաքանակը	1585	475	0	-475
11.	Համաշխ. բանկի կողմից իրականացվող «Կրթության բարելավում» վարկային ծրագիր				
11.1	Ստեղծվող նախակրթարանների թիվը	17	17	18	1
11.2	Նորարարութ. մրցակց. հիմնադրամից օգտվող բուհերի քանակը	5	5	3	-2
11.3	ՏՀՏ ուղղությամբ դպրոցների վերապատրաստված ուսուցիչների և արմինիստորատիվ աշխատակիցների թիվը	1500	500	698	198
11.4	Լրամշակված հանրակրթական առարկայական չափորոշիչների և ծրագրերի նախնական տարբերակներով ուսումնական բնագավառների թիվը	9	-	-	-
12	Աջակցություն հայկական կրթօջախներում դասավանդման որակի բարելավմանը				
12.1	Վերապատրաստված ուսուցիչների թիվը, մարդ	60			-
12.2	Մասնակից երկրների թիվը, հատ	17			-
12.3	Տրամադրված ուսումնական նյութերի թիվը, հատ	50			-
13.	Կրթության և գիտության ոլորտի այլ միջոցառումներ				
14.	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավման ծրագիր» ծրագրի շրջանակներում կապիտալ ներդրումներ ավագ, միջնակարգ և հիմնական դպրոցներում և կրթության ոլորտի կազմակերպություններում /ԿՏԱԿ/				
14.1	Ծրագրի առաջին փուլով ընտրված հիմնանորոգվող ավագ դպրոցների թիվ, հատ	-	-	-	-
14.2	Ծրագրի երկրորդ փուլով ընտրված հիմնանորոգվող ավագ դպրոցների նվազագույն թիվը	6	6	7	1
14.3	«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ (ԿՏԱԿ)-ի հիմնանորոգվող գրասենյակային տարածք	1	1	1	0

	Արդյունքի չափորոշիչը	Տարեկան ճշտ. պլան	Կիսամյակի ճշտ. պլան	Կիսամյակի փաստ.	Շեղում
14.4	Բնագիտական չորս առարկաների (ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն և կենսաբանություն) գծով լաբորատոր սարքավորումներ և կահույք ստացող ավագ դպրոցների տոկոսը 33 բոլոր ավագ դպրոցների ընդհանուր թվաքանակի մեջ	85			-
14.5	Համակարգչային սարքավորումներ ստացող դպրոցների տոկոսը գնահատված կարիքների հիման վրա համակարգչային սարքավորումների թարմացման կարիք ունեցող դպրոցների ընդհանուր թվաքանակի մեջ	5			-

Նկատենք, որ **Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումներ** միջոցառման շրջանակներում պետական կրթական չափորոշիչների մշակում արդյունքային չափորոշիչի պլանային մակարդակը սկզբնապես 12 էր, սակայն վերանայման արդյունքում իջեցվեց գրոյի: Նույնը՝ չափորոշիչների համապատասխան ուսումնական և մոդուլային ուսումնական ծրագրերի մշակման մասով է:

Նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայություններ միջոցառման Մասնագիտական ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման կազմակերպում արդյունքի չափորոշիչի մասով փաստացի կատարողականը 5-ով ավելին է, քան պլանավորված էր: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ հավատարմագրման է դիմել ավելի շատ բուհ, քան նախատեսված էր: Մյուս կողմից, Մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնագիտական կրթական ծրագրերի հավատարմագրման կազմակերպում չափորոշիչի գծով կա թերակատարում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2 բուհ չի դիմել ծրագրային հավատարմագրման՝ ինստիտուցիոնալ հավատարմագրումն անցած չլինելու պատճառով:

Տարակուսելի կարելի է համարել **Եվրոպական բարձրագույն կրթ. տարածքի ինտեգրմանն ուղղված բարեփոխումների իրականացման աշխատանքներ, միջոցառումներ** չափորոշիչի պլանային մակարդակ է սահմանված 2,25-ը (մնում է կռահել, թե ինչ ասել է միջոցառման 0,25-րդ մաս), ավելին՝ այդ մակարդակը լրիվությամբ կատարվել է:

Գիտական աստիճանաշնորհման և գիտամանկավարժական կոչումների շնորհում միջոցառման արդյունքի չափորոշիչների՝ շնորհվող գիտական կոչումների

և աստիճանների թվի մասով զգալի թերակատարում կա: Կարելի է պնդել, որ գիտական աստիճանաշնորհման ընթացակարգերի՝ օրենքից բխող խստացումներով պայմանավորված աստիճանաբար ավելի քիչ թվով անձինք են ցանկություն արտահայտում ներգրավվել այդ գործընթացներում, ինչը ողջունելի ենք համարում:

Կրթության ոլորտում ՏՀՏ ներդրում և շարունակականության ապահովում միջոցառման շրջանակներում Ուսումնական հաստատությունների քանակը արդյունքի չափորոշի պլանային մակարդակը թերակատարվել է, ինչը պայմանավորված է հատկացված միջոցների շրջանակում հնարավոր ընդգրկված ուսումնական հաստատությունների փաստացի թվաքանակով:

Գնահատման և թեստավորման ծառայություններ միջոցառման չափորոշիչների զգալի թերակատարում կա: Ի մասնավորի, 11-րդ դասարանի քննություններին մասնակցողների թիվը հաշվետու ժամանակահատվածում զրոյական է, այն դեպքում, երբ պլանային թիրախը 18.8 հազար է: Պատճառն այն է, որ 11-րդ դասարանում քննություններ չեն անցկացվել: Նույն կերպ, «Պատիվ ունեմ» ծրագրի մասնակցողների թիվը 23 տոկոսով պակաս է պլանավորվածից: Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցողների թիվը հաշվետու ժամանակահատվածում զրոյական է, այն դեպքում, երբ պլանայինը 10 հազար է: Այսօրինակ տարբերության պատճառը քննությունների կարգի հետ կապված փոփոխություններն են. արտաքին ընթացիկ գնահատումը տեղափոխվել է հաջորդ եռամսյակ: Նույն պատճառով ազգային ստուգատեսին մասնակցողների փաստացի թիվը զրոյական է: Պետք է արձանագրել նաև, որ սույն միջոցառման բոլոր արդյունքի չափորոշիչները նոր են ներմուծվել, առաջին եռամսյակի բյուջեի ձևաչափերում դրանք պարզապես բացակայում էին:

Ատեստավորման նոր համակարգի ներդրում ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը միջոցառման կատարումը տեղափոխվել է երկրորդ կիսամյակ, ինչով պայմանավորված հաշվետու ժամանակահատվածում թիրախների իրագործումը զրոյական մակարդակի վրա է:

Համաշխարհային բանկի կողմից իրականացվող «Կրթության բարելավում» վարկային ծրագրի արդյունքի չափորոշիչներից երկուսի մասով գերակատարում է արձանագրվել: Մասնավորապես, ՏՀՏ ուղղությամբ դպրոցների վերապատրաստված ուսուցիչների և ադմինիստրատիվ աշխատակիցների թիվը պլանավորվածից ավելին է, ինչը պայմանավորված է ուսուցիչների թվաքանակի աճով, որն առաջացել է ի հաշիվ հուլիս-օգոստոս ամիսներին նախատեսված

ուսուցիչների տեղաշարժով: Մյուս կողմից, նորարարությունների մրցակցային հիմնադրամից օգտվող բուհերի քանակը նախատեսված 5-ի փոխարեն 3-ն է:

Բացի այդ, Համաշխարհային բանկի կողմից իրականացվող վարկային ծրագրի մեկ այլ միջոցառման շրջանակներում՝ ծրագրի երկրորդ փուլով ընտրված հիմնանորոգվող ավագ դպրոցների նվազագույն թիվը պլանային 7-ի փոխարեն ավելացել է 1-ով, ինչը հնարավոր է դարձել մրցույթի արդյունքում առաջացած տնտեսումների հետևանքով:

Ընդհանուր առմամբ, **Կրթության որակ** ծրագրի միջոցառումների արդյունքային չափորոշիչները համեմատաբար ավելի մեծ թիվ են կազմում: Ուշագրավ է, որ դրանք դետալացված են հատկապես այն միջոցառումների պարագայում, որոնք կատարվում են Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում: Մինչդեռ մյուս միջոցառումների պարագայում առկա է նույն խնդիրը՝ արդյունքի չափորոշիչները բավարար խորություն և ընդգրկման շրջանակ չունեն, պարզունակ են, ունեն զուտ քանակական բովանդակություն և չեն արտացոլում միջոցառումների որակական կողմը:

Պետք է նկատել, որ ծրագիրը չնայած միտված է կրթության որակի բարելավմանը, սակայն արդյունքի չափորոշիչների կազմում որակական բնութագրիչ չի պարունակում: Ստացվում է, որ որակի գնահատումը կատարվում է քանակական, առավել ևս՝ մակերեսային բնույթ ունեցող, ոչ խորքային ցուցանիշների կիրառմամբ: Ըստ եռության, արդյունքի չափորոշիչների մեջ տեղ են գտել այն ցուցանիշները, որոնք նախկինում դիտարկվում և որպես ուղենիշ էին ընդունվում ծախսային բյուջետավորման ժամանակ: Դրանց հիման վրա դուրս էին ծախսային պահանջի գնահատականները, իսկ հիմա պարզապես փոխվել է դրանց դերակատարումը՝ ինքնաբերաբար դառնալով արդյունքի չափորոշիչներ:

Կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում միջոցառման նկարագրությունը ներառում է՝ հանրակրթության պետական կրթական չափորոշիչների մշակում, վերանայում; ուսուցիչների մասնագիտական հմտությունների զարգացում և բարելավում: Մինչդեռ արդյունքի սահմանված չափորոշիչները այս բովանդակության հետ ուղղակի կապ չունեն: Օրինակ՝ չափորոշիչներով կարելի է ծածկել ուսուցիչների մասնագիտական հմտությունների գնահատականները, մշտադիտարկման ենթարկել դրանք:

Կրթության ոլորտում ՏՀՏ ներդրում և շարունակականության ապահովում միջոցառումը բավականին լայն է՝ ՀՀ կրթական ցանցի մշտադիտարկում, «ՀԿՄՊ»-ի և ենթակայքերի սպասարկում, հեռավար դասընթացների կազմակերպում, հանրակրթական ուս. հաստատությունների գործունեության մասին վիճակագրական տվյալների հավաքում, մշակում, շարժական ինտերնետային կայանի շահագործում և այլն: Մինչդեռ արդյունքի չափորոշիչները ներառում են միայն դպրոցների քանակը, նաև՝ մշակվելիք ռեսուրսների քանակը (1 միավոր): Ակնհայտ է, որ միջոցառման բովանդակության նշանակալի մասը մնում է չդիտարկված ու չգնահատված:

5.9. Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում ծրագիր

Հաշվետու ժամանակահատվածում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման ծրագրի շրջանակներում նախատեսված երկու միջոցառումներն էլ ամբողջությամբ կատարվել են (աղյուսակ 5.17): Օգտագործվել է շուրջ 490 մլն դրամ, որից 460 մլն դրամն ուղղվել է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումների ֆինանսավորմանը, մնացածը՝ աուտիզմ և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների բուժման, վերականգնման, կրթության և զբաղվածության ապահովման ծառայությունների ֆինանսավորմանը:

Աղյուսակ 5.17. Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում ծրագիր

#	Միջոցառումը	Միջոցառման տեսակը ⁴²	Տարեկան ճշգրտ. պլան	Կիսամյակի ճշգ. պլան	Փաստ	Կատ. %, տար. պլ. նկ.	Կատ. %, կիս. պլ. նկ.
1	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումներ	Ծ	1280,3	457.6	457.6	35,8	100,0

⁴² Ծ – ծառայությունների մատուցում, Տ – տրանսֆերտների տրամադրում, Գ - Այլ պետական կազմակերպությունների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ:

2	Աուտիզմ և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների բուժման, վերականգնման, կրթության և զբաղվածության ապահովման ծառայություններ	Ծ	75,5	32.1	32.1	42,3	100,0
Ընդամենը, ըստ ծրագրի բոլոր միջոցառումների			1355,8	489.7	489.7	36,1	100,0

Արդյունքի չափորոշիչները

Ծրագրի համար սահմանված արդյունքի չափորոշիչները ամփոփ ներկայացված են աղյուսակ 5.18-ում:

Աղյուսակ 5.18. Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում ծրագրի արդյունքի չափորոշիչները

Արդյունքի չափորոշիչներ		Տարեկան ճշտ. պլան	Կիսամյակի ճշտ. պլան	Կիսամյակի փաստացի	Շեղում
1.	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման օժանդակող միջոցառումներ				
1.1.	Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների թիվ, հատ	15	10	10	0
1.2.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման համար գնահատվող երեխաների թիվ, երեխա	4000	2500	2500	0
1.3.	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ ստացող երեխաների թիվ, երեխա	4300	2700	2700	0
1.4.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար նյութերի մշակում, հրատարակում և ձեռքբերում /անվանաքանակ/	3	3	3	0
2.	Աուտիզմ և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների բուժման, վերականգնման, կրթության և զբաղվածության ապահովման ծառայություններ				
2.1.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի ունեցող երեխաների թիվ, երեխա	65	65	65	0

Այս ծրագրի միջոցառումների համար սահմանված արդյունքի չափորոշիչները համեմատաբար ավելի կոնկրետ են, ունեն հստակություն, պակաս խնդրահարույց են, ի ցույց են դնում միջոցառման և համապատասխան ծախսի բովանդակությունը:

5.10. Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում

Նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ դիտարկվող ժամանակահատվածում ծրագրերի թիվն ավելացել է մեկով՝ ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում ծրագրով: Դրա շրջանակներում նախատեսվում է մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների

հիմնադրում (վերանորոգման աշխատանքների իրականացում), նաև՝ փոքրածավալ ենթակառուցվածքների հարմարեցում հանրակրթական թվով 10 ուսումնական հաստատություններում (վերանորոգման աշխատանքների իրականացում)

Նախատեսված էր առաջին կիսամյակի ընթացքում ներդրումներ կատարել 10 դպրոցներում՝ 56.4 մլն դրամի չափով, սակայն աշխատանքները սահմանված ժամկետներում չեն կատարվել՝ դպրոցների ցանկի և նախագծանախահաշվային փաստաթղթերի վերանայման և որոշման նախագծի ընթացքում գտնվելու պատճառով:

Ամփոփիչ դիտարկումներ.

- I. կրթության բյուջետային ծախսային ծրագրերի միջոցառումների համար սահմանված արդյունքի չափորոշիչները զուտ քանակական բնույթ ունեն, չեն նկարագրում միջոցառումների կենսագործման որակական կողմը, միջոցառման արդյունքը նկարագրում են խիստ սահմանափակ կերպով և մակերեսայնորեն,
- II. դեպքերի մեծ մասում արդյունքի չափորոշիչների և միջոցառման նկարագրության միջև առկա են էական անհամապատասխանություններ,
- III. արդյունքի չափորոշիչները հիմնականում նկարագրում են միջոցառման միջանկյալ կամ տեխնիկական արդյունքը, մինչդեռ վերջնական արդյունքը կամ ազդեցությունը համապատասխան ուղղության վրա մնում է չնկարագրված,
- IV. չի դիտարկվում առաջնային հետազոտությունների, մշտադիտարկման, հարցումների և նմանատիպ այլ եղանակներով արդյունքի չափորոշիչների գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության դուրսբերման հնարավորությունը, ինչն էականորեն սահմանափակում է արդյունավետության չափորոշիչների շրջանակը:

Առաջարկություններ

Հանրակրթության ոլորտի արդյունավետության չափորոշիչների համակարգ

Մեր կողմից մշակվել և առաջարկվում է հանրակրթության ոլորտում արդյունավետության չափորոշիչների համակարգ: Չափորոշիչները ներկայացված են ըստ հետևյալ խմբերի.

1. դպրոցներ,
2. հագեցվածություն,
3. ֆինանսներ,
4. ընդգրկվածություն,
5. ուսուցիչներ,
6. արդյունքներ:

Ստորև ներկայացված են արդյունավետության չափորոշիչները ըստ դիտարկված խմբերի:

1. դպրոցներ

- 1.1. տարրական ընդհանուր կրթության դասարանների սովորողների միջին թիվը, մարդ
- 1.2. հիմնական ընդհանուր կրթության դասարանների սովորողների միջին թիվը, մարդ
- 1.3. միջնակարգ ընդհանուր կրթության դասարանների սովորողների միջին թիվը, մարդ
- 1.4. տարրական ընդհանուր կրթության դասարանների սովորողների միջին նորմատիվային (թիրախային) մակարդակը⁴³ գերազանցող դասարանների տեսակարար կշիռը, %
- 1.5. հիմնական ընդհանուր կրթության դասարանների սովորողների միջին նորմատիվային (թիրախային) մակարդակը գերազանցող դասարանների տեսակարար կշիռը, %
- 1.6. միջնակարգ ընդհանուր կրթության դասարանների սովորողների միջին նորմատիվային (թիրախային) մակարդակը գերազանցող դասարանների տեսակարար կշիռը, %

⁴³ Այս և որոշ այլ արդյունքի չափորոշիչների մասով նպատակահարմար է նախապես դուրս բերել գնահատականների թիրախային միջակայք, որի մեծությունը կարտացույցի գնահատվող երևույթի ցանկալի վիճակի վերաբերյալ մեր պատկերացումները:

- 1.7. տարրական ընդհանուր կրթության դասարանների սովորողների միջին նորմատիվային (թիրախային) մակարդակը գերազանցող դասարաններում սովորողների տեսակարար կշիռը, %
- 1.8. հիմնական ընդհանուր կրթության դասարանների սովորողների միջին նորմատիվային (թիրախային) մակարդակը գերազանցող դասարաններում սովորողների տեսակարար կշիռը, %
- 1.9. միջնակարգ ընդհանուր կրթության դասարանների սովորողների միջին նորմատիվային (թիրախային) մակարդակը գերազանցող դասարաններում սովորողների տեսակարար կշիռը, %
- 1.10. տարրական ընդհանուր կրթության դասարանների սովորողների միջին նորմատիվային (թիրախային) մակարդակը գերազանցող դպրոցների տեսակարար կշիռը, %,
- 1.11. հիմնական ընդհանուր կրթության դասարանների սովորողների միջին նորմատիվային (թիրախային) մակարդակը գերազանցող դպրոցների տեսակարար կշիռը, %
- 1.12. միջնակարգ ընդհանուր կրթության դասարանների սովորողների միջին նորմատիվային (թիրախային) մակարդակը գերազանցող դպրոցների տեսակարար կշիռը, %
- 1.13. թերբեռնված (որոշակի նորմատիվային մակարդակից ցածր ինտենսիվությամբ օգտագործվող) դասասենյակների տեսակարար կշիռը, %
- 1.14. գերբեռնված (որոշակի նորմատիվային մակարդակից բարձր ինտենսիվությամբ օգտագործվող) դասասենյակների տեսակարար կշիռը, %
- 1.15. տարրական ընդհանուր կրթության դասարանում սովորողի կողմից դպրոց հասնելու համար հաղթահարվող միջին հեռավորությունը, կմ,
- 1.16. հիմնական ընդհանուր կրթության դասարանում սովորողի կողմից դպրոց հասնելու համար հաղթահարվող միջին հեռավորությունը, կմ,
- 1.17. միջնակարգ ընդհանուր կրթության դասարանում սովորողի կողմից դպրոց հասնելու համար հաղթահարվող միջին հեռավորությունը, կմ,
- 1.18. դպրոց հասնելու համար 3կմ-ից ավելի հեռավորություն հաղթահարող, տարրական ընդհանուր կրթության դասարանում սովորողների տեսակարար կշիռը, %,

- 1.19. դպրոց հասնելու համար 3կմ-ից ավելի հեռավորություն հաղթահարող, հիմնական ընդհանուր կրթության դասարանում սովորողների տեսակարար կշիռը, %,
- 1.20. դպրոց հասնելու համար 3կմ-ից ավելի հեռավորություն հաղթահարող, միջնակարգ ընդհանուր կրթության դասարանում սովորողների տեսակարար կշիռը, %,

2. հագեցվածություն.

- 2.1. դպրոցների հագեցվածությունը համակարգիչներով (համակարգիչների թվաքանակը 100 սովորողի հաշվով),
- 2.2. էլեկտրոնային գրատախտակներով հագեցած դասարանների թիվը,
- 2.3. արդիական լաբորատորիաներով հագեցած դպրոցների թիվը,
- 2.4. հիմնանորոգված դպրոցների թիվը (ընթացիկ տարում),
- 2.5. հիմնանորոգման կարիք ունեցող դպրոցների թիվը,
- 2.6. ընթացիկ նորոգման կարիք ունեցող դպրոցների թիվը,
- 2.7. ընթացիկ տարում ջրամատակարարման ցանցին միացած դպրոցների թիվը,
- 2.8. ընթացիկ տարում կոյուղացմամբ ապահովված դպրոցների թիվը,
- 2.9. ընթացիկ տարում կենտրոնացված ջեռուցման համակարգին միացած դպրոցների թիվը,
- 2.10. ընթացիկ տարում լոկալ ջեռուցման համակարգով հագեցած դպրոցների թիվը:

3. ֆինանսներ.

- 3.1. դպրոցների ծախսը մեկ աշակերտի հաշվով,
- 3.2. մեկ աշակերտի հաշվով ընդհանուր ծախսի առավելագույն սահմանային նորմատիվը գերազանցող դպրոցների թիվը,
- 3.3. աշխատավարձի գծով ծախսերի մեծությունը մեկ աշակերտի հաշվով,
- 3.4. վարչական և սպասարկող անձնակազմի աշխատանքի վարձատրության ծախսերը մեկ աշակերտի հաշվով,
- 3.5. մեկ աշակերտի հաշվով վարչական և սպասարկող անձնակազմի աշխատանքի վարձատրության ծախսերի առավելագույն սահմանային նորմատիվը գերազանցող դպրոցների թիվը,
- 3.6. դպրոցի շենքի պահպանման ծախսերը մեկ աշակերտի հաշվով,
- 3.7. մեկ աշակերտի հաշվով դպրոցի շենքի պահպանման ծախսերի առավելագույն սահմանային նորմատիվը գերազանցող դպրոցների թիվը,

- 3.8. մեկ աշակերտի հաշվով դպրոցի շենքի պահպանման ծախսերի նվազագույն սահմանային նորմատիվը ցածր ծախսեր կատարող դպրոցների թիվը
- 3.9. վարչական և սպասարկող անձնակազմի՝ ուսուցիչների թվաքանակի նկատմամբ հարաբերակցության միջին մակարդակը
- 3.10. վարչական և սպասարկող անձնակազմ/ուսուցիչների թվաքանակ հարաբերակցության նվազագույն սահմանային մակարդակից ցածր դպրոցների թիվը,
- 3.11. վարչական և սպասարկող անձնակազմ/ուսուցիչների թվաքանակ հարաբերակցության առավելագույն սահմանային մակարդակից բարձր դպրոցների թիվը,
- 3.12. ուսուցչական անձնակազմի միջին աշխատավարձը:
- 3.13. որոշակի նորմատիվային մակարդակից ցածր միջին աշխատավարձ ստացող ուսուցիչների տեսակարար կշիռը, %
- 3.14. որոշակի նորմատիվային մակարդակից ցածր ուսուցչական անձնակազմի միջին աշխատավարձով դպրոցների թիվը:

4. ընդգրկվածություն.

- 4.1. աշակերտների ընդգրկվածությունը տարրական ընդհանուր կրթության դասարաններում (% համապատասխան տարիքի երեխաների թվի նկատմամբ),
- 4.2. աշակերտների ընդգրկվածությունը հիմնական ընդհանուր կրթության դասարաններում (% համապատասխան տարիքի երեխաների թվի նկատմամբ),
- 4.3. աշակերտների ընդգրկվածությունը միջնակարգ ընդհանուր կրթության դասարաններում (% համապատասխան տարիքի երեխաների թվի նկատմամբ),
- 4.4. արտադպրոցական դաստիարակության ծրագրերում ընդգրկված տարրական ընդհանուր կրթության դասարաններում սովորողների տեսակարար կշիռը, %
- 4.5. արտադպրոցական դաստիարակության ծրագրերում ընդգրկված հիմնական ընդհանուր կրթության դասարաններում սովորողների տեսակարար կշիռը, %
- 4.6. արտադպրոցական դաստիարակության ծրագրերում ընդգրկված միջնակարգ ընդհանուր կրթության դասարաններում սովորողների տեսակարար կշիռը, %

- 4.7. տարրական ընդհանուր կրթության դասարանում սովորողների՝ ուսումնական պարապմունքներին փաստացի մասնակցության⁴⁴ միջին ժամաքանակը, ժամ,
- 4.8. հիմնական ընդհանուր կրթության դասարանում սովորողների՝ ուսումնական պարապմունքներին փաստացի մասնակցության միջին ժամաքանակը, ժամ,
- 4.9. միջնակարգ ընդհանուր կրթության դասարանում սովորողների՝ ուսումնական պարապմունքներին փաստացի մասնակցության միջին ժամաքանակը, ժամ
- 4.10. ուսումնառության հատուկ կարիք ունեցող երեխաների թիվը, որոնք ստանում են կրթական ծառայություն,
- 4.11. ուսումնառության հատուկ կարիք ունեցող երեխաների դասավանդման համար վերապատրաստված ուսուցիչների թիվը,
- 4.12. ուսումնառության հատուկ կարիք ունեցող երեխաների համար ուսումնառության պատշաճ պահանջներ ապահովելու ինստիտուցիոնալ կարողություններ ունեցող դպրոցների թիվը,
- 4.13. բացառիկ ընդունակություններ ունեցող աշակերտների թիվը,
- 4.14. բացառիկ ընդունակություններ ունեցող աշակերտների հետ աշխատելու հմտություն ունեցող վերապատրաստված ուսուցիչների թիվը:

5. ուսուցիչներ.

- 5.1. տարրական ընդհանուր կրթության դասարաններում ընթացիկ ուսումնական տարում առաջին անգամ դասավանդող ուսուցիչների տեսակարար կշիռը (թվաքանակի հարաբերակցությունը ուսուցիչների ընդհանուր թվաքանակի նկատմամբ), %,
- 5.2. հիմնական ընդհանուր կրթության դասարաններում ընթացիկ ուսումնական տարում առաջին անգամ դասավանդող ուսուցիչների տեսակարար կշիռը (թվաքանակի հարաբերակցությունը ուսուցիչների ընդհանուր թվաքանակի նկատմամբ), %,
- 5.3. միջնակարգ ընդհանուր կրթության դասարաններում ընթացիկ ուսումնական տարում առաջին անգամ դասավանդող ուսուցիչների տեսակարար կշիռը (թվաքանակի հարաբերակցությունը ուսուցիչների ընդհանուր թվաքանակի նկատմամբ), %,
- 5.4. տարրական ընդհանուր կրթության դասարաններում դասավանդող ուսուցիչների սեռային սեռային անհավասարության գործակիցը,

⁴⁴ Այսինքն՝ ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակից հանած անհարգելի բացակայությունների ժամաքանակը:

- 5.5. հիմնական ընդհանուր կրթության դասարաններում դասավանդող ուսուցիչների սեռային անհավասարության գործակիցը,
- 5.6. միջնակարգ ընդհանուր կրթության դասարաններում դասավանդող ուսուցիչների սեռային անհավասարության գործակիցը,
- 5.7. գիտական աստիճան ունեցող ուսուցիչների տեսակարար կշիռը,
- 5.8. գիտական կոչում ունեցող ուսուցիչների տեսակարար կշիռը,
- 5.9. ՀՀ-ում մասնագիտական վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը,
- 5.10. արտասահմանում մասնագիտական վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը,
- 5.11. տարրական ընդհանուր կրթության դասարաններում աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը,
- 5.12. հիմնական ընդհանուր կրթության դասարաններում աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը,
- 5.13. միջնակարգ ընդհանուր կրթության դասարաններում աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը,
- 5.14. տարրական ընդհանուր կրթության դասարաններում աշակերտ/ուսուցիչ հարաբերակցության սահմանային մակարդակը գերազանցող դպրոցների թիվը,
- 5.15. հիմնական ընդհանուր կրթության դասարաններում աշակերտ/ուսուցիչ հարաբերակցության սահմանային մակարդակը գերազանցող դպրոցների թիվը,
- 5.16. միջնակարգ ընդհանուր կրթության դասարաններում աշակերտ/ուսուցիչ հարաբերակցության սահմանային մակարդակը գերազանցող դպրոցների թիվը,
- 5.17. ուսուցչական կազմի թվաքանակի հարաբերակցությունը վարչական և օժանդակ անձնակազմի թվաքանակի նկատմամբ,
- 5.18. վարչական և օժանդակ անձնակազմի թվաքանակի նկատմամբ ուսուցչական կազմի թվաքանակի հարաբերակցության սահմանային մակարդակից ցածր մակարդակ արձանագրած տարրական դպրոցների թիվը,
- 5.19. վարչական և օժանդակ անձնակազմի թվաքանակի նկատմամբ ուսուցչական կազմի թվաքանակի հարաբերակցության սահմանային մակարդակից ցածր մակարդակ արձանագրած հիմնական դպրոցների թիվը,
- 5.20. վարչական և օժանդակ անձնակազմի թվաքանակի նկատմամբ ուսուցչական կազմի թվաքանակի հարաբերակցության սահմանային մակարդակից ցածր մակարդակ արձանագրած ավագ դպրոցների թիվը,

- 5.21. վարչական և օժանդակ անձնակազմի թվաքանակի նկատմամբ ուսուցչական կազմի թվաքանակի հարաբերակցության սահմանային մակարդակից ցածր մակարդակ արձանագրած միջնակարգ դպրոցների թիվը,
- 5.22. մեկ դրույքը գերազանցող ծանրաբեռնվածությամբ աշխատող ուսուցիչների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %
- 5.23. մինչև կես դրույք ծանրաբեռնվածությամբ աշխատող ուսուցիչների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %
- 5.24. ուսուցիչների՝ մինչև 0.5 դրույք միջին բեռնվածություն ունեցող տարրական դպրոցների թիվը,
- 5.25. ուսուցիչների՝ մինչև 0.5 դրույք միջին բեռնվածություն ունեցող հիմնական դպրոցների թիվը,
- 5.26. ուսուցիչների՝ մինչև 0.5 դրույք միջին բեռնվածություն ունեցող ավագ դպրոցների թիվը,
- 5.27. ուսուցիչների՝ մինչև 0.5 դրույք միջին բեռնվածություն ունեցող միջնակարգ դպրոցների թիվը,
- 5.28. ուսուցիչների՝ 0.51-0.75 դրույք միջին բեռնվածություն ունեցող տարրական դպրոցների թիվը,
- 5.29. ուսուցիչների՝ մինչև 0.51-0.75 դրույք միջին բեռնվածություն ունեցող հիմնական դպրոցների թիվը,
- 5.30. ուսուցիչների՝ մինչև 0.51-0.75 դրույք միջին բեռնվածություն ունեցող ավագ դպրոցների թիվը,
- 5.31. ուսուցիչների՝ մինչև 0.51-0.75 դրույք միջին բեռնվածություն ունեցող միջնակարգ դպրոցների թիվը,
- 5.32. կրթական գործընթացի որակից հիմնական շահառուների բավարարվածության գնահատման համակարգ ներդրած դպրոցների թիվը
- 5.33. կրթական գործընթացի որակով բավարարվածության՝ աշակերտների շրջանում անցկացված հարցումների արդյունքով ստացված միջին գնահատականը, բալ
- 5.34. կրթական գործընթացի որակով բավարարվածության՝ ծնողների շրջանում անցկացված հարցումների արդյունքով ստացված միջին գնահատականը, բալ
- 5.35. կրթական գործընթացի որակով բավարարվածության՝ աշակերտների շրջանում անցկացված հարցումներով առավելագույն գնահատականի 70%-ը գերազանցող միջին արդյունք ապահոված դպրոցների թիվը,

- 5.36. կրթական գործընթացի որակով բավարարվածության՝ ծնողների շրջանում անցկացված հարցումներով առավելագույն գնահատականի 70%-ը գերազանցող միջին արդյունք ապահոված դպրոցների թիվը,
- 5.37. կրթական գործընթացի որակով բավարարվածության՝ աշակերտների շրջանում անցկացված հարցումներով առավելագույն գնահատականի 30%-ը չգերազանցող միջին արդյունք ապահոված դպրոցների թիվը,
- 5.38. կրթական գործընթացի որակով բավարարվածության՝ ծնողների շրջանում անցկացված հարցումներով առավելագույն գնահատականի 30%-ը չգերազանցող միջին արդյունք ապահոված դպրոցների թիվը,
- 5.39. աշակերտների շրջանում անցկացված հարցման արդյունքներով ուսուցիչների որակավորման և մասնագիտական կարողություններին տրված միջին գնահատականը, բալ
- 5.40. աշակերտների շրջանում անցկացված հարցումների արդյունքներով՝ որակավորման և մասնագիտական կարողությունների միջին գնահատականի 50%-ից ցածր գնահատական ստացած ուսուցիչների տեսակարար կշիռը, %
- 5.41. աշակերտների շրջանում անցկացված հարցումների արդյունքներով՝ որակավորման և մասնագիտական կարողությունների միջին մակարդակի 50%-ից ցածր գնահատական ստացած ուսուցիչների բարձր տեսակարար կշռով (օրինակ՝ 60 տոկոսից բարձր) դպրոցների թիվը:

6. արդյունքներ

- 6.1. գիտելիքի ստուգման միասնական (ներհայաստանյան) ստուգատեսքնություններից տարրական ընդհանուր կրթության դասարաններում սովորողների ստացած միջին գնահատականը, միավոր,
- 6.2. գիտելիքի ստուգման միասնական (ներհայաստանյան) ստուգատեսքնություններից հիմնական ընդհանուր կրթության դասարաններում սովորողների ստացած միջին գնահատականը, միավոր,
- 6.3. գիտելիքի ստուգման միասնական (ներհայաստանյան) ստուգատեսքնություններից միջնակարգ ընդհանուր կրթության դասարաններում սովորողների ստացած միջին գնահատականը, միավոր,
- 6.4. TIMSS ստուգատեսի շրջանակներում աշակերտների ստացած միջին գնահատականը՝ ըստ առարկաների
- 6.5. TIMSS ստուգատեսի շրջանակներում միջին հանրապետական գնահատականից 50 տոկոսով ցածր միջին գնահատական ապահոված դպրոցների թիվը

- 6.6. TIMSS ստուգատեսի շրջանակներում միջին հանրապետական գնահատականից 50 տոկոսով բարձր միջին գնահատական ապահոված դպրոցների թիվը
- 6.7. դպրոցում լրացուցիչ վճարովի պարապմունքների հաճախող տարրական ընդհանուր կրթության դասարաններում սովորողների տեսակարար կշիռը, %
- 6.8. դպրոցում լրացուցիչ վճարովի պարապմունքների հաճախող հիմնական ընդհանուր կրթության դասարաններում սովորողների տեսակարար կշիռը, %
- 6.9. դպրոցում լրացուցիչ վճարովի պարապմունքների հաճախող միջնակարգ ընդհանուր կրթության դասարաններում սովորողների տեսակարար կշիռը, %
- 6.10. բուհերի ընդունելության միասնական քննությունների արդյունքներով մաթեմատիկա առարկայից միջին հանրապետական գնահատականից 25%-ով բարձր միջին արդյունք արձանագրած դպրոցների թիվը,
- 6.11. բուհերի ընդունելության միասնական քննությունների արդյունքներով մաթեմատիկա առարկայից միջին հանրապետական գնահատականից 25%-ով ցածր միջին արդյունք արձանագրած դպրոցների թիվը,
- 6.12. բուհերի ընդունելության միասնական քննությունների արդյունքներով հայոց լեզու առարկայից միջին հանրապետական գնահատականից 25%-ով բարձր միջին արդյունք արձանագրած դպրոցների թիվը,
- 6.13. բուհերի ընդունելության միասնական քննությունների արդյունքներով հայոց լեզու առարկայից միջին հանրապետական գնահատականից 25%-ով ցածր միջին արդյունք արձանագրած դպրոցների թիվը,
- 6.14. միջազգային օլիմպիադաներում մրցանակային տեղեր զբաղեցրած աշակերտների թիվը,
- 6.15. միջազգային օլիմպիադաներում մրցանակակիրներ տված դպրոցների թիվը: